ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Երևան 1988 թ. փետրվար

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(79-րդ տարի) Թիվ-2 (1696) Փետրվար 2025

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Նոր բաժանարարի առջև (էջ 1-2)

2- Իրավաքաղաքական

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության խարտիան. քայլ առաջ՝ անպատասխան հարցերով (էջ 3-5)

3- Դաշնակցական բեմ

Արտաշես Շահբազյան
Իսկ քարավանը կշարունակի իր ճանապարհը (էջ 6-9)

Կարէն Խանլարեան
Ռուբէն Տէր-Մինասեանի անուան շուրջ հիւսուած հեքիաթները (էջ 10-23)

4- Գաղափարական

Պարգեւ Աւագեան
Ազգը ժամանակ է եւ տարածութիւն (էջ 24-26)

Մովսէս Ծիրանի
Հայոց միասնականութեան տօն Օգոստոս 11, «Թարգմանչաց տօներ» կամ Մայիս 28... Ինչո՞ւ եւ ի՞նչպէս (էջ 27-31)

5- Պատմության լուսարձակ

Հայկազուն Ալվրցյան
Համշենահայության ինքնապաշտպանական մարտերը 1915-1923 թթ. (մաս երրորդ). (էջ 32-37)

Ավետիս Հարությունյան
Վանի նահանգի հայությունը Մահմուդ-Խայրի, Ֆերիտ և Յավեր կուսակալների պաշտոնավարման շրջանում 1908-1909 թթ. (էջ 38-43)

6- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Մէ՛կ – մէ՛կ – մէ՛կ (էջ 44)

Նոր բաժանարարի առջև

2025 թ. հունվարի 24-ին շվեյցարահայ համայնքի հետ հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանն ասում է. «Մենք Հայոց ցեղասպանության պատմությանն էլ պետք է վերադառնանք, պետք է հասկանանք, լավ՝ ինչ է տեղի ունեցել և ինչու է տեղի ունեցել, և ինչպես ենք մենք դա ընկալել, ում միջոցով ենք ընկալել, ոնց է, որ 1939 թվին Հայոց ցեղասպանության օրակարգ չի եղել, և ոնց է որ 1950-ին Հայոց ցեղասպանության օրակարգ հայտնվել է: Սա մենք պե՞տք է հասկանանք, թե՞ չպետք է հասկանանք»: Խոսքի մյուս հատվածների հետ կապելով ակնհայտ է դառնում Փաշինյանի ակնարկը՝ օտարն է այս հարցը մեզ պարտադրել իր քաղաքական հաշվարկներից ելնելով: Որ Նիկոլ Փաշինյանը մեծ մանիպուլյատոր է, ոչ մեկի համար այլևս գաղտնիք չէ, բայց շարունակում է հայ հասարակության զարմանքը հարուցել այն, թե այս մարդը որքան է սրբապիղծ և ինչպես կարող է խաղ անել ազգի ամենանվիրական զգացումների ու արժեքների հետ: Իհարկե, այս անարգանքին հետևեց Սփյուռքի ու Հայաստանի լայն արձագանքը և կարճ ժամանակ անց խոսքերի հեղինակը փորձեց արդարանալ, որ բոլորովին այն չէր նկատի ունեցել, ինչ որ մարդիկ հասկացել էին:

Փաշինյանի պարզունակ և ցնորամիտ թվացող մտքերը իրականում խորքային իմաստ ունեն, և տարբեր ժամանակներում ասվածը տրամաբանական մեկ շղթայի մեջ դիտարկելով՝ ակնհայտ է դառնում դրանց քաղաքական գաղափարական նպատակադրվածությունը: Կոնկրետ պարագայում Փաշինյանի ակնարկն ուղղված է Ռուսաստանի կողմը, որն, ըստ իրեն, Ցեղասպանության օրակարգը փաթաթել է հայ ժողովրդի վզին՝ Թուրքիայի նկատմամբ որդեգրած քաղաքականությունից ելնելով: Պետք է խոստովանենք, որ մոլի հակառուս Նիկոլին հաջողվեց անցնող տարիների ընթացքում հայ ժողովրդի մի զգալի հատվածի դարձնելու հակառուս՝ Ռուսաստանին մեղադրելով մեր բոլոր դժբախտությունների՝ այդ թվում և հենց Նիկոլի ձախողումների ու դավաճանությունների համար:

2024 թվականի մարտի 12-ի ասուլիսում նա ասում է, թե Ղարաբաղի հարց վաղուց չի եղել, այն լուծված է եղել 2013, 2016 թվականներին, Ղարաբաղն առիթ է եղել, որպեսզի լուծեն Հայաստանի հարցը, և ով այդ հարցում շահագրգռված է եղել, նա շահագրգռված է եղել նաև, որպեսզի պատերազմ լինի, Արցախի ժողովուրդն արտագաղթի Հայաստան, որովհետև այստեղ իրենց ռեուրսները բավարար չէին հեղաշրջում անելու համար: Հետևաբար, արցախցիներն այստեղ անհրաժեշտ են եղել, որպես հավելյալ ռեսուրս Նիկոլ Փաշինյանին իշխանությունից հեռացնելու նպատակով: Ահա այսպես, թե չէ ի՞նչ Արցախ, ի՞նչ արցախահայության ճակատագիր, Նիկոլն ուզում էր ի վերջո անկախացնել Հայաստանը, իսկ Ռուսաստանը

ձգտում էր նոր հեղաշրջմամբ վերջնականապես մեր երկիրն իրեն ենթարկել: Մենք խոսքն ուղղակի չենք մեջ բերել, սակայն իմաստը ստույգ է, և հետաքրքրվողը կարող է թարմացնել հիշողությունը՝ դիտելով տեսանյութը: Իհարկե, կրկին մեղավորը ռուսներն են, իսկ պատերազմ հայտարարողի, ցեղասպանական գործողություններին մասնակից և աջակից Թուրքիայի, Իսրայելի Պակիստանի մասին ոչ մի խոսք, և ոչ միայն այս անգամ, այլև առհասարակ:

Նույն քաղաքական նպատակին է ծառայում նաև վերջին շրջանում Փաշինյանի հրամցրած այն միտքը, թե 44-օրյա պարտության միջով անցնելով՝ մենք ձեռք ենք բերել անկախ ինքնիշխան պետություն ունենալու հնարավորություն: Ոչ ոք թող չմտածի, թե այս աշխարհացունց մտքերն այժմ են հայտնվել Հայաստանի ղեկավարի գլխում: Նա դրանցով ներարկված է եղել իշխանության գալուց շատ ավելի վաղ, պայքարել է դրանց համար հրապարակներում ու խորհրդարանում և դրանք կյանքի կոչելու հնարավորություն է ստացել իշխանության գալով:

Հիշենք նաև խորհրդարանում հնչեցրած այն միտքը, թե՝ պետք է 2018-ին ասեի, որ ԼՂ-ն պետք է լինի Ադրբեջանի կազմում, իմ ձախողումն է, որ չեմ ասել: Նիկոլ Փաշինյանի գլխում ամրացած տարիների համոզումն է եղել, թե Արցախն ընդամենը խայծ է, որով ռուսները մեզ պահում են իրենցից կպած, և եթե ազատվենք դրանից, ազատորեն կարող ենք պոկվել նրանցից և 180 աստիճան փոխել պետության կողմնորոշումը:

Այլ առիթներով Փաշինյանը քննադատում է 200 տարվա այդ կողմնորոշումը՝ համարելով այն սխալ, կարծես եթե դրա փոխարեն հավատարմություն հայտնեինք թուրքերին, ոչ ցեղասպանություն կլիներ, և ոչ էլ այսպիսի պատմական ճակատագիր: Իսկ մտա-

ծե՞լ է Փաշինյանը, թե ինչու արևմտահայության հետ պատահեց այն, ինչ որ պատահեց, երբ հայության այդ հատվածը հավատարմորեն ծառայում էր իր պետությանը, ծաղկեցնում էր այն տնտեսապես, ֆինանսապես, մշակույթով և այլ կերպ: Ինչու ցեղասպանություն կազմակերպվեց այն ժամանակ, երբ, ըստ էության, ողջ մարտունակ տղամարդ բնակչությանը, Առաջին աշխարհամարտի ժամանակ արևմտահայությունն ուղարկեց թուրքական ճակատ: Փաշինյանական տրամաբանությունը հակառակ գաղափարախոսությամբ է մշակված, և շատ հստակորեն ծրագրավորված է Հայաստանը Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների դաշտից դուրս բերելու և մտցնելու ադրբեջանաթուրքական ազդեցության շրջագիծ: Հենց դրան էլ հարմարեցնում է Հայաստանի ղեկավարը երկրի ոչ միայն քաղաքականությունը, այլև պատմությունը, պատմական հիշողությունը, արժեքային համակարգը: Գաղափարական խնդիրն այստեղ դառնում է ամենակարևորը, որովհետև, եթե ամերիկացի Բոլթոնի ակնարկած պատմաքաղաքական մտակաղապարի փոփոխությունը չլինի, անհնար է հայ ժողովրդին արևմտյան փարոսով տանելը դեպի թուրքական հպատակություն: Այս նպատակին է ծառայում Նիկոլի մոգոնած (կամ ընդունած) իրական Հայաստանի, այսպես կոչված, գաղափարախոսությունը: Եվ առանց նպատակը ծամծմելու «հայկական ժողովրդավարության հայրը», բացահայտ ու հանգիստ արտաբերում, է թե. «Մեր պետական-հանրային կյանքի բոլոր ոլորտներում այս գաղափարախոսությունը պետք է որդեգրվի»: Այլ խոսքով, նպատակն է բոլշևիկներից հետո Հայաստանը դարձնել երկրորդ կուսակցապետությունը՝ պարտոկրատիան, հաստատելով իշխող ուժի գաղափարական մենաշնորհը: Հայրենիք-պետության տվյալ մեկնաբանությունն այլ բան չի նշանակում, քան ներկայիս Հայաստանից զատել նրա պատմությունն ու պատմական հարցերը, զատել Սփյուռքն ու այն ամենը, ինչը չի տեղավորվում ՀՀ ներկայիս սահմանների մեջ, հրաժարվել պետության ազգային բովանդակությունից և դարձնել այն մի տարածք, ուր հայ մարդը կունենա միայն ուտելու և բազմանալու իրավունք: Սույն գաղափարախոսության հիմքում էլ «որտեղ հաց՝ այնտեղ կաց» սկզբունքն է, որի դրական իմաստը, փաստորեն, ոչ ոք չէր հասկացել մինչև Նիկոլ Փաշինյան:

Փաշինյանը Հայաստանն իր ծրագրած (իրեն թելադրված) հունի մեջ կարող է դնել, երբ կհաղթի նոր ընտրություններում և նոր մանդատը ներկայացնելով, որպես իր ծրագրի նկատմամբ վստահության քվե՝ կիրականացնի այն: Իսկ աշխարհաքաղաքական իրավիճակի արմատական փոփոխությունն աշխարհի վրա փլուզում է գլոբալիստական, վերազգային գաղափարախոսությունը և այն դավանող ուժերին, որոնք և սատարել են Հայաստանի իշխանությանը: Ամերիկյան թիկունքի կորուստը մի կողմից որոշակիորեն որբացրեց հայ գլոբալիստներին, իսկ մյուս կողմից ստիպեց նրանց, որ առավել ամուր փարվեն նրանց, ում իրենք դեռ պետք են: Իսկ պետք են համապատասխան ծրագրերը կենսագործելու համար, այլապես գլոբալիստական Եվրոպան այսօր ինքն է պառակտման շեմին: Եվրամիությանը միանալու Հայաստանի խորհրդարանի որոշման կարիքը բոլորովին չկար, նույնիսկ այդ ճանապարհով գնալու համար: Բայց նման որոշումն անհրաժեշտ էր հովանավորներին վստահեցնելու նպատակով, որ Հայաստանի իշխանությունն անշեղորեն շարունակում է Ռուսաստանից կտրվելու և նոր ուղիով գնալու իր կուրսը: Կպահպանվի՞ արդյոք Եվրամիությունը և պահպանվելու դեպքում արդյո՞ք իր գործող էլիտաների հետ չի փոխվելու գաղափարական արժեհամակարգով: Ըստ էության, հռչակված այս նոր քաղաքականության «հայ հեղկոմի» համար հնարավոր փոփոխությունը շատ էլ էական չէ, որովհետև նրա հովանավորներն ու Եվրամիությունը միշտ չէ, որ նույնանում են: Մյուս կողմից՝ այս դեռ փայլփլացող խայծը հարկավոր է գալիք ընտրություններում ժողովրդին իր ետևից տանելու համար: Ռուսաստանից ավելի ու ավելի հստակորեն զգուշացնում են, որ Հայաստանը կարող է կորցնել այն ամենը, ինչ որ ստանում է այս դաշինքից, որը նշանակում է փոխադարձ առևտուր, գազ, էլեկտրաէներգիա, ամենամյա կայուն տրանսֆերտներ և այլն: Միևնույն ժամանակ այսօրվա վիճակով ոչ մի խոստում չկա, որ այդ կորցրածից որևէ բան Արևմուտքը պատրաստ է լրացնել: Ինչո՞ւ է Հայաստանի իշխանությունը շտապում կտրել այն ճյուղը, որին նստած է, երբ կողքին այլ ճյուղ չկա, որից կարող է կառչել: Գուցե նա չի՞ կարող այլ բան անել, որոշակի «ծանրակշիռ փաստարկների» առկայությամբ: Եվ գուցե Հայաստանի կորուստների հաշվին այս իշխանությունը կստանա՞ երաշխիք մնալու իր աթոռին: Գուցե կա ա՞յլ բացատրություն: Իշխանությունն այս օրերին կատաղորեն հակադարձում է Արցախի, արցախցիների դատի, անգամ Բաքվում հաշվեհարդարի ենթարկվող հայ ռազմաքաղաքական էլիտայի օգտին ձայն բարձրացնողներին: Իշխանությունը, թքելով օրինականության վրա, պատրաստվում է տեղական ընտրություններում ամեն ճանապարհով հաղթանակ ապահովել իր թիմակիցների համար: Այս փաստերը ևս նույն սցենարին են մաս կազմում՝ արտաքին աջակցությամբ և ներքին լծակներով համապետական առաջիկա ընտրություններում ապահովել սեփական վերարտադրությունը: Ինքնապահպանման սրված բնազդի թելադրանքով ամեն ինչ սկսում է դրսևորվել բաց և կոպիտ ձևով:

Այնինչ, հանրային դաշտում ինչ որ մարդիկ սահմանել են նոր բաժանարար, ըստ հետևյալ հարցադրման՝ հա՞յ ես, թե՞ Նիկոլական: Ներքին բաժանարարները միշտ էլ վտանգավոր են, բայց և ճիշտ է, որ գնալով իրարից օտարվում են հայ և նիկոլ երևույթները: Մեկի հաղթանակը կլինի մյուսի անկումը, իսկ տարանջատումն անխուսափելի է: :

ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության խարտիան. քայլ առաջ՝ անպատասխան հարցերով

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

2025 թ. հունվարի 14-ին ԱՄՆ հեռացող պետքարտուղար Էնթոնի Բլինկենը և Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը ստորագրեցին ԱՄՆ-Հայաստան ռազմավարական գործընկերության խարտիան[1]: Սա, անկասկած, երկկողմ հարաբերություններում առաջընթաց քայլ է, կողմերն իրենց ռազմավարական երկխոսության մակարդակը բարձրացնում են նոր՝ ռազմավարական գործընկերության մակարդակի: Դեռևս 2022 թ. մայիսի 2-ին ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը Վաշինգտոնում հյուրընկալել էր Հայաստանի արտաքին գործերի նախարարին ԱՄՆ-Հայաստան ռազմավարական երկխոսության մեկնարկը տալու նպատակով: Պատվիրակությունները ֆիքսել էին երկկողմ կապերի կարգավիճակը՝ դրանց տալով ռազմավարական երկխոսության ստատուս[2]: Արդեն 2024 թ. հունիսի 11-ին, երկկողմ հանդիպման ընթացքում, Հայաստանն ու Միացյալ Նահանգները քննարկեցին երկկողմ հարաբերությունների ամրապնդման առաջընթացը և նախանշեցին գալիք տարում կապերի խորացման տեսլականը, որը կձևակերպվի փոխըմբռնման հուշագրով, որպեսզի երկկողմ երկխոսության կարգավիճակը բարձրացվի՝ ռազմավարական գործընկերության կարգավիճակի[3]: Մեծ հաշվով Բայդենի վարչակազմի մոտեցումն այն էր, որ Հայաստանի հետ իր հարաբերություններն ու ակտիվ շփումները ֆորմալիզացվեն՝ Երևանին ռազմավարական գործընկերոջ կարգավիճակի տրամադրմամբ: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ, անկախ ԱՄՆ-ում նոյեմբերին կայացած ընտրությունների արդյունքներից, Բայդենի վարչակազմը մինչև իր նախագահության շրջանի ավարտը նախատեսում էր Հայաստանի հետ հարաբերությունների այսպիսի մակարդակ ֆիքսել՝ անկախ նրանից, Բայդենը կշարունակեր պաշտոնավարե՞լ, թե՞ դեմոկրատների հիմնական թեկնածուն կդառնար Հարիսը:

Ցանկացած պարագայում, համարյա միանշանակ կարելի է պնդել, որ հեռացող Բայդենի վարչակազմը Թրամփի նոր եկող վարչակազմի հետ համաձայնեցրել է խարտիայի ստորագրումը՝ հետագա հնարավոր անախորժություններից խուսափելու նպատակով: Հենց նման հարցերի կարգավորմամբ է զբաղվում անցումային թիմը՝ յուրաքանչյուր իշխանության փոխանցման (transit of power) ընթացքում: Վերջիվերջո, այս փաստաթուղթը հայ-ամերիկյան միջկառավարական փաստաթուղթ է, այլ ոչ թե փաստաթուղթ՝ Բայդենի վարչակազմի և Հայաստանի միջև:

ARMENIAN CENTER FOR AMERICAN STUDIES

Իսկ ի՞նչ է ընդհանրապես նշանակում ռազմավարական գործընկեր, և ի՞նչ է այն իրենից ենթադրում: Նախ, կարևոր է տարբերակել ռազմավարական դաշնակցին և ռազմավարական գործընկերոջը: Հայաստանն ու ԱՄՆ-ը ռազմավարական դաշնակիցներ չեն, սույն փաստաթղթով Հայաստանին շնորհված կարգավիճակը պետք է դիտարկվի՝ այս հանգամանքը հաշվի առնելով: ԱՄՆ ռազմավարական դաշնակիցներն են ՆԱՏՕ-ի անդամ պետությունները, իսկ Հայաստանը, բնականաբար, ՆԱՏՕ-ի անդամ չէ, և չունի էլ նման հավակնություն միանալու այս դաշինքին: Սրանից զատ ԱՄՆ-ն ունի ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսացող գլխավոր դաշնակցի կարգավիճակ հասկացությունը, որի մեջ ներառված են ԱՄՆ դաշնակից այն պետությունները, որոնք չեն մտնում Հյուսիսատլանտյան դաշինքի մեջ: Այդ պետությունները 19-ն են՝ Արգենտինա, Ավստրալիա, Բահրեյն, Բրազիլիա, Կոլումբիա, Եգիպտոս, Իսրայել, Ճապոնիա, Հորդանան, Քենիա, Քուվեյթ, Մարոկկո, Նոր Զելանդիա, Պակիստան, Ֆիլիպիններ, Կատար, Հարավային Կորեա, Թաիլանդ և Թունիս[4]:

Ինչ վերաբերում է ռազմավարական գործընկերոջ կարգավիճակին, ապա կարևոր է նշել, որ ԱՄՆ-ն 2009 թ. Վրաստանի, իսկ 2021 թ. Ուկրաինայի հետ արդեն իսկ ստորագրել էր նման խարտիաներ՝ տրամադրելով նրանց ռազմավարական գործընկերոջ կարգավիճակ:

Պետք է նաև հասկանալ, որ այս կարգավիճակը ստանալու համար պետությունները շատ հստակ աշխատանք ունեն անելու, և նման կարգավիճակ չի շնորհվում մեկ կամ նույնիսկ տասը տարվա ընթացքում: Խնդիրն այն է, որ երկու պետությունների միջև պետք է առկա լինի համապատասխան

Արարատ Միրզոյանը և Էնթոնի Բլինքենը ստորագրում են հայ-ամերիկյան ռազմավարական գործընկերության խարտիան

իրավապայմանագրային բազա, որն էլ հիմնասյունն է նման խարտիայի կնքման համար: Ռազմավարական գործընկերության խարտիան, բնականաբար, Հայաստանին չի շնորհում ռազմավարական դաշնակցի կարգավիճակ, հետևաբար չի տրամադրում անվտանգության ինչ-ինչ երաշխիքներ, չի ենթադրում ռազմական օգնություն կամ զենքի և զինամթերքի վաճառք, Հայաստանի տարածքում ամերիկյան ռազմաբազայի կամ սահմանապահ կոնտինգենտի տեղակայում: Փոխարենը, այն ներառում է համագործակցություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տնտեսական համագործակցությունը, անվտանգությունը և պաշտպանությունը, ժողովրդավարության կառուցումը, փոխանակման ծրագրերը և այլն: Անվտանգության և պաշտպանության ուղղությամբ համագործակցությունը ենթադրում է ռազմական կրթության և վերապատրաստման ծրագրեր:

Միաժամանակ Հայաստանն ու ԱՄՆ-ը պայմանավորվել են բանակցություններ սկսել Հայաստանի ատոմային էներգետիկայի ոլորտին աջակցելու համաձայնագրի շուրջ: Այստեղ չի կարելի բացառել, որ Հայաստանում կարող են կառուցվել այսպես կոչված ամերիկյան մոդուլային ատոմային կայաններ,[5] որոնց վերաբերյալ վերջին մեկ տարվա ընթացքում քննարկումներ էին ընթանում: Հայ-ամերիկյան երկկողմ համաձայնագրերի շուրջ 50 տոկոսը ստորագրվել է 90-ականների կեսերին և կարևոր հիմք հանդիսացել երկկողմ հարաբերությունների համար: Դրանց թվին են պատկանում այնպիսի համաձայնագրեր, ինչպիսիք են ներդրումների խրախուսման մասին, առևտրի և ներդրումների մասին, մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին, առևտրային հարաբերությունների մասին, գիտության և տեխնոլոգիայի բնագավառում համագործակցության մասին, ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագրերը և այլն: Ի դեպ, 1994 թ. պետնախարար Վազգեն Սարգսյանն ու ԱՄՆ պաշտպանության քարտուղար Փերրին ստորագրեցին ռազմական համագործակցության վերաբերյալ փաստաթուղթ, որը նաև այս ոլորտում հիմնարար նշանակություն ունեցավ փոխգործակցության համար: Իսկ 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից անմիջապես հետո Հայաստանը նաև միացավ գլոբալ ահաբեկչության դեմ պայքարին, (ԴԱԻՇ-ին հաղթելու համաշխարհային կոալիցիային միանալու Հայաստանի որոշումը Հայաստանի հակաահաբեկչական ջանքերի տրամաբանական շարունակությունն է) խաղաղապահ մի շարք առաքելություններին:

Կարևոր է նշել, որ ԱՄՆ-Հայաստան հարաբերությունների մակարդակի բարձրացումը ոչ միայն Փաշինյան-Բայդեն վարչակազմերի ձեռքբերումն է, այլև արտացոլում է տասնամյակների համագործակցությունը, որը սկսվում է դեռ 1990-ականներից՝ Հայաստանի նախորդ կառավարությունների և ԱՄՆ վարչակազմերի ներդրումներով: Սա իրականում Տեր-Պետրոսյան-Քլինթոն, Քոչարյան-Բուշ, Օբամա-Սարգսյան վարչակազմերի ակտիվ աշխատանքի արդյունքն է, որն իր տրամաբանական հանգրվանին հասավ Բայդենի և Փաշինյանի վարչակազմերի օրոք, և այս շարունակական աշխատանքի արդյունքներն արձանագրվել են ամերիկացի գործընկերների կողմից:

Թեև Խարտիան մեկ քայլ առաջ է, կարևոր է կառավարել ակնկալիքները: Այն չի ենթադրում, որ Հայաստանը ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակիցն է, ինչպիսին Իսրայելն է կամ Մեծ Բրիտանիան, և այն չի ապահովում անվտանգության ուղղակի երաշխիքներ: Փոխարենը, այն հիմք է ստեղծում ավելի ամուր գործընկերության համար՝ կենտրոնանալով դիվանագիտության, տնտեսական և տեխնիկական համագործակցության վրա: Այս խարտիայի իրական ազդեցությունը, ի վերջո, կախված կլինի մի շարք գործոններից: Թեև սա առաջընթաց է հայ-ամերիկյան երկկողմ հարաբերություններում, այնուամենայնիվ, դեռևս կան բաց հարցեր, որոնք պետք է իրենց պատասխանները ստանան:

Խարտիայի ստորագրման ժամկետը.

Ինչո՞ւ է այն ստորագրվել Բայդենի լիազորությունների ավարտից վեց օր առաջ: Հեռացող վարչակազմի հետ ստորագրված այս փաստաթուղթը հնարավո՞ր կլինի գործնականացնել Թրամփի նոր վարչակազմի հետ: Սա առավել բարդ կլինի, քանի որ Հայաստանի ներկա իշխանություններն ավելի լավ աշխատանքային հարաբերություններ ունեին դեմոկրատական վարչակազմի հետ, այլ ոչ թե հանրապետականների հետ: Ավելին, Թրամփի առաջին նախագահության օրոք հայ-ամերիկյան հարաբերություններն աչքի չեն ընկել ակտիվ համագործակցությամբ: Այնուամենայնիվ, Խարտիան, հայկական կողմի ձեռնարկած դիվանագիտական ջանքերի հետ մեկտեղ, կարող է լավ հիմք հանդիսանալ հանրապետական վարչակազմի հետ համագործակցությունը խորացնելու համար:

Թրամփն արդեն ստանձնել է նախագահի պաշտոնը, ուստի շուտով պետք է նշմարվեն նրա վարչակազմի հիմնական քաղաքական ուղղությունները Հայաստանի հետ: Հենց դա պարզելու նպատակով էլ փետրվարի 3-7-ը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պաշտոնական այց կատարեց Միացյալ Նահանգներ: Սակայն այդ այցը բացարձակապես չարտացոլեց երկու երկրների միջև ռազմավարական գործընկերության բնույթը: Իհարկե, վարչապետը հանդիպեց ԱՄՆ փոխնախագահ Ջեյմս Դեյվիդ Վենսի հետ, բայց հարկավոր է արձանագրել, որ վերջինս քաղաքական որոշումներ կայացնող պաշտոնյա չէ և, ամենայն հավանականությամբ, լավատեղյակ չէ Թրամփի վարչակազմի՝ Հայաստանի նկատմամբ նախատեսվող քաղաքականությունից: Ըստ էության, այս այցի նպատակն էր պարզել, թե ինչպիսին է լինելու Թրամփի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, հատկապես Ռազմավարական գործընկերային խարտիայի ստորագրումից հետո: Սակայն այցը չտվեց իր սպասված արդյունքը: Այս պահի դրությամբ Թրամփի վարչակազմի մոտեցումը Հայաստանի հետ ռազմավարական գործընկերային հարաբերությունների վերաբերյալ դեռևս հստակ չէ, հատկապես հաշվի առնելով, որ այցի ընթացքում որևէ քաղաքական մեսիջ չհնչեց, որն ազդակ կլիներ հարաբերությունների հետագա զարգացման վերաբերյալ:

Հղում

1. Charter on Strategic Partnership Between the United States of America and the Republic of Armenia, https://am.usembassy.gov/charter-on-strategic-partnership-between-the-united-states-of-america-and-the-republic-of-armenia/, (24.01.25).
2. 2022 U.S.-Armenia Strategic Dialogue Joint Statement, https://usa.mfa.am/en/news/2022/05/04/arm_usa_strategicdialogue/11435?mfa_news=1, (24.01.25).
3. Joint Statement on Armenia-U.S. Strategic Dialogue Capstone, https://www.mfa.am/en/interviews-articles-and-comments/2024/06/11/joint_statement/12691, (24.01.25).
4. Major Non-NATO Ally Status, https://www.state.gov/major-non-nato-ally-status/, (27.01.25).
5. Sargsyan S., Small Modular Reactors: A Geopolitical Dilemma for Armenia's Energy Future, https://mirrorspectator.com/2024/09/26/small-modular-reactors-a-geopolitical-dilemma-for-armenias-energy-future/, (27.01.25).

Իսկ քարավանը կշարունակի իր ճանապարհը

Արտաշես Շահբազյան

Նրանք, ովքեր քիչ թե շատ հետևում են լրատվամիջոցների և ընկերային ցանցերի հրապարակումներին, նկատած կլինեն վերջին շրջանում ծավալված հակադաշնակցական քարոզչության նոր ալիքը: Այս պղտոր ալեկոծության մեջ ներգրավված որոշ դերակատարների իսկ խոստովանությամբ գործընթացի դրդապատճառն ու նպատակն է ՀՅ Դաշնակցության առաջիկա Ընդհանուր ժողովի գումարումը: Ավելի ստույգ՝ անառողջ տրամադրություններ հրահրելու, գալիք ժողովի մթնոլորտի վրա ազդելու ցանկությունը: Զարմանալի չէ երևույթը, եթե հիշենք, որ անցած դարի 90-ականներին այդպիսի փորձեր էր ձեռնարկում նաև ՀՀՇ-ական իշխանությունը: Եթե ուշադրություն դարձնենք, թե ինչպես է կազմակերպված ու համադրված, Հայաստանից ու արտերկրից ինչ անձինք և ինչ լրատվամիջոցներ են ներգրավված, կասկած չի հարուցում, որ «նախաձեռնության» հեղինակն այժմ ևս ՀՀ իշխանությունն է: Իսկ թե ինչու է ներքին ու արտաքին անհաղթահարելի հիմնահարցերի մեջ խրված իշխանությունը ստանձնում այս անշնորհակալ գործը, նույնպես բարդ հանելուկ չէ՝ ապազգային այս իշխանության դեմ Հայաստանում ու սփյուռքում կանգնած գլխավոր կազմակերպված ուժը Դաշնակցությունն է: Փաշինյանական ռեժիմն իր իշխանության առաջին իսկ օրերից սկսեց հակադաշնակցական պայքարը, գնահատելով ազգային ավանդական կուսակցության ոչ միայն կազմակերպական, գաղափարական ներուժը, այլև աշխարհասփյուռ բնույթը: Դաշնակցության նկատմամբ այս իշխանության, այսպես ասած, մաքսիմում ծրագիրն էր կուսակցության ներսում ցանկալի չափով ազդեցություններ ձևավորելով դուրս բերել նրան իր ազգային հունից և կցորդ դարձնել Նիկոլի անդունդ տանող սայլին:

Արդեն անցյալ դարձած այդ օրերին նայելով, իհարկե, կարելի է ծիծաղել նման «երազանքների» վրա, բայց և չենք կարող չխոստովանել, որ հաջողվեց փոքր չափով ջուր պղտորել կուսակցության ներսում, վնասելով նրան... Ինչպես մոծակը կարող է վնասել փղին: Սրանով հանդերձ, կուսակցությունը հակադաշնակցական քարոզչության թիրախից երբեք դուրս չմնաց, իսկ կուսակցության հերթական բարձրագույն ժողովը, թերևս, հույս է արթնացրել մեկ անգամ ևս բախտը փորձելու: Իրավիճակը համարժեքորեն գնահատելու համար պետք է նկատի ունենալ, որ ժողովրդական դժգոհության հանդեպ իշխանության ամրությունը որքան ճաքեր տա, այնքան սրվելու է ինքնապաշտպանական ագրեսիան այն ուժի հանդեպ, որն անցնող տարիներին իր կազմակերպական ներուժով եղել է ժողովրդական ըմբոստությունների առանցքում և ոչ մի օր պայքարը չի դադարեցրել, փոխոցից տեղափոխելով այն խորհրդարանական, քարոզչական և այլ հարթակներ: Իշխանության համար ոչ պակաս մարտահրավեր է նաև Դաշնակցության ազգային կուռ և ամբողջական գաղափարախոսությունը՝ այն պայմաններում երբ նա մտադիր է Հայաստանում հաստատելու, այսպես կոչված, «Իրական Հայաստան» անվամբ «Առաջնորդող գաղափարախոսություն», ինչը բխում է գլոբալիզմի աշխարհաքաղաքացիական հիմքի վրա կառուցված թավշյա, գունավոր հեղափոխության ապազգային և պարտվողական ծրագրից: Մի ծրագիր, ըստ որի մերժվում է Արցախը և Սփյուռքը, պատմական հայրենիքը, և հայոց ցեղասպանության իրողությունը, ու ազգային հիշողության ու ինքնության միջուկը կազմող հոգևոր-մշակութային արժեքների գոյությունը և ճիգ է գործադրվում առաջնորդելու երկիրը դեպի արևմտյան (իրականում թուրքադրբեջանական) ենթակայություն: Նիկոլ Փաշինյանը հասկանում է, որ Հայաստանում իր դավադիր ծրագրերը կարող է ամբողջացնել, եթե հասնի առնվազն ժողովրդի գաղափարաքաղաքական կրավորականությանը, իսկ դա հնարավոր է նրա միջից քամել-հանելով ազգային հոգեկերտվածքն ու մտածողությունը, որի գլխավոր կրողն էլ Դաշնակցությունն է (ըստ իր իսկ համոզման): Նույնիսկ ավելին:

2025 թվականի փետրվարի 10-ին, Փարիզում ելույթ ունենալով փոքրաթիվ ֆրանսահայության առջև, Հայաստանի վարչապետն ասում է. «Հայաստանի Երրորդ Հանրապետության հիմնադրման օրից մենք չենք նկատել, որ Հայաստանում կա ընդամենը մեկ կուսակցություն, և էդ կուսակցությունը Հայ Յեղափոխական Դաշնակցությունն ա: Ֆորմալ եղել են այլ կուսակցություններ ևս, բայց իրականում եղել ա մեկ կուսակցության գաղափարախո-

սություն: Էն տարբերությամբ, որ եղել ա Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Հայ Յեղափոխական Դաշնակցություն: Բայց եղել ա ՀՀՇ Հայ Յեղափոխական Դաշնակցություն, ԱԺՄ Հայ Յեղափոխական Դաշնակցություն, եղալ ա Քաղաքացիական Պայմանագիր Հայ Յեղափոխական Դաշնակցություն:

Այսինքն՝ Հայաստանում գործող բոլոր կուսակցությունները գործել են Հայ Յեղափոխական Դաշնակցության գաղափարախոսության ներքո: Հարց ա ծագում, բա ինչի՞ մենք բոլորս չենք գնացել անդամագրվել, ինչը տրամաբանական կլիներ, Հայ Յեղափոխական Դաշնակցությանը: Ամենատարբեր պատճառներով՝ ՀՀՇ-ին թվացել ա, թե ինքն ավելի լավ Դաշնակցական ա, քան իսկական դաշնակցականները, ՔՊ-ին թվացել ա, թե մենք ավելի լավ դաշնակցականներ ենք, քան իրական դաշնակցականները, բայց պատասխանելով էդ հարցին, թե ինչ գաղափար ա տրանսֆորմացվում, մենք իրականում եղել ենք «Քաղաքացիական պայմանագիր Հայ Յեղափոխական Դաշնակցություն»: Ընդ որում, մենք ունիկալ չենք էս ձևի մեջ, Հայաստանում իշխած և խորհրդարանում տեղ գրված և Հայաստանում գործունեություն ծավալած կուսակցությունները, մենք բոլորս, դուրս ենք եկել Հայ Յեղափոխական Դաշնակցության գաղափարախոսությունից, որն իրա հերթին առանձին պատմություն ա, թե ինչ ա եղել, ոնց ա եղել: Գաղափարական մեր տրանսֆորմացիան էդտեղից ա տեղի ունենում»: Այնուհետև նա շարադրում է, թե, այսպես ասած, հրաժարվելով Դաշնակցության գաղափարախոսությունից իրենք (ՔՊ-ն Ա.Շ.) վերափոխում (տրանսֆորմացնում) են իրենց գաղափարախոսությունը «Իրական Հայաստանի» գաղափարախոսության:

Հայաստանի անկախացումից հետո, Արցախյան պայքարի և անկախացման գործընթացի բովում ծնված հայկական կուսակցությունները, ազգային մտածողության և նպատակների ծնունդ էին, և ահա այս ազգային մտածողությունն է, որից խրտչում է գլոբալիզմի վերազգային հովերից քշված Փաշինյանը՝ խաչ տեսած սատանայի պես բոլոր ազգային կուսակցությունների մեջ տեսնելով Դաշնակցությանը: Թերևս նա դա որոշ չափով տեսնում է նաև երեկվա Նիկոլի մեջ: Եվ ահա, այս ավանդական-արժեքային համակարգն ապազգային մտածողությամբ վերափոխելու որդեգրած կոիվն էլ Նիկոլ Փաշինյանը դիտարկում է որպես անընդհատելի կոիվ Դաշնակցության դեմ:

Իսկ ինչո՞ւ պետական համակարգի ուժով ՀՅԴ-ին ճակատից հարվածելու փոխարեն այսօրվա հակադաշնակցականությունը պիտի փորձի այդ բերդի դռները ներսից բացել: Փաշինյանը նախորդների փորձից լավ գիտե, որ Դաշնակցության բերդը դրսից խորտակելն անհնարին է: Մոտ 25 տարի առաջ այդ կռվի մեջ ջախջախվեց ՀՀՇ-ն: Անգամ բոլշևիկներն իրենց հաղթության օրերին հասկացել էին դա, և բոլոր սպանություններից ու հալածանքներից հետո անհնարին համարեցին բռնության ճանապարհով Դաշնակցությանը ոչնչացնելը, որովհետև

Լիկվիդացիայի համագումարի մասնակիցների խմբանկար

Դաշնակցություն նշանակում է իր պատմական-հոգևոր-մշակութային ինքնությանը կառչած, հայրենիքը սիրող և այդ հայրենիքի համար ամեն ինչի պատրաստ հայ մարդ, ում մարմինը կարելի է բանտել, սպանել, բայց միտքն ու հոգին՝ ոչ: Հայաստանի բոլշևիկյան իշխանությունը 1923 թվականին կազմակերպեց «Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը» (ՀՅԴ Լիկվիդացիայի համագումար) (Դաշնակցության որևէ ժողով երբեք համագումար չի կոչվել) և այդ ֆարսի ժամանակ, իբրև թե այն նախաձեռնած՝ արդեն նախկին դաշնակցականները հայտարարեցին կուսակցության լուծարման մասին: Նշենք, որ իհարկե սրանով էլ չհաջողվեց անգամ բոլշևիկյան ամբողջատիրության ժամանակ հաշվեհարդար տեսնել Դաշնակցության հետ: 1924 թ. նոյեմբեր - 1925 թվականի հունվար ամիսներին Փարիզում կայացած կուսակցության 10 - րդ ընդհանուր ժողովից հետո Դաշնակցությունը կրկին ոտքի կանգնեց ու հզորացավ Հայաստանում՝ ունակ դառնալով ընդհուպ նոր ապստամբություններ կազմակերպելու, և միայն 1933 թվականին տեղի ունեցած 12-րդ Ընդհանուր ժողովում է որոշվում դադարեցնել հայաստանյան գործունեությունը: Պարտադրված այս քայլի նպատակն էր թույլ չտալը, որ թափ առնող ստալինյան մսաղացը, Դաշնակցության դեմ պայքարի անվան տակ, հայ ժողովրդի գլխին նոր աղետ բերեր:

Մեր այս շարադրածից չպետք է տպավորություն ստեղծվի, թե այսօր այնպիսի մի հակադաշնակցական ուժ է գործում, որն առաջիկայում կարող է ինչ որ վնաս հասցնել կուսակցությանը կամ ինչ որ չափով խոչընդոտել նրա գործերի ընթացքին: Հակառակը, իսկ նախապատրաստական ժողովների ընթացքը հուշում է, որ գալիք բարձրագույն ժողովն անցնելու է նույնքան սահուն և կուսակցության ավանդական գործելակերպի շրջանակում:

Նույն տրամաբանությանն է առնչվում նաև անդրադարձը դարից ավելի ձգվող հակադաշնակցական քարոզչական մարտավարությանը: Եթե փոքր-ինչ

անդրադառնանք պատմությանը. կտեսնենք, որ այդ քարոզչության գլխավոր թիրախներից մեկը եղել և մնում է կուսակցության ղեկավարության դեմ ուղղված լայնածավալ քննադատությունը: Երբեմն խաբուսիկ հնարք բանեցնելով, թե իբր կուսակցության և նրա վարկով մտահոգ մարդիկ փորձում են նրա պարզ անդամներին պաշտպանել «վատ» ղեկավարությունից, նպատակ է հետապնդվում հարվածել կուսակցության «գլխին»: Եվ նույնը կրկնվել է սկսած 19-րդ դարից մինչև բոլշևիկյան գաղափարական արշավի, 1970-80-ականների սփյուռքյան վայրիվերումներից, ապա Հայաստանի վերանկախացման շրջանից մինչև մեր օրեր:

Որպես ծանոթ օրինակ ներկայացնենք, մեկ փաստ, թե ինչպես էին խորհրդային ծառայությունները փորձում վարկաբեկել և կազմալուծել Դաշնակցությունը. «Թեհրանում ԽՍՀՄ դեսպանության գաղտնի Բյուլետենից՝ Պարսկաստանում Դաշնակցությունը կազմալուծելու ուղղությամբ տարվող աշխատանքի մասին:

25 օգոստոսի 1925թ.[*]
Թեհրան

Տեղական դաշնակցականների շրջանում զգացվում է որոշ իրարանցում: Նրանց կարծիքով 10-րդ համագումարի որոշումները կուսակցությունը դուրս են բերել փակուղուց: Դատելով թերթերից, նույն իրարանցումը նկատվում է և արտասահմանյան այլ գաղութներում, որտեղ կան դաշնակցական կազմակերպություններ: Թեհրանի Կենտկոմը սկսել է պարբերաբար հրահանգներ ստանալ Փարիզից, մի կապ, որը նախկինում բավական թույլ էր պահպանվում:

Այդ կապակցությամբ Ղազվինից Թեհրան ժամանած բժիշկ Ա. Ղազարյանի ելույթը, կուսակցության 10-րդ համագումարի քննադատությամբ, և Թեհրանում նրա հրատարակած «Գաղափար» թերթի երկու համարները, թերթ, որի ուղղությունը բավական ցցուն արտահայտված է թերթի առաջին համարի «Մեր ուղին» առաջնորդողում, դաշնակցականների շարքերում առաջացրել են ուժեղ չարություն բժշկի դեմ:

Սակայն թերթը մեծ համակրությամբ է ընդունել այն անկուսակցական զանգվածը, որն առաջ ուղղակի կամ անուղղակի դաշնակցականների նեցուկն էր: Այդ է առայժմ Ղազարյանի աշխատանքի արդյունքը: Կհաջողվի՞ արդյոք նրան պառակտել դաշնակցականներին, ցույց կտա մոտակա ժամանակը: Համենայն դեպս նրա կողմնորոշումը դեպի Խորհրդային Հայաստան, գունազարդված ազգայնականությամբ, ոչ միայն անկուսակցականների, այլև դաշնակցական երիտասարդության ճաշակով է, որը հետաքրքրությամբ է սպասում թերթի հերթական համարին:

ՀՀ ՆՊՊԱ, Ֆ. 113, գ. 362, թ. 31-32 Թարգմ ռուս.:»

Վ.Ն. Ղազախեցյան Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ, էջ 312, Երևան 1999
(Փաստաթղթերի և նյութերի ժողովածու)

«Չեկիստ Գ.Ս. Ագաբեկովի գրքից արտասահմանում ՀՅԴ կազմալուծման մասին

Հուլիս-օգոստոս 1930թ.
Փարիզ

....ՊՔՎ-ն առաջադրանք էր ստացել քայքայել Դաշնակցություն կուսակցությունը, շարքայիններին կտրել վերիններից և շրջել խորհրդային իշխանության կողմը: Այդ խնդիրն իրականացնելու համար Թեհրանում հավաքագրեցինք կուսակցության հին անդամ բժիշկ Ղազարյանին, որը երկար ժամանակ եղել է կենտկոմի անդամ և նրան համոզեցինք թերթ հրատարակել հայերեն լեզվով: Բժիշկը թերթում զարգացնում էր Խորհրդային Հայաստանին օգնելու

գաղափարը, իր հոդվածներով կազմալուծում դաշնակների կուսակցությունը և նրանից կտրում շարքային անդամներին: Կուսակցության մեջ նրա նախկին դիրքը և անձնական հեղինակությունը նպաստում էին, որ դաշնակների կուսակցության շատ շարքայիններ հետևեին նրա օրինակին և սկսեին անցնել խորհրդային իշխանության կողմը:

Երկու տարի Ղազարյանը հրատարակում էր «Գաղափար» թերթը: Այդ գործի դիմաց նա բժշկական աշխատանքի ընդունվեց խորհրդային հիվանդանոցում, իսկ նրա աղջիկը դասավորվեց խորհրդային տնտեսական հիմնարկներից մեկում: Բացի այդ, թերթը խմբագրելու համար նրան ամսական վճարվում էր 100 դոլար: Թերթը քարոզչական նպատակներով տարածվում էր ձրի և ամսական բերում 300 դոլարի վնաս, ուստի 1927թ. վերջին որոշվեց այն փակել, առավել ևս, որ այդ ժամանակ կուսակցության մեջ Ղազարյանի հեղինակությունը լրիվ ընկել էր:

Հայերի հասարակական կարծիքի մշակմանն էր ծառայում նաև Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ)...

Գ. Ս. Ագաբեկով, ՊՔՎ (Չեկիստի գրառումները), «Ստրելա» հրատ., 1930, էջ 115-116, 219, 248: Թարգմ. ռուս.:»

Վ.Ն. Ղազախեցյան Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ, էջ 319-320, Երևան, 1999 (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու)

Ինչպես վերը նշեցինք, հավանաբար ընթերցողը որոշ զուգահեռներ կտեսնի այն և այս տխուր ժամանակների միջև, երբ Հայաստանը ղեկավարում էին օտարի դրածո և պառակտիչ ուժերը:

Այսօրվա Հակադաշնակցական քարոզչության փչացած սկավառակը շարունակում է կրկնել Դաշնակցության ներքին ճգնաժամի, թուլացման և նման բաների մասին: Եթե այդ ամենը ճիշտ լիներ, օրինակ ՀՀՇ-ի ժամանակներում, ապա վաղուց արդեն ՀՅԴ-ի ոդիսականն ավարտված պետք է լիներ, բայց ո՞ւմ է զիջում արդյոք այսօր կուսակցությունը, խորհրդարանում, ժողովրդային տարբեր հարթակներում իրականացրած գործունեությամբ: Կա՞ մեկ նշան, որը կվկայեր Հայաստանում կուսակցության «ծանր» կացության մասին: Իր բազմահազար անդամներով արդյո՞ք կուսակցական կառույցը չի գործում անդադրում ու կազմակերպված ձևով: Իսկ իրականում կա՞ն դժգոհություններ Կուսակցության շարքերում: Այո՛ կան, և ոչ միայն շարքերում, այլև ներքևից վերև բոլոր մակարդակի մարմիններում: Դաշնակցությունը չի կարող բավարարված լինել ինքն իր գործունեությունից այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը չի մաքրվի ազգային շահերից հեռացած, թրքական օրակարգեր սպասարկող իշխանության թունավոր շնչից: Կասկած չկա, որ Հայաստանի ներկա կացությունն ու վտանգավոր հեռանկարը, կորսված Արցախի հիմնահարցը՝ կլինեն առանցքային քննարկման նյութը Դաշնակցության առաջիկա ընդհանուր ժողովում: Իսկ եթե այդպես չլինի, կնշանակի, որ Դաշնակցությունը իսկապես հեռացել է ինքն իրենից:

Եվ վերջում ևս մեկ տխուր կամ զավեշտալի իրողություն հակադաշնակցական անմաքուր պայքարի մեջ ներգրավված, երկու ձեռքի մատների վրա հաշվող մարդկանց թվում, մեկ ձեռքի վրա հաշվող նախկին դաշնակցականների մասին: Անցնող երեք ու կես տասնամյակների ընթացքում որոշ թվով մարդկանց կապը խզվել է կուսակցությունից: Պատճառները եղել են տարբեր՝ կազմակերպական խնդիրներ, առաջացած տարիք, անձնական կյանքի հարուցած դժվարություններ և, ի վերջո, ավարտը այն ժամանակաշրջանի, երբ գրեթե յուրաքանչյուր հայաստանցի ձգտում էր Արցախի ու Հայաստանի վերածնության պայքարի բովում դրսևորել քաղաքական կամ հասարակական ակտիվություն: Ասպարեզում մնացին նրանք, ովքեր հակում ունեին կուսակցական-քաղաքական կյանքի ու աշխատանքների նկատմամբ (թեև, այս առումով, հայաստանյան իրականության մեջ այս երևույթը ամենաքիչ զգալի եղավ Դաշնակցության դեպքում): Նրանք, ովքեր բաժանվեցին կուսակցությունից, հիմնականում պահպանեցին փոխադարձ հարգանքը կուսակցության նկատմամբ, որովհետև ինչ-ինչ պատճառներով կուսակցական գործունեության դադարեցումը չի կարող նշանակել հեռացում քո մեջ եղած հայրենասիրությունից, Հայ դատից և պահանջատիրությունից, պատմական հիշողությունից, հայ ժողովրդի հիմնարար արժեքների և պահանջների նկատմամբ վերաբերմունքից՝ ինքդ քեզնից: Թերևս այդ պատճառով էլ կեսկատակ կեսլուրջ շրջանառության մեջ մտավ այն միտքը, թե նախկին դաշնակցականներ չեն լինում: Իսկ հիմա պատկերացրեք, որ մարդիկ ՀՀՇ-ական իշխանության օրոք տարիներ շարունակ համախոհ են եղել, ելույթներ են ունեցել, հոդվածներ են գրել, պայքարել են Արցախի ազատագրման, Հայոց ցեղասպանության ճանաչման, Հայ Դատի, ազգային արժեքների համար, իսկ հիմա հարմար տեղավորվել են այն իշխանության տաքուկ ծալքերում, որը հանձնեց Արցախը, որը հրաժարվել է Հայոց ցեղասպանության հարցից, պատմական հայրենիքի իրողությունից, սփյուռքից, ազգային արժեքներից, Մայր եկեղեցուց: Հանձնում է Հայաստանի ռազմավարական տարածքները և ծառայամտորեն կատարում է թուրքադրբեջանական դաշինքի բոլոր պահանջները՝ նոր Սահմանադրություն պարտադրելով պատրաստվում է տապալել Հայաստանի պետական կարգը: Այս մարդիկ, որոնց այսօրվա խիստ մտահոգությունը ոչ թե այս հարցերն են, այլ Դաշնակցության ներքին վիճակը, իրենց կյանքի ո՞ր կեսում են սխալ եղել և որ հատվածում ճիշտ՝ ըստ իրենց: Ես իրենց ասելիք չունեմ, բայց կառաջարկեմ, որ կանգնեն հայելու առաջ և իրենց համարած ճիշտ կեսը թող թքի սխալ կեսի՝ իր դավաճան կեսի երեսին:

Հա, իսկ առաջիկայում, ինչպես ասացինք, մեզ սպասվում է Դաշնակցության հագեցած ընդհանուր ժողովը, որի բնական ընթացքին չի կարող խանգարել ոչինչ:

Ռուբէն Տէր-Մինասեանի անուան շուրջ հիւսուած հեքիաթները

Կարէն Խանլարեան
Տեխնիկական գիտութիւնների դոկտոր, պատմական գիտութիւնների թեկնածու

Ականաւոր քաղաքական գործիչ, հայկական ազատագրական շարժման նշանաւոր գործիչ, Հայաստանի Առաջին Հանրապետութեան երրորդ ռազմական նախարար եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի բազմամեայ անդամ Ռուբէն Տէր-Մինասեանի (1882-1951 թթ.) հասցէին վերջերս հրապարակուել է ցեխարձակումների մի նոր շարք՝ «ԳԻՏԷԻ՞Ք ԹԷ...» վերտառութեամբ, պատմաբան Գէորգ Եազըճեանի հեղինակութեամբ, ով յայտնի է մեզ, որպէս «Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ»-ի (ՀԱՀԳԲ, ԱՍԱԼԱ) առնուազն համախոհ, եթէ ոչ՝ անդամ:

Ռուբէնի դէմ տուեալ զրպարտութիւնները, ըստ էութեան, նորութիւններ չեն: Խորհրդային պատմաշինութեան մեքենան նման արշաւանքներ փորձել է իրականացնել ոչ միայն Ռուբէն Տէր-Մինասեանի, այլեւ Սիմոն Վրացեանի, Վահան Նաւասարդեանի, Միքայէլ Վարանդեանի, Դրոյի, Արշակ Ջամալեանի եւ այլոց դէմ, որոնց ղեկավար դերակատարութեամբ յաջողուեց վերականգնել ՀՅ Դաշնակցութեան գաղափարական հիմքն ու կազմակերպական կորովը՝ Հայաստանի խորհրդայնացումից եւ անկախութեան անկումից յետոյ ընկած բարդ ու դժուարին ժամանակահատուածում:

Նոյն իներցիայով, այսօր էլ գլորուում է հակադաշնակցական պայքարի թափանիւը եւ դրսեւորուում բոլշեւիկամէտ հայ տարրերի հոետորաբանութիւններում՝ սեկտարիզմից ու նէօնացիզմից մինչեւ պոպուլիզմ ու նէօլիբերալիզմ...

ԳԻՏԷԻ՞Ք ԹԷ...

1. ՀՅԴ գործիչ, Բիւրոյի երկարաւրեայ անդամ Ռուբէն Տէր Մինասեանը, իբրեւ ներքին գործոց եւ զօրաց նախարար կարեւոր դեր ունեցած է Կարսի 30 հոկտեմբեր 1920-ի խայտառակ անկման ու անոր հետեւած՝ առաջին հանրապետութեան կործանման մէջ:

Այս հեքեաթի բուն հեղինակը Շահան Նաթալին է, որ Կարսի անկումից մի քանի տարի անց՝ 1929 թուականին գրում էր. «Ինչո՞ւ ինկաւ հապա Կարսը, Հայաստանի Անկախութեան խարիսխը եւ բանալին: Անտեղեակներ չեն մնացած այլեւս, որպէսզի չգիտնան, որ հայ զինուորները, Սարը-Գամըշէն մինչեւ Կարսի պատերուն տակ եւ աւելի հեռուն՝ մինչեւ Ալեքսանդրապոլ եւ Ջաջուռի բարձունքներուն վրայ, ոչ միայն Հաճընի անպարտելի քաջերուն ի յայտ բերած հայրենասիրական եւ մարտական խոյանքը չունեցան, այլ եղան անարի, վատասիրտ եւ դասալիք, Հայրենիքն ու Ազատութիւնը փոշիի վերածելով քէմալական քանի մը անարժէք զորաբաժիններու պատեաններէն չքաշուած սուիններուն առջեւ:

Կարսի անկումը Հաճընի պատուաւոր աղէտին հետ նմանութեան ու զուգակշռի եզրերէ զուրկ է նաեւ այն պատճառով, որ Երեւանի հայ իշխանաւորներուն եւ նախարարներուն կամքը եւ գործունէութիւնը կաշկանդող ոչ մէկ ուժ կամ ազդեցութիւն գոյութիւն չունէր Հայաստանի մէջ, 1920-ի այդ մռայլ օրերուն»[1]:

Նոյն Նաթալին, 1932 թ. արդէն «յայտնաբերել» էր հասցէատիրոջը եւ յստակ գրում էր. «...Պատերազմական նախարար Ռուբէն Տէր Մինասեան Կարսը Թուրքին կը յանձնէր՝ առանց գնդակ արձակելու»[2]:

Կարսի անկման կապակցութեամբ բազմաթիւ գիտական յօդուածներ եւ զեկոյցներ են հրապարակուել եւ մենք մտադիր չենք այստեղ հերթականը ներկայացնել: Ցանկանում ենք միայն աւելացնել մի քանի նոր փաստարկներ, որոնք թերեւս առաւել նուազ են քննութեան առարկայ դարձել: Այս առումով նախ բերենք մի շշմեցուցիչ եւ միեւնոյն ժամանակ ամօթալի փաստ. Ղարաբաղի «հեղկոմ»-ի նախագահ, հայկեր՝ Ասադ Կարաեւը Ղարաբաղի ՐԵՎԿՈՄ-ին գրած, 1920 թ. յուլիսի 18 թուակիր եւ ԽԻՍՏ ԳԱՂՏՆԻ, նամակում գրում էր, Կարսի անկումից առնուազն հինգ ամիս առաջ. «Ոչ մի երկրում փողով չի կարելի անել այն, ինչ հայերի մէջ: Դա ապացուցուած բան է... Ես երկար եմ գրում այդ առթիւ, որ Ձեզ եւ բոլոր ընկերներին համո-

զեմ, որ շատ սխալ էր ձեր հին քաղաքականութիւնը, այն է՝ զօրքերով գրաւել Ղարաբաղ-Զանգեզուրը: Գիտենք, որ մեր զօրքերը ջարդուեցին, իսկ այսօր զօրքերի փոխարէն մեր դրամները գրեթէ հրաշքներ են կատարում: Նորից եւ նորից կրկնում եմ իմ խորհուրդը՝ չափսոսէք եւ ոչ մի գումար: Աւելացրէք ռոճիկները, տուէք նուէրներ եւ այն ամենը, ինչ որ կուզեն: Կառավարութիւնը որոշել է Ղարաբաղ-Զանգեզուրը Ադրբէջանին միացնելու գործի համար բաց թողնել եւս երկու հարիւր միլիոն ռուբլի...»[3]:

Չորս կամ հինգ ամիսը բաւարար ժամանակ էր հայ բոլշեւիկների համար, որպէսզի ստանալով Բոլշեւիկ կուսակցութեան ֆինանսական աջակցութիւնն մեկնարկէին հայոց պետութեան քայքայման գործընթացը: Ահա ե՛ւ կարաեւեան ռազմավարութեան անմիջական պտուղը. Երեւանի երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» կազմակերպութեան մէկ թռուցիկը, որը հրապարակուել է 1919 թ. յուլիս ամսին, երբ ՀՀ բանակը Բէիւք-Վեդիի շրջանում զբաղուած էր թուրք-թաթարական հակապետական խռովութիւնները վերահսկելու գործով: Յիշեալ թռուցիկում, որի հեղինակը յայտնի բոլշեւիկ Արշաւիր Մելիքեանն էր, հայ զինուորներին կոչ էր արւում զինուորական հրամանատարութեան կարգադրութիւններին չենթարկուել, եւ «թուրք աշխատաւոր եղբայրների» դէմ կռուելու փոխարէն պայքարի դուրս գալ հանրապետութեան իշխանութիւնների դեմ[4]:

Դասալքութեան կոչերի մի այլ օրինակ՝ «Կոմունիստական կուսակցութիւն – Ալեքսանդրապոլի կոմիտէ» ստորագրութեամբ, հայ բոլշեւիկների՝ Հայաստանի բանակի զինուորներին ուղղուած թռուցիկներից մէկում ասւում է. «Դաշնակցական խայտառակ կառավարութեան խմբապետներից կազմուած զօրքը նահանջում է Քեմալի զօրքերի ահաւոր յարձակումներից: Բաւական չէ, որ նրանք թալանեցին եւ կողոպուտի մատնեցին ժողովրդի հարստութիւնները, բաւական չէ, որ նրանք հայ աշխատաւոր ժողովրդի գլխին չարիք դարձան, այժմ էլ խաբում են ձեզ գիւղացիներ եւ զինուորներ, ասելով, որ գալիս են թուրքերը հայ աշխատաւորութեանը թալանելու եւ կոտորելու: Մենք կոչ ենք անում ձեզ չհաւատալ դաշնակցականների հազարաւոր ստերին, որովհետեւ եկողները ոչ թէ թալանի աւազակներ են, այլ հայ գիւղացիների, զինուորի ու բանուորի ընկերներ՝ թուրք աշխատաւորներ են: Հաւատացէք, որ Կարսում, Ալեքսանդրապոլում եւ գրաւուած միւս տեղերում նրանք ոչ թալանել են ժողովրդին եւ ոչ էլ կոտորել, այլ հաստատել են բանուորագիւղացիական կարգ ու կանոն: Եկողները ոչ թէ թշնամիներ են ձեզ, այլ դաշնակների կառավարութեան: Ուստի նորից կոչ ենք անում ձեզ տեղերից չշարժուել, մնալ հանգիստ, չգաղթել... Այժմ դուք բոլորովին երես դարձրէք դաշնակցականներից»[5]:

Քեմալական զինուած ուժերի ագրեսիայից ամիս ու կէս առաջ, արդէն պարզ էր Հայաստանի Հանրապետութեան եւ Դաշնակցութեան ճակատագիրը Քեազիմ Կարաբեքիրի համար: Այս մասին ուշագրաւ տեղեկատուութեան ենք հանդիպում ամերիկեան ԶԼՄ-ներում.

Ռուբէն Տէր-Մինասեան

«ՊՈԼԻՍ, օգոստոսի 11, հաղորդում է Associated Press-ը,- Երեւոյթներ կան առ այն, որ Էրզրումում թուրքական ազգայնական բանակի հրամանատար Քեազիմ Կարաբեքիրը համաձայն չէ Անգորայի ազգայնական կառավարութեան ղեկավար Մուստաֆա Քեմալ փաշայի հետ եւ գործում է անկախ, այսպէս է ասւում Կարաբեքիրի ստորագրած յայտարարութեան մէջ, որը տպագրուել է «Իսթիկբալ» թերթում...» «Բոլշեւիկները կ՚աջակցեն թուրք ազգայնականների պայքարում ընդդէմ՝ դաշնակիցների եւ Թուրքիայի միջեւ խաղաղութեան պայմանագրի կիրարկման»- ասում է Կարաբեքիրը եւ աւելացնում. «Մեր ռուս բոլշեւիկ ընկերները գրաւել են Բրեստ Լիտովսկը: Լեհաստանը՝ մեր իմպերիալիստ թշնամիների միակ յոյսը, աղաչում է, որ Լեհաստանում հաստատուի խորհրդային իշխանութիւն: Լեհաստանի կողմից խորհրդային կառավարման ձեւի ընդունումը մեծ խուճապ կը ստեղծի մեր կայսերական աւազակների ճամբարում: Ազատութեան արեւն իր ճառագայթներն է արձակում Եւրոպայի ճնշուած բնակչութեան վրայ»:

«Այսուհետ իրաւիճակը կը պարզեցուի:- շեշտում է Կարաբեքիրը,- Բրիտանացի աւազակները եւ նրանց համախոհները շուտով կը հասկանան իրենց սխալները: Դաշնակցութիւնը, հայկական հզոր կուսակցութիւնը կը ջնջուի, եւ խաղաղութիւնը կը տիրի Մերձաւոր Արեւելքում: Այն թղթի ջարդօնը (խօսքը Սեւրի պայմանագրի մասին է.-Կ.Խ.), որը նրանք ստիպում են մեզ ստորագրել, կը լինի պատառոտուած, եւ մեր դաշնակիցները, ովքեր վերջնական հարուած են հասցնում լեհերին, շուտով կազատեն մեզ մեր թշնամիներից, հետեւաբար, ես այժմուանից շնորհաւորում եմ ձեզ, այս մեծ յաղթանակի կապակցութեամբ, եւ ուրախութեամբ նշում մօտալուտ ազատման ժամը»[6]:

Ի միջի այլոց շեշտենք, որ Կարաբեքիրի նախատեսութիւններից մէկը միայն, այսինքն. «Դաշնակցութիւնը, հայկական հզոր կուսակցութիւնը կը ջնջուի» պլանը չիրականացաւ, շնորհիւ՝ հենց Տէր Մինասեանների, Վրացեանների եւ Նաւասարդեանների եւ միւսների, որոնց մասին նշել էինք այս աշխատութեան նախաբանում: Իսկ Կարաբեքիրի միւս նախատեսումները, ցաւոք իրականութիւն դարձան եւ հիմնովին շրջեցին Հայաստանի ու հայութեան ճակատագիրը...

«Մշակ»-ը հոկտեմբերի 23-ին, Կարսի անկումից մօտ շաբաթ առաջ, իր խմբագրականում շեշտելով հանդերձ, որ «բոլորը պէտք է կանգնեն միմիայն եւ միեւնոյն ժամանակ Հայաստանի պաշտպանութեան համար...», այնուամենայնիւ միանգամայն անիմաստ ու անկապ կերպով յարձակւում էր դաշնակցական իշխանութիւնների վրայ, ասելով, թէ. «Դուք ցանկացաք լինել միակը եւ այսօր Հայաստանի դժբախտութեան օրին մնացիք մենակ: Դուք ցանկանում էք յենուել ժողովրդական մասսայի վրայ, բայց ինչ, ի՞նչ էք տալու դրա փոխարէն, միթէ միայն կուսակցական կուրութիւն»[7]:

Պարզւում է, որ «Մշակ»-ն էլ է տեղեկացուած եղել ՀՀ զինուած ուժերի կանխորոշուած, վերահաս պարտութեան մասին, ու նշեալ խմբագրականով փորձ է կատարել ժամանակին գնացքից դուրս թռչելու: Աւելորդ է յիշեցնել, որ նման դիրք են որդեգրել ոչ միայն Հայաստանի աջերը, այլ նաեւ ձախերը, յանձին հայ Էս-Էռ-ների եւ հայ մենշեւիկների:

Կարաեւի նամակը, Կարաբեքիրի յայտարարութիւնը, ինչպէս նաեւ «Սպարտակ»-ի եւ կոմկուսի «Ալեքսանդրապոլի կոմիտէ»-ի կոչերը բաւարար չե՞ն ապացուցելու, որ բոլշեւիկ ղեկավարութիւնը բազմակողմանիօրէն՝ քաղաքականութեամբ, զէնք-զինամթերքով ու ֆինանսապէս հովանաւորել է հայ եւ ադրբեջանցի իր կուսակիցներին՝ ՀՀ-ն ներսից ապակայունացնելու եւ Քեմալի առաջ ծնկի բերելու ուղղութեամբ: Փաստ, որի կողքից թեթեւ սրտով անցնում է, ինչպէս Շահան Նաթալին, այնպէս էլ Գէորգ Եազըճեանը՝ բոլշեւիզմին յանկարծ չդիպչելու մտավախութեամբ: Նրանք հայ ու թաթար դասալիք ու դաւադիր բոլշեւիկների հիմնական մեղաւորութիւնը ստուերելու նպատակով, ՀՀ իշխանութիւններին, մասնաւորաբար ՀՅ Դաշնակցութեանն ու Ռուբէն Տէր Մինասեանին են անարդարօրէն նստեցնում մեղադրեալի աթոռին:

Այս իմաստով Եազըճեանը, մի այլ տեղ, բաւարարւում է միայն Անդրանիկ Ծառուկեանին վկայակոչելով, թէ Կարսի անկումը բոլշեւիկեան քարոզչութեամբ պայմանաւորելը «կրնայ մասամբ ճիշտ ըլլալ», բայց «անբաւարար» է ու «անհամոզիչ»[8]:

Շահան Նաթալիի «բաւարար» եւ «համոզիչ» հաստատումը չափազանց հեռու է իրականութիւնից, երբ նա ասում է, թէ. «Երեւանի հայ իշխանաւորներուն եւ նախարարներուն կամքը եւ գործունէութիւնը կաշկանդող ոչ մէկ ուժ կամ ազդեցութիւն գոյութիւն չունէր Հայաստանի մէջ...»:

Իհարկէ՛ գոյութիւն ունէր արտաքին ազդեցութիւնների վիթխարի, սիստեմատիկ եւ շղթայական մի շարան: Եւ իրոք չէր կարող պատահական լինել Կոմկուսի յայտարարութեան այն մասը, որում ասւում էր. «եկողները... թուրք աշխատաւորներ են»: Իրոք չէր կարող պատահական լինել. այս մասին մամուլից իմանում ենք հետեւեալը. «ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՔԷՄԱԼԻՆ - Բաթումից հաղորդում են, որ սեպտեմբերի 28-ին Տրապիզոն է հասել 2 փոխադրանաւ ռազմամթերքով բարձած: Նոյն նաւով Տրապիզոն են հասել թիւրք սպաներ, որոնք աւարտել են Կազանի զինուորական դպրոցը: Ռազմամթերքն ուղարկուած է բոլշեւիկների կողմից, որպէս օգնութիւն Մուստաֆա Քէմալին: ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ԴԵՍԱՆՏ ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ - Հոկտեմբերի 1-ին Տրապիզոն է հասել մի փոքր փոխադրանաւ, որից ափ են իջել 300 բոլշեւիկեան զինուոր»[9]:

Այսպէս՝ «թուրք աշխատաւորներ»-ը փաստօրէն՝ հարիւրաւոր թուրք բոլշեւիկ «դեսանտ սպաներ» եւ զինուորներ են եղել, որոնց դէմ չպիտի էլ կռուէին բոլշեւիկեան քարոզչութեամբ վարակուած՝ ՀՀ զինվորականները, ինչպէս ե՛ւ չկռուեցին Կարսում:

Երեւոյթի խորքային պատճառները շատ աւելի բարդ են, քան փորձ է կատարւում ներկայացնել: Գլխաւորը Քեմալ-բոլշեւիկեան գաղտնի պայմանագիրն է, որի նախնական բնագիրը ստորագրուեց 1920 թ. օգոստոսի 24-ին, Մեւրի պայմանագրի ստորագրումից երկու շաբաթ յետոյ, եւ որը գլխաւոր խթանը հանդիսացաւ Հայաստանի դէմ պատերազմական գործողութեան իրականացման համար:

«Գրաւ կը դնենք, սակայն, որ հազիւ թէ մատի վրայ համրուին անոնք, որ ծանօթ են Ալեքսանդրապոլի դաշնագիր կոչուած այն անպատիւ թուղթին, որ վարչապետ Վրացեանի հրահանգով ստորագրել կ՚իյնար, երբ պատերազմական նախարար Ռուբէն Տէր Մինասեան Կարսը Թուրքին կը յանձնէր՝ առանց գնդակ արձակելու»[10] ,- ասում է ՀՅԴ Բիւրոյի արտաքսուած անդամ՝ Շահան Նաթալին, 1932 թ.:

Երկու հարց է ծագում այստեղ Շահան Նաթալիի հնչեցրած ծանրակշիռ մեղադրանքի շուրջ.

1. Ինչո՞ւ Շահան Նաթալին 1920-1921 թթ. սկսեալ մինչեւ առնուազն 1930 թ. ՉԻ ԲԱՑԱՅԱՅՏԵԼ Սիմոն Վրացեանի եւ Ռուբէն Տէր Մինասեանի կատարած «դաւաճանութիւնը»: Թերեւս նպատակայարմար չի գտել թէ՞ ընդհանրապէս այդպիսի զրպարտութիւնը ինքն է յօրինել եւ «գրաւ»-ի տեսքով արտաբերել աւելի ուշ՝ 1932 թ.:

2. Եթէ զրպարտութիւնը յօրինուած չէր, ապա Շահան Նաթալին ինչպէ՞ս է համաձայնել, իր իսկ ասութեամբ՝ այս երկու «դաւաճան»-ների հետ միասին, 1925 թ. ընտրուել եւ մտնել միեւնոյն մարմին՝ ՀՅԴ Բիւրո: Ի դէպ նշենք, որ Նաթալին, ոչ թէ կամովին է «հեռացել» ՀՅԴ-ից, ինչպէս պնդում են ոմանք, այդ թւում եւ ինքը, այլ արտաքսուել է ՀՅԴ-ից 1931 թ.: Սա էլ է իհարկէ պատեհապաշտութեան հետեւանք:

Երիցս իրաւացի է Աշոտ Մելքոնեանը, որ Հայաստանի առաջին Հանրապետութեան կործանումը պայմանաւորում է «միմիայն արտաքին գործօնների ազդեցութեամբ», եւ որ այդ կործանման համար «օբյեկտիւ ոչ մի պատճառ գոյութիւն չունի»[11]:

Այս հարցն այնքան անթաքոյց է, որ մինչեւ իսկ Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան Կուբանս-Չերնոմորեան սեկրետարիատին կից արեւելեան ազգութիւնների բաժնի հայերէն պաշտօնաթերթը գրում էր .«Շնորհիւ քէմալիստների առաջխաղացմանը «Անդրկովկասեան դեմոկրատիայի» շարքերում ստեղծուած մի ժամանակուայ համերաշխութեան փոխարէն, ներկայումս նկատելի է սուր պայքար: ՔԱՀՈՒԹԵԱՆ ՆՈՒՆԱՋԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ (ընդգծումը մերն է-Կ.Խ.)»[12]:

Խորքային այս պատճառը, այսինքն՝ ՀՀ զինվորականության հոգեվիճակը, չի վրիպել նոյնիսկ երիտասարդ բանաստեղծ՝ Նայիրի Զարեանի անզէն հայացքից: Կարսի անկման առթիւ Գնդապետ Մազմանեանի յիշատակին նուիրուած Զարեանի հազուադէպ այս բանաստեղծութիւնից մէջ ենք բերում հետեւեալ հատուածը, տուեալ հոգեվիճակն ամենայն խորութեամբ պատկերելու նպատակով.

«Այս պատմութիւնը ամօթակեզ բերնէ բերան է գալարում,
Եւ ինչպէս օձ բիւրաժանիք հոգիներն է մեր խայթում:
Նրանք եկան խոնուեցան մեր անաւիկ դիրքերի տակ,
Ոռնում էին դիրքերն ի վեր զերթ գայլերի սոուած վոհմակ,
Գնդապետը մեր քաջարի նշան տուեց վերջին կռուի,
Ինչպէս մի հօր հեզ ոչխարի՝ մերինները կարկամեցին:
Սովալլուկ գայլերի պէս նրանք սողում էին դէպ մեզ,
Գնդապետը երեք անգամ աղաղակեց կռուի նշան,
Երեք անգամ «յառաջ» ձայնեց ու պլացաւ սուսերամերկ,
Երեք անգամ դիրքերն ի վեր նա պաղատեց կռուի հրաւէր.
Մերոնք, ասես, շշմած էին ինչպէս հօտը հեզ ոչխարի,-
Չկռուեցին. չգոռացին հրացանները հազար-լեզու,
Չիսօսեցին գնդացիրներ-հրակոկոռող հոեպորներ.
Մինչ գազազած գայլերի պէս նրանք սողում էին դէպ մեզ,
Մերինները կորաստին բիւրակոնակ խուճապեցին:
Երբ որ խուճապը նա տեսաւ ոչխարիւուն իր զօրքերի,
Երբ ամօթը ամպի պէս նստեց նրա ճակտի վրայ՝
Իր դիակը սուինամերձ թշնամի առջեւ փռեց...
Իսկ զինուորները դասալիք, մեր զինուորները խուճապող
Հաւաքեցին միջնաբերդում իրենց վախը ամօթալի
Խոնուեցին իրարու մօտ զերթ գայլ տեսած ոչխարի հօտ
Լեարդերի պէս իրենց ճերմակ՝ բարձրացուցին մի դրօշակ.
Այս պատմութիւնն ամօթակեզ սրտերից-սիրտ է գալարում,
Եւ ամօթը բիւրակնճիռ ճակատներն է մռայլում...»[13]:

Թուրքական զօրքի հրամանատար Քեազիմ Կարաբէքիրը հետեւեալ ողջոյնի հեռագիրն է ուղարկել Ալէքսանդրօպոլի «ՌԵՎԿՈՄ»-ին, 1920 թ. դեկտեմբերի 2-ի չարաբաստիկ օրը. «Ես ուրախութեամբ լսեցի Կարմիր զօրքերի Դիլիջան գալը: Ձեր բարեկամ եւ դաշնակից տաճկական զօրաբանակի կողմից ողջունում եմ ձեր մուտքը Դիլիջան եւ փափագում եմ մեր յաղթութիւնը իմպերիալիզմի դէմ, յանուն աշխատաւոր ժողովրդի բարօրութեան եւ բախտաւորութեան: Մեր մէջ անյապաղ կապ հաստատելու մասին ես կարգադրութիւն եմ արել»[14]:

Բոլշեւիկները Քեմալի յարձակումը համարում էին անգամ յառաջադիմական եւ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ:

Սիմոն Վրացեան

Այս մասին դարձեալ Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան Կուբանս-Չերնոմորեան սեկրետարիատին կից արեւելեան ազգութիւնների բաժնի պաշտօնաթերթը գրում էր. «ՔԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ.- ...Նայելով ընդհանուր յեղափոխական շահերի տեսակէտից, մենք պէտք է բացատրենք այդ յարձակումը իբր հարուած պատրաստող հակայեղափոխականների դէմ: Ինչպէս երեւում է այն գերեզմանի մէջ, որ անդրկովկասեան հանրապետութիւնները պատրաստում էին Խորհրդային Ռուսաստանի համար, իրենք են թաղուելու: Իսկ վաղը նրանց գերեզմանների վրայ յեղափոխական բանուորութիւնն իր իշխանութեան հիմքը կը դնի»[15]: Հենց սա է խորքային պատճառը Կարսի անկման, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան ոչնչացման: Չկայ ուրիշ իրականութիւն: Մի փորձէք սա Ռուբէն Տէր Մինասեանին վերագրելով, փրկել ձեր գաղափարախօսական նախահայրերի՝ բոլշեւիկների կաշին:

Այս գլխի, որպէս վերջաբան, այստեղ վկայակոչում ենք «Ճակատամարտի» անմիջական կարծիքը, հրապարակված Կարսի անկումից մօտ մէկ ամիս անց, այն գտնելով ամենաառարկայական, անմիջական վերլուծութիւններից մէկը:

«Ի՞նչ պատճառներու կը վերագրէք Կարսի անկումը:- գրում է «Ճակատամարտը»,- Ծանօթ ըլլալու է ձեզի, որ մեր զորքը բազմաթիւ ճակատներու վրայ եւ առանց հանգիստի կռիւ կը մղէր, այնպէս որ արդէն չափազանց յոգնած էր: Զօրքին այս վիճակը նպաստաւոր գետին մը եղաւ պոլշեւիկեան քարոզչութեանց, որ խուլ կերպով կը մղուէր բազմաթիւ գործակալներու կողմէ:

Ասոնք հաւատացուցած էին հայ զինուորին թէ թուրքերուն յաղթանակը որեւէ վտանգ չի ներկայացներ եւ թէ անոնց գալուստով աւելի հանգիստ կեանք մը կը ստեղծուի թէ հայ ժողովրդին եւ թէ զինուորին համար: Զինուորը հաւատացած էր ասոր, ու հետեւանքը այն եղաւ, որ Կարսի պարիսպներուն տակ ոեւէ կռիւ չմղուեցաւ...

Թերեւս առարկուի թէ հայկական սպայակոյտը պէտք էր գիտնար զինուորին այս տրամադրութիւնները: Բայց ասիկա բոլորովին անկարելի էր որովհետեւ զինուորական դաւաճանութան օջախ հանդիսացող Ալէքսանդրապօլի Ե. գունդն էր, որ ասկէ առաջ երկարատեւ ու դժուարին կռիւներէ վերջ գրաւած էր նախապէս Օլթիի ածխահանքերը: Ի՞նչպէս կարելի էր կասկածիլ, թէ նմանօրինակ յաջող գործունէութիւն մը կատարող գունդը կրնայ մէկ օրէն միւսը դաւաճանել»[16]:

2. Մեր ունեցած է թրքական արեւելում:

Ուշադիր՝ սա ասում է Ռուբէն Տէր Մինասեանի, քաղաքական, յեղափոխական մի գործչի մասին, ով, Մինաս Վերածնի վկայութեամբ, օսմանեան մի քանի դատարանների կողմից դատապարտուած է եղել 856 տարուայ ազատազրկման[17]:

Փորձենք ներկայացնել Ռուբէն Տէր Մինասեանի տեսակէտները «թրքական արեւելում» հեքիաթի կապակցութեամբ:

Ռուբէնը, 1913 թուականին, բալկանեան պատերազմի օրերին, որպէս կուսակցական գործիչ, այսպէս էր վերլուծում Թուրքիայի նախապատերազմական իրաւիճակը.

«Ռէֆորմներ... Տաճկաստանում յաճախ է հնչել այս կախարդական բառն ու ապագայ երջանիկ կեանքի ուրախ յոյսեր ներշնչել այդ երկրում տառապող, բազմատանջ ժողովրդներին:

Ռէֆորները ոչ միայն տաճկին հպատակ զանազան ժողովուրդների երջանկութեան յոյսն են եղել, այլեւ հէնց իր տաճկական տէրութեան, նոյնիսկ տաճկաց գոյութեան ամենաէական հիմքն են կազմել:

Ամեն անգամ, երբ վտանգ է սպառնացել Տաճկաստանի գոյութեան, երբ «հիւանդ մարդու» վրայ անդամատութիւն կատարելու հարց է բարձրացել եւրոպական մեծ պետութիւնների մէջ, այն ժամանակ առաջ է մղուել ռէֆորմների քաղաքականութիւնը «հիւանդին» մահուան վտանգից փրկելու, «անդամատութեան մղձաւանջը» փարատելու համար»:

Այսպէս է եղել նաեւ երբ ներքին մեծ խռովութիւններ, ապստամբութիւններ են ծագել, երբ երկիրը արեան մէջ է լողացել, այսպիսի դէպքերում միայն խօսք է եղել մասնաւոր կամ ընդհանուր ռէֆորմների մասին, այն էլ արտաքին միջամտութեան, օտարների վախի ազդեցութեան տակ:

Ռէֆորմների տեսակէտից Տաճկաստանի վերջին դարու պատմութեան մէջ շատ պարզ կերպով աչքի է ընկում այն հանգամանքը, որ ռէֆորմները մի միջոց են եղել այն էլ մեծ մասամբ խաբուսիկ միջոց, թէ՛ շահագրգռուած օտար պետութիւններին, թէ՛ Տաճկաստանի վերածնութեան համար մարտնչող տարրերին եւ թէ՛ բոլորին բաւարարելու, հանգստացնելու կամ աւելի ճիշտ՝ բոլորին քնացնելու: Այս պատճառով Տաճկաստանն այժմ ունի ռէֆորմների մի ամբողջ պատմութիւն, աւելի ճիշտ կը լինի ասել՝ ռէֆորմների մի ամբողջ քաղաքականութիւն, ուր մենք տեսնում ենք շատ անգամ փորձել են - անկեղծութեամբ թէ առ երես - ռէֆորմների միջոցով փրկել երկիրը արտաքին ներքին վտանգներից, վերածնել այդ դժբախտ աշխարհը, սակայն՝ այդ բոլոր ջանքերը չեն տուել սպասելի արդիւնքը եւ մինչեւ հիմա էլ նա տառապում է միեւնոյն ցաւով, չի բուժւում ու գնալով աւելի է հիւծւում, աւելի է մօտենում անդառնալի կորստեան»[18]:

Ռուբէնն այս տեսակէտը յայտնել է Բալկանեան պատերազմից (1912-1913 թթ.) անմիջապէս յետոյ, երբ Օսմանեան կայսրութեան պարտութիւնը պարարտ հող պատրաստեց Հայկական հարցի նոր արծարծման եւ ցարական կառավարութեան գործուն մասնակցութեամբ հայկական «ռեֆորմների» հարցը վերստին միջազգային դիւանագիտութեան ուշադրութեան առարկայ դարձնելու համար: Նման պայմաններում ռեֆորմների քաղաքականութիւնը «խաբուսիկ» համարող, եւ Թուրքիային «անդառնալի կորստեան» սեմին տեսնող քաղաքական գործիչը, տրամաբանօրէն, չէր կարող ունենալ «թուրքական արեւելում»:

Հետագայում էլ, որպէս ՀՀ ռազմական նախարար, Կարսի անկումից օրեր անց, իր 1920 թ. նոյեմբերի 19 թուակիր, հրամանում Ռուբէնը շեշտում էր. «Հայ զինուոր, հայ սպայ միթէ չէք հասկանում, որ այս պայմաններն ընդունել նշանակում է ամբողջովին զինաթափ լինել եւ ամբողջ ցեղով յանձնուել տաճիկների ձեռքը, որոնք այս վերջին տարիների ընթացքում մէկ ու կէս միլիոնից աւելի հայեր կոտորեցին: Այդ նշանակում է, որ մեր հայրերի կանանց ու երեխաների արիւնով կշտացած տաճիկ փաշաները այդ միջոցներով խաբում են մեզ եւ ցանկանում իսպառ բնաջնջել հայութեան վերջին մնացորդները-կործանել Հայաստանը: Տաճիկի հետ հաշտուելու միակ միջոցը ԿՌԻԻՆ է միայն...»[19]:

Իսկ 1928 թ., երբ Ռուբէն Տէր Մինասեանն արդէն ՀՅԴ Բիւրոյի անդամ էր, իր վերլուծական յօդուածներից մէկում այսպէս է եզրակացնում.

«...Թուրքիան վտանգ է,- գրում էր նա,- ծանր լէշ մը, որ կրնայ իր ծանրութեամբ խեղդել մեզ նման փոքրները: Գարշահոտ լէշ մը, որ իր քայքայումով կրնայ վնասել աշխարհին. արդէն այս է որ կընէ նոր Թուրքիան իր կէս բոլշեւիզմով, կէս թուրանիզմով, կէս իսլամիզմով: Այս լէշի վերջնական թաղումէն ետք միայն վտանգը հնարաւոր է չքացած նկատել:

Թուրք մտայնութեան, թուրք ղեկավարութեան թաղումը անհրաժեշտ է թէ՛ թրքութեան եւ թէ՛ մարդկութեան օգտին համար: Ասոր պէտք է ձգտիլ ամէն գնով: Բայց ասկէ չպիտի եզրակացնել եւ իյնալ այն սխալին մէջ, թէ այդ հնարաւոր է միմիայն թուրքերու ֆիզիքական բնաջնջումով: Այդ կարելի չէ եւ անհրաժեշտ ալ չէ»[20]:

Ռուբէնն իր այս վերջին եզրակացութեամբ, փաստօրէն պատասխանել է նաեւ Շահան Նաթալիի այն անմարդկային, շովինիստական եւ ոճրագործական

նախագծին, որը Նաթալին առաջարկում էր կուսակցութեանը՝ Թուրքիայի ջրային ռեսուրսները (ջրամբարները, գետերը) թունաւորելու ուղղութեամբ[21]:

«Թուրքը վնասակար տարը ըլլալէ կը դադրի, երբ անոր մէջէն հանուին ծուլութեան, պորտաբուծութեան, բարազիդիզմի ախտերը,- շարունակում է Ռուբէնը,- երբ այդ ժողովուրդը դադրի հոգեբանօրէն ոստիկան, բանակ-ժողովուրդ ըլլալէ, երբ անոր լէշին տակէն ազատուին միւս ժողովուրդները իրենց երկիրներով: Թուրքիան մնացեր է յետադէմ, որովհետեւ ան շահագործեր է ուրիշներու միտքն ու նախաձեռնութիւնը, աշխատանքն ու քրտինքը, ան մնացեր է յաւիտենական բարազիտ, ան եղեր է Աստուծոյ պատիժը ժողովուրդներու համար, որովհետեւ այդ ժողովուրդները ունեցեր են ծանր յանցանքը ստրկութեան եւ անմիաբանութեան:

Երբ Թուրքիոյ մէջի եւ շրջապատի Առաջաւոր Ասիոյ ժողովուրդները գիտակցին իրենց շահերուն, երբ բոլորն ալ ձգտին իրենց ազատութեան՝ առանց այդ ձգտումը ծառայեցնելու երրորդի ստրկացման, երբ իւրաքանչիւրը ջանայ իր վաստակին տէրը ըլլալ, թուրքը կը չեզոքանայ եւ կը դադրի, հոգիով ու մտքով, նախկին թուրքը ըլլալէ»[22]:

Եւ ահա աւելի ուշ, ՀՅԴ բիւրոյի անդամ Ռուբէնի պատմա-քաղաքական տեսակէտները «թրքական արեւելման» մասին, գրառուել են 1940-ականներին եւ հրապարակուել 1946 թուականին.

«Սահմանափակելով մեր դիտողութիւնները միմիայն Թուրքիոյ արեւելեան նահանգներու ժողովուրդներու վերաբերմունքին շուրջ, կը տեսնենք մօտիկ անցեալի պատմութենէն, որ Լազիստանը, Քիւրտիստանը եւ Հայաստանը փորձած են ամէն կերպ համակերպիլ թուրք գերիշխանութեան, օժանդակել անոր իբրեւ հաւատարիմ քաղաքացի, չխանգարել անոր ծրագիրները եւ նոյնիսկ հրաժարիլ իրենց մարդկային իրաւունքներէն, միայն թէ իրենց ֆիզիքական գոյութիւնը չվտանգուէր: Բայց այդ ջանքերը ապարդիւն մնացած են»[23]:

Բերենք նաեւ Ռուբէնի եզրայանգումը, նոյն գրառումից. «Այսպէսով Թուրքիոյ բաղկացուցիչ լազ, քիւրտ, հայ ժողովուրդներու համար թրքական համակրութեան եւ անոր հետ զործակցութեան բոլոր հաւանականութիւնները չքացած են եւ դառնօրէն փորձուած այդ վարքագիծը նորէն փորձելը անհնարին է, քանի չէ յեղաշրջուած Թուրքիոյ մտայնութիւնը, քանի բռնատիրական ոգին կը տիրապետէ անոր մէջ: Այս յուսաբեկումը այդ ժողովուրդները մղած է մէկ կողմէ դէպի օտար ուժերը, իսկ միւս կողմէ՝ ազգային վերազարթնումը»[24]:

1945 թ. սեպտեմբերին Լոնդոնում գումարուեց Երկրորդ աշխարհամարտում յաղթող դաշնակիցների արտգործ նախարարների խորհրդաժողովը, որին Ռուբէն Տէր Մինասեանն ուղարկել է Հայկական Հարցի մի յուշագիր:

Ռուբէնի դիւանագիտական այս քայլը մոլեգին է ընդունուել եւ բուռն հակադրադարձ է ունեցել Թուրքական մամուլում: Այս մասին գրել է «Ժամանակ» օրաթերթը. «ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՐԲԱՋԱՆՔ ՄԸ,

Շահան Նաթալի

ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ ԱՆՈՒՆ ՀԱՅ ՄԸ ՅՈՒՇԱԳԻՐ ՄԸ ՅՂԵՑ ՀԻՆԳԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ, ԹՈՒՐՔԻԱ ՅԱՓՇՏԱԿԵՐ Է ԱՅՆ ՀՈՂԵՐԸ ՋՈՐՍ ՈՒԻԼՍԸՆ ԽՈՍՏԱՑԱԾ ԷՐ ՀԱՅԵՐՈՒՆ ԵՒ ՋԱՆՈՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ Է ԵՂԵՐ, «Թասվիր»[25] այս խորագրերով կը հրատարակէ Երուսաղէմի ձայնասփիւռին տուած հետեւեալ լուրը. ԵՐՈՒՍԱՂԷՄ.- Տէր Մինասեան անուն հայ ներկայացուցիչ մը յուշագիր մը տուաւ Լոնտոնի մէջ գումարուող հինգ արտաքին նախարարներու Խորհրդաժողովին: Այս յուշագրին մէջ կը պնդուի, որ Թուրքիա բռնաբարած է Սեւրի դաշնագիրը եւ Հայերին յափշտակած այն հողերը, զորս Ամերիկայի հանգուցեալ Հանրապետութեան նախագահ Ուիլսըն խոստացած էր Հայերուն: Յուշագիրը կը պահանջէ այս հողերը վերադարձնել անկախ Հայաստանին»:

Թուրքական արեւելեան հեքիաթը, եթէ դոյզն-իսկ չափով իրականութեանը մօտ լինէր, Ռուբէնն առհասարակ նման յուշագիր չպէտք է պատրաստէր եւ ուղարկէր հինգի խորհրդաժողովին, եւ թուրքական հեղինակաւոր թերթը դժուար թէ նման վայնասուն բարձրացնէր նրա հասցէին:

3. ՀՅԴ Պոսթոնի «Հայրենիք» ամսագիրի 1930-ականներու թիւերուն մէջ սիոնիստական շարժումը գովաբանող յօդուածներ հրապարակած է:

20-րդ դարի առաջին կէսին, յատկապէս Բալֆուրի 1917 թ. ծանօթ հռչակագրի հրապարակումից յետոյ, սիոնիստական շարժումը գտնուում էր աշխարհի քաղաքական գրեթէ բոլոր ուժերի եւ ուժական կառոյցների ուշադրութեան կիզակէտում:

Սիոնիստական շարժման ղեկավարներն ու տեսաբաններն իրենց հրապարակային ելոյթներում ակնածանքի ու համակրանքի խօսքեր էին շռայլում հայութեան եւ նրա ազգային ազատագրական պայքարի հասցէին: Սրա պերճախոս օրինակն է՝ սիոնականութեան ղեկավար՝ Հայիմ Վայզմանի, 1919 թ. Երուսաղէմ այցելութեան ժամանակ արտասանած, ճառախօսութեան հետեւեալ հատուածը.

«Հիւսիսային հայ ազգին, որն այս պահին ամենաարիւնալի հատուցումն է տալիս դաժան թշնամուն, յաղթականօրէն կը բարձրանայ արդարութեան եւ խաղաղ ապրելու իրաւունքի պահանջատիրութեան այն հողի վրայ, որը ողողուած է իր լաւագոյն զաւակների արիւնով-ասել է Վայզմանը, - Այս ազգի համար մեր սրտերը ցաւում են, եւ մենք զգում ենք, որ այս երեք ազգերը՝ արաբները, հրեաները եւ հայերը, որոնք ամենաշատն են տուժել աշխարհում, ունեն, թերեւս, բոլոր ազգերից ամենահնչեղ պահանջը սեփական կեանքի, Ազատութեան եւ խաղաղ զարգացման համար: Ճակատագիրը ընտրել է այս երեք ազգերին, որպէսզի պահպանեն հին աշխարհի դասական դարպասը Թուրանեան հորդաներից, որոնք զինուած են ժամանակակից աւերիչ զէնքերով, եւ որոնք կազմակերպւում են իրենց տէրերի կողմից»[26]:

Իսկ հայ իրականութեան մէջ, ճակատագրական որոշ նմանութիւնների եւ պատմաքաղաքական ընդհանուր իրադարձութիւնների լոյսի տակ, ո՞ր քաղաքական, ո՞ր հասարակական ու նոյնիսկ ո՞ր կրօնական հոսանքը կամ դրանց կապող, կամ անկախ գործիչը, վերլուծաբանը կամ լրատուամիջոցը չէր հետաքրքրւում տուեալ շարժումով:

Այս առումով, ցանկանում ենք նախ մէջ բերել մի շարք կարեւոր օրինակներ, ապա դրանք համեմատել Ռուբէն Տէր Մինասեանի մօտեցումների հետ.

Հայկակ Խազոյեան

Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան բազմամեայ ղեկավար՝ Վերապատուելի Հայկակ Խազոյեանը (1871-1940 թթ.) թերեւս առաջին հայ քաղաքական գործիչներից է, որ Բալֆուրի յայտարարութեան առիթով առնչուել է սիոնիստական շարժմանը: Այս մասին ուշագրաւ տեղեկատուութիւն է հանդիպում հրեական «Yidishes tageblatt» անգլիալեզու օրաթերթում, 1917 թ. նոյեմբերին, որն էլ ստորեւ բերում ենք ամբողջապէս. «Դաշնակից կառավարութիւնների կողմից Պաղեստինում հրէական հայրենիքի ստեղծումը նշանակում է բազմաչարչար հայ ժողովրդի ազատագրում: Մեր յոյսերը կապուած են Դաշնակիցների գործերին, եւ այս պատերազմը մեզ համար կեանք կամ մահ է նշանակում: Եթէ դաշնակիցները յաղթեն, մեր ցեղը կապրի: Հայերը, ինչպէս նաեւ հրեաները, կռուում են դաշնակիցների բանակներում՝ իմանալով, որ դաշնակիցների հարցն իրենց հարցն է: Մենք հայերս, նոյն շահերն ունենք, ինչ հրեայ ժողովուրդը: Մենք կրել ենք նոյն հալածանքները եւ նոյն աւարտին ենք ձգտում հասել: Մենք նոյնքան գոհ ենք տեսնելով, որ հրեայ ժողովուրդը ստանում է իր իրաւունքները, որքան մենք՝ մերը ձեռք բերելու համար»:

«Այս յայտարարութեամբ,- գրում է «Yidishes Tageblatt»-ը,- պարոն Խազոյեանը երկրորդեց Լոնդոնի հայկական միութեան կարծիքը, որը նամակով ուղարկել էր առանձին լորդ Ուոլթեր Լայոնել Ռոթշիլդին՝ Անգլիայի Սիոնիստական Ֆեդերացիայի փոխնախագահին, եւ որը ուղղում է նրան ու ողջ աշխարհի բոլոր սիոնիստական առաջնորդներին ու կազմակերպութիւններին՝ շնորհաւորում եւ գոհունակութիւն յայտնում հրէական ազգութեան ճանաչման եւ արդար ու անօտարելի պահանջի՝ հրեայ ժողովրդի պատմական հողի եւ նախնիների երկիրի կապակցութեամբ»[27]:

Միհրան Սվազլը

Սկզբից հնչակեան, ապա վերակազմեալ հնչակեան եւ վերջում ՌԱԿ-ի ղեկավարներից՝ Միհրան Սվազլը (?-1936 թթ.) նոյնպէս մեծ հետաքրքրութեամբ էր շնորհաւորում սիոնիստական շարժմանը՝ Բալֆուրի յայտարարութեան եւ Երուսաղէմի ազատագրման կապակցութեամբ, 1917 թ.: Սվազլը, իր ղեկավարած՝ «Ամերիկայի Հայ Ազգային Միութեան» անունից հեռագրել էր «Ամերիկայի Սիօնիստների գործադիր մարմնին» հետեւեալը տեքստը. «Երուսաղէմ Ս. քաղաքին թրքական գերութենէն ազատման առթիւ Ամերիկայի Հայ Ազգային Միութիւնը կը փափաքի յայտնել ձեզի եւ ձեր միջոցով աշխարհի բոլոր իսրայէլացիներուն, իր ամենէն անկեղծ մաղթանքները ձեր մեծ ցեղին շուտափոյթ վերահաստատութեան համար ձեր նախահայրերու փառաւոր հայրենիքին մէջ»[28]:

Վերոյնշեալ հեռագրին «Ամերիկայի Սիօնիստների գործադիր մարմնի» քարտուղարը պատասխանել է այսպէս. «Պարոններ, Ինձի մեծ հաճոյք կը պատճառէ ներկայացնել ձեզի հետեւեալ որոշումը, որ քուէարկուեցաւ Սիօնիստներու արտակարգ համագումարին մէջ, որ տեղի ունեցաւ Պալթիմորի մէջ, դեկտեմբերի 16, 1917 թ.: Ամերիկեան Սիոնիստներու այս համագումարը իր երախտալից գնահատութիւնը կը յայտնէ այն հաղորդագրութիւններուն համար, զորս ընդունեց այս երկրի եւ թէ արտասահմանի հայ կազմակերպութիւններէն, ի մասին այն յայտարարութեան, զոր անգլիական կառավարութիւնը ըրաւ ի նպաստ հրէայ ժողովուրդին Պաղեստինի մէջ բնավայր մը ունենալուն, եւ կը յուսայ թէ ազատագրական այս պատերազմին որպէս հետեւանք, հայ ժողովուրդը պիտի հասնի իր ազգային նպատակներուն»[29]:

Շահան Նաթալի

1917 թուականի դեկտեմբերին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ԱՄՆ Կենտրոնական Կոմիտէն, Շահան Նաթալիի (1884-1983 թթ.) գլխաւորութեամբ, նոյնանման շնորհաւորանքներ է փոխանցել սիոնիստական կազմապերպութեանը: Առանձին հեռագրում հետեւեալն է ասւում. «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէն, որ 27 տարիներէ ի վեր նուիրուած է հայ ժողովուրդին թրքական նողկալի լծից ազատելու գործին, շտապում է ձեզ, եւ ձեր միջոցով աշխարհի հրեաներին, ներկայացնել Երուսաղէմի ազատագրման համար եղբայրական շնորհաւորութիւնները: Մենք լիայոյս ենք, որ շատ մօտ ապագայում մեր երկու քոյր ազգերը կրկին հնարաւորութիւն կ՚ունենան ստանձնելու քաղաքակրթարար դերը Մերձաւոր Արեւելքի աւերակների վրայ:

Օսմանեան կայսրութիւնը, աւերածութիւններից բացի, ոչինչ չի կատարել այս հողերում, որոնք քաղաքակրթութեան օրրանն էին»[30]:

Նշենք, որ ՀՅԴ Բոստոնի ԿԿ-ի սոյն շնորհաւորանքը իր տեսակի մէջ իւրօրինակ է եւ եզակի, սրանից բացի չկայ ուրիշը, օրինակ՝ ՀՅԴ արեւելեան կամ արեւմտեան Բիւրոների կամ «Դրօշակ» պաշտօնաթերթի կողմից շնորհաւորական որեւէ գրութիւն ուղղուած սիոնիստական մարմիններին կամ ժողովներին:

Բերթա Փափազեան

Հրապարակագիր, լրագրող, վերը նշուած «Ամերիկայի Հայ Ազգային Միութեան» ղեկավար ակտիւիստներից՝ Բերթա Սուլլիուան Փափազեանը, 1919 թուականին, նոյն միութեան օրգան՝ «The Armenian Herald» հեղինակաւոր անգլիատառ թերթում գրում էր.

«Սիոնիզմի առաջընթացն ամբողջ աշխարհում դիտւում է խորը հետաքրքրութեամբ եւ համակրանքով բոլոր նրանց կողմից, ովքեր հաւատում են անսասան վարդապետութեանը, որով փոքր ազգերը, անկախ նրանից, թէ կախուած են կամ ոչ, պէտք է պաշտպանուած լինեն գոյութեան եւ ազատ զարգացման իրենց իրաւունքով: Հայերի եւ սիոնիստների յարաբերութիւնները համաշխարհային պատերազմի սկզբից ի վեր եղել են ջերմ եւ ժամանակի ընթացքում ամրապնդւում են: Գոյութիւն ունի նպատակների նոյնութիւն, շահերի ու իդէալների ընդհանրութիւն, որը պէտք է միաւորի սիոնիստներին եւ հայերին իրենց ճակատագրի այս սարսափելի ճգնաժամում: Նրանց սերտ համագործակցութիւնն այս պահին էական է: Նրանք ունեն ընկերներ եւ դաշնակիցներ ազատ աշխարհի ազգերում եւ ընդհանուր թշնամիներ, որոնց մեքենայութիւններին նրանք պէտք է յաղթեն»[31]:

Արամ Անտոնեան

Գրող, լրագրող եւ բազմաթիւ մենագրութիւնների հեղինակ, «Հայ ազգային ազատական միութեան» ղեկավար՝ Արամ Անտոնեանի (1879-1951 թթ.) խմբագրած «Հայաստան» շաբաթաթերթը հետաքրքրական տեղեկութիւն է հաղորդում, Հայաստանի անկախութեան դէ՛իւրէ ճանաչման կապակցութեամբ, սիոնիստական կազմակերպութեան յղած շնորհաւորանքի մասին, որը քաղուել է հեղինակաւոր «Le People Juit» թերթից: «Հաճոյքով,- ասվում է շնորհաւորագրում,- կը խնդակցինք հայ ժողովուրդին ու իր պետերուն, իրենց անկախութեան ճանաչման համար: Դարաւոր անլուր տառապանքներէ վերջ այս ժողովուրդը, որ երբեք չէ յուսահատած, անվթար պահած է իր ազգային զգացումը, եւ ամուր հաւատքը, որ զինքը ի վիճակի դարձուցած է պատեհ ժամուն Գերագոյն Խորհուրդէն պահանջել իր արդարութեան անկախութեան իրաւունքները: Թող ասիկա մեզի դաս մը եւ քաջալերութիւն մը ըլլայ: Ժողովուրդ մը չի մեռնիր երբ ապրելու կամքը ունի: Հայ ժողովուրդին կը մատուցանենք մեր եղբայրական ողջոյնները»[32]:

Վանատուր

«Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթի փարիզեան աշխատակից՝ Վանատուրը (ում բուն անունը պարզել չյաջողուեց մեզ) 1921 թ. այսպէս է գրում.

«Սիոնիսթները ունէին քաղաքական նպատակ մըն ալ. ազգային տուն մը ստեղծել ցրուած հրէութեան: Ասոր համար անոնք ընտրեցին տնտեսական եւ քաղաքական գործօններով ազդելու ճամբան: Իրենց ժողովուրդէն հաւաքած դրամները զէնքի եւ պօմպայի չյատկացուցին եւ երբ հրեաներու դէմ բօկրօմներ կ՚ըլլային, անոնք չըսին թէ այս է ճամբան արտաքին աշխարհի ուշադրութիւնը հրաւիրելու համար:

Մեր մէջ Հայ Բարեգործական Միութիւնը հիմնողները իրենց առջեւ ունէին Սիոնիսթներու գործելակերպը... Մենք նոր ուղիներ չենք կրնար հնարել: Ուրիշներու կողմէ գծուած եւ մեր մէջ ալ փորձուած ուղիներ կան: Ընտրենք անոնցմէ լաւագոյնը եւ հետապնդենք նպատակը: Սիոնիսթները մեզի համար կրնան օրինակ մը ըլլալ»[33]:

Միքայէլ Կիւրճեան

Արձակագիր, դրամատուրգ, ՌԱԿ-ի պաշտօնաթերթ «Արեւի» խմբագիր՝ Միքայէլ Կիւրճեանն (1879-1965 թթ.) իր խմբագրականներից մէկում, 1924 թ., գրում է. «Հրեաներ ունին իրենց սիոնական կազմակերպութիւնը, որուն տրամադրուած են նիւթական անսահման միջոցներ, եւ հանդարտօրէն ամիսէ ամիս միայն հազար գաղթական կ՚առաջնորդեն Պաղեստին ու կը տեղաւորէն զանոնք իրենց նախնիքներու հողին վրայ: Մենք ունինք մեր ՀԲԸ Միութիւնը, որմէ կ՚սպասենք շատ բան, կ՚սպասենք, որ ան ընդարձակ դեր մը կատարէ Հայաստանի վերաշինութեան եւ որբերու ու տարագիրներու անհրաժեշտ ու անյետաձգելի գործին մէջ, եւ սակայն այդ ուղղութեամբ տակաւին ներոյժ ճիգ մը կատարուած ու զօրաւոր կազմակերպութիւն մը ստեղծուած չէ, թէեւ մօտիկ ապագայի համար մենք մեծ յոյսեր կը տածենք:

Մեր ամենէն աչքառու պակասը, դժբախտաբար, անհամերաշխութիւնն է,- շարունակում է Կիւրճեանը,- հակառակ այն իրողութեան որ հայկական բոլոր հատուածները անխտիր կ՚ընդունին թէ մեր ժողովուրդի միակ յոյսն ու ապաւէնը Արարատեան աշխարհն է եւ ո՛չ ոք դէմ չէ մեր երկրի վերաշինութեան, մեր ժողովուրդի զարգացման ու թափառական գաղթականութեան հայրենի երկրին մէջ կեդրոնացման, եւ սակայն դարձեալ կը մնայ հայկական հատուած մը, կուսակցութիւն մը, որ հակառակ իր յայտարարութեանց, իր գործերով կը խանգարէ ազգային համերաշխութիւնը ու կը տկարացնէ մեր այն ձեռնարկները, որոնցմէ շատ բան կախում ունի մեր ապագային համար (ՌԱԿ-ի վաղեմի մեղադրանքը ՀՅԴ-ի հասցէին- Կ.Խ.): Այս կէտին մէջ է, որ հրեաներ կրնան մեզ իբր օրինակ ծառայել»[34]:

Օննիկ Վարդանեան

«Հայաստան» (Պուքրէշ կամ Բուխարեստ, 1915-1930 թթ.) շաբաթաթերթի խմբագիր՝ Օննիկ Վարդանեանն իր աշխատութեան մէջ հոռետեսութիւն է յայտնում առ այն, որ. «Գաղութահայութիւնը ցարդ չկրցաւ ունենալ, դժբախտաբար, ընդհանուր այնպիսի կազմակերպութիւն մը, որ, ինչպէս հրէաներու Սիոնիստական կազմակերպութիւնն է... Նման կազմակերպութիւն մը ստեղծելու ճիգեր ցարդ հանդիպեցան գիտակից կամ անգիտակից չկամութիւններու եւ չիրականացաւ:

Եւ հոգեբանական այն մթնոլորտին մէջ, որուն մէջ կապրի ներկայիս գաղութահայութիւնը, հազիւ թէ կարելի ըլլայ յուսալ նման մարմնի մը գոյութիւնը: Եւ եթէ նոյնիսկ ստեղծուի ալ, ես անհատապէս շատ լաւատես չեմ այդ մարմնի արդիւնաւէտ գործունէութեան եւ մանաւանդ անոր տեւական գոյութեան մասին, տրուած ըլլալով այն աղետալի մտայնութիւնը, որ արգելք եղած է մինչեւ այսօր նման կազմակերպութիւններու գոյառութեան եւ բարւոք գործունէութեան...

Այս տեսակէտով մենք շատ ետ կը մնանք մեզի բաղդակից հրեայ ժողովուրդէն, որ յանձին իր Սիոնիստական կազմակերպութեան, ունի տարիներէ ի վեր իր համազգային ամենաուժեղ մարմինը, որ հանդիսանալով ի սփիւռ աշխարհի տարածուած հրեայ բեկորներու ընդհանուր կապը, կ'աշխատի մէկ կողմէ պահել եւ տնտեսապէս ու կուլտուրապէս ուժեղացնել այդ բեկորները իրենց գտնուած երկիրներուն մէջ, միւս կողմէ՝ ներշնչել անոնց նոր, ազատ հրէական հայրենիքի մը գաղափարը, որ մասամբ արդէն իրականութիւն է այսօր»[35]:

Մարտիրոս Տէրպէտէրեան

Բազմաբնոյթ աշխատութիւնների հեղինակ Մարտիրոս Տէրպէտէրեանը փորձ է կատարել բնութագրել սիոնիզմի գաղափարախօսական եւ տեսական ակունքները. «Մարդասէր հրէաներ խորհեցան,- գրում է Տէրպէտէրեանը,- թէ կարելի չպիտի ըլլայ հակահրէութիւնն արմատախիլ ընել մոլեռանդ քրիստոնեաներու մէջ եւ թէ անհրաժեշտ է միջոց մը գտնել հրէաներուն հայրենիք մը ապահովելու համար:

Մովսէս Հէս եղաւ այդ գաղափարը թանձրացեալ ձեւով հրապարակ հանողը: Ան որդեգրեց Կարլ Մարքսի ընկերվարական գաղափարները եւ յայտարարեց, թէ ի շահ մարդկութեան անհրաժեշտ է որ ինչպէս իւրաքանչիւր անհատ, այնպէս եւ իւրաքանչիւր ազգ ի վիճակի ըլլայ իր բնատուր ձիրքերն իրենց մաքսիմումին հասցնելու: Քանի որ հրէայ ցեղն այնչափ նպաստած է քաղաքակրթութեան դատին, պէտք է, որ անոր կարելիութիւն տրուի այժմ ալ իր կարողութիւններն ի սպաս մարդկային յառաջադիմութեան ծառայեցնելու: Այս ձեւով՝ Հէսի ազգայնականութիւնը կը համաձայնէր Կարլ Մարքսի միջազգայնականութեան հետ եւ ծնունդ կուտար ապագայ սիոնիզմին»[36]:

Լեւոն Մկրտիչեան

ՌԱԿ պաշտօնաթերթ՝ «Արեւի» խմբագիր՝ Լեւոն Մկրտիչեանը, հիացմունքով է գրում սիոնիստական աշխատանքների մասին. «Սիօնական կազմակերպութիւնը մեծ հոգ կը տանի նաեւ հանրային կրթութեան եւ ազգային մշակոյթին: Համալսարանէն զատ, որ նոր հիմնուեցաւ, հրեաները Երուսաղէմի մէջ ունին երկրորդական վարժարաններ, ուր մեծ զարկ կը տրուի եբրայերէն լեզուի տարածման...

Ուշիմ եւ աշխատասէր ժողովուրդ մը, որպիսին է հրէան, մարդկային գործունէութեան բոլոր մարզերուն մէջ ալ հաւասարապէս կրնայ յաջողիլ: Անոնք որ այս մուրը քսեցին հրէաներու ճակտին՝ թո՛ղ հրամմեն Պաղեստին եւ տեսնեն թէ այս օժտուած ցեղը ինչպէս կը մշակէ հողը եւ ինչ կատարելագործութեան կը հասցնէ մշակութիւնը...

Ու ես վստահացած եմ որ Պաղեստին պիտի դառնայ Հրէից իսկական Ազգային Տունը, պայմա՛նաւ սակայն, որ Անգլիոյ հոգատարութիւնը տեւական ըլլայ այնտեղ, զի առանց այդ պայմանին՝ կրօնական մոլեռանդութեան պոռթկում մը կրնայ ամէն ինչ քանդել»[37]:

Կարօ Գէորգեան

ՀՅԴ մտաւորական, գործիչ, «Ալիք», «Հորիզոն», «Տարագիր», «Կսմիթ», «Նոր օր» եւ «Ամէնուն տարեգիրք» պարբերականների խմբագիր, արտօնատէր՝ Կարօ Գէորգեանը (1895-1975 թթ.) այսպէս է վերլուծում 1933 թուականին սիոնական շարժման ներքին հոսանքները.

«Հրէական դատը շրջապատող արտաքին ազդակները բաւական զօրաւոր են դանդաղեցնելու եւ դժուարացնելու համար սիոնական ծրագիրներու իրականացումը: Անգլիան, ի նպաստ Հրեաներու առնուելիք որեւէ քայլի առթիւ, ստիպուած է հաշուի առնել արաբ բնակչութեան ընդդիմութիւնը, որ ուղղակի թշնամական կերպարանք մը առաւ վերջին տասնամեակի ընթացքին: Իսկ, այնքան ատեն որ կայ այս ընդդիմութիւնը, սիոնականները, չափաւոր ըլլան անոնք թէ ծայրայեղ, ստիպուած են ջուր խառնել իրենց գինիին մէջ, ունենալ սպասողական վիճակ եւ մասնակի ճիգերով միայն բաւարարուիլ: Այլապէս, հակառակ որեւէ ընթացք, կրնար լուրջ փորձանքներու ենթարկել հրեայ տարրը, Պաղեստինի մէջ» [38]:

Արտաշէս Գալփաքճեան

Լրագրող, հրապարակախոս, տնտեսագէտ, «Բիւրակն», «Ժամանակ», «Առեւտուր», «Վաստակ», «Լուսարձակ» եւ «Վերջին լուր» պարբերականների խմբագիր՝ Արտաշէս Գալփաքճեանը (?-1942 թթ.) դեռ 1935 թ. այսպէս է բնութագրում սիոնիզմի կազմակերպական ուժը. «Լորտ Պալֆուրի զեկոյցով սիօնիսթները իրենց նպատակին հասան: Հրեաները 1920-ին, անգլիական հոգատարութեան ներքեւ Պաղեստինի մը տիրացան՝ բնիկ արաբները գոհացնելու պայմանով: Եւ հրեաները հոն հաստատեցին իրենց ազգային տունը, եւ ոչնչէն հիմնեցին Թէլաւիւ քաղաքը, որով կրնան բոլոր աշխարհի առջեւ պարծանքով յայտարարել, թէ իրենք ստեղծագործ այնքան մեծ ուժ ունին:

Սիոնիսթ կազմակերպութիւնն իր ուժով մէկ ճիւղը ունի կամ ունէր Գերմանիոյ մէջ: Նպատակն էր Գերմանիոյ մէջ ծնած հրեայ տղոց ազգային ոգի ներշնչել, զանոնք ձուլումի վտանգէն ազատելու համար:

Սիօնիզմը՝ պետութիւն մը չէ. բայց ուժով կազմակերպութիւն մըն է: Սիօնիսթ հրեաները՝ աշխարհի չորս կողմը ցրուած, իրենց գտած դիրքերով, ապահովաբար կրնան Գերմանիան նեղել դուրսէն Բերմանսէսի նման պոյքոթներով, գերմաններ պզտիկ կամ մեծ չափով տագնապի մատնել: Ով գիտէ ինչեր որոշուեցան Լուցերնի այս համաժողովին մէջ»[39]:

«Բանւոր» օրաթերթ

Տուեալ ժամանակաշրջանում Հրէական հարցը յուզում էր նոյնիսկ բոլշեւիկներին: Ամերիկահայ կոմունիստների պաշտօնաթերթ «Բանւոր» օրաթերթը այս կապակցութեամբ գրում է.

«Պատմութեան հեռաւոր եւ մօտաւոր անցեալին քիչ թէ շատ ծանօթ ոեւէ մէկը գիտէ, որ ամբողջ աշխարհի մէջ ամենէն շատ տանջուած ու հալածուած ժողովուրդներէն մէկը եղած է հրեայ ժողովուրդը: Նախայեղափոխութեան շրջանին, ցարական Ռուսաստանի մէջ հրեայ ժողովուրդը ենթարկուած էր աննկարագրելի թշուառութեան եւ տանջանքի: Ջանգուածային ջարդերը, պոկրոմներն ու քաղաքական ամեն տեսակի սարսափները շարունակ կախուած էին անոր գլխուն դամոկլեան սուրի մը պէս: Այսօր, հիթլերական Գերմանիոյ մէջ, հրեայ ժողովուրդին վրայ գործադրուած բարբարոսութիւնները կ'ըմբոստացնեն դատող եւ մտածող ամեն մարդու խիղճը: Դրամատիրական ամենէն դեմոկրատիկ երկիրներու մէջ անգամ, օտարածիններու՝ ազգային փոքրամասնութիւններու դէմ կազմակերպուած հալածանքի առաջին զոհն ըլլալու ենթակայ է հրեայ ժողովուրդը... Չկա դրամատիրական երկիր մը, ուր հրեայ ժողովուրդը ենթակայ չըլլա հալածանքի եւ խտրութեան, առաւել կամ նուազ չափով...»[40]:

Միհրան Տոլմաճ

ՀԲԸՄ ամերիկեան կառոյցների հիմնադիր եւ 1940-50-ականների ղեկավար՝ դոկտ. Միհրան Տոլմաճը, ՀԲԸՄ-ի Վաշինգտոնի մասնճիւղի հիմնադրութեան 25-ամեակի կապակցութեամբ իր ուղերձում, համեմատելով ՀԲԸՄ-ն «Ալիանս Իսրայէլիթ»-ի հետ, հաստատում է.

«Շատ հաւանական է որ ձեզի ծանոթ է «Ալիանս Իսրայէլիթ» կոչուած Հրէական Միութիւնը, որ կը սատարէ աշխարհի ամէն կողմերը գտնուող կարօտ հրեաներուն, մինչեւ իսկ անոնց փոքրիկ դրամագլուխ կը հայթայթէ, որպէսզի ինքնապահ ըլլան: Հայկական Բարեգործականն ալ մեր Ալիանսն է եւ իր համեստ միջոցներով կ'օգնէ մեր ցրուած ազգակիցներուն, կը հայթայթէ անոնց հաց, հագուստեղէն, եւ բնակարան, կը կրթէ անոնց փոքրիկները՝ տալով անոնց զուտ տոհմային կրթութիւն եւ այսպէսով կը սատարէ անոնց երջանկութեան»[41]:

Գարեգին Ամատեան

Բժիշկ, պատմաբան, աշխարհագրագէտ, մանկավարժ, հրապարակախօս, բանաստեղծ, գրող եւ հասարակական հեղինակաւոր գործիչ, «Հայաստանի Օգնութեան Կոմիտէ»-ՀՕԿ-ի կոմունիստական կառոյցի ակտիւիստ, հնչակեան եւ ռամկավար թերթերի աշխատակից՝ Գարեգին Ամատեանը (1895-1975 թթ.), Երկրորդ աշխարհամարտի աւարտին, վեր է հանել սիոնականութեան առաւելութիւնները, եւ գրել.

«Վերջերս Նախագահ Թրումէն յուշագրով մը Անգլիական կառավարութենէն կը պահանջէր, որ Հրեաներուն 100.000 մուտքի վիզա տրուի Պաղեստինի համար: Ինչո՞ւ Ամերիկայի նախագահը ատոր մէկ քառորդը չի պահանջէր թափառական տաճկահայ բեկորներուն համար՝ Թուրքիայէն, Թրքահայաստանի մասին: Մենք հրեաներուն կիսուն (կիսով???) չափ չենք կրնար պաշտպանել մեր նուիրական դատը եւ չենք կրնար արժեցնել մեր իրաւունքները: Չենք համարձակիր աշխարհի մեծերուն ըսելու, որ մեզի զրկանք եւ անիրաւութիւն եղած է, որ մեզի հանդէպ խոստումներ ունիք, յանձնառութիւններ ըրած էք, անոնց գործադրութիւնը կը պահանջենք...

Մեզի նման ազգ մը այսքան կորուստներէ եւ զրկանքներէ ետք, ինչո՞ւ հրեաներուն նման ասպարէզ չիջնէ եւ աշխարհի մեծերուն երեսին չպօռայ, հող կ'ուզենք հայրենիք կ'ուզենք, մեր պապերուն երկիրը կ'ուզենք եւ մեզի եղած խոստումներուն գործադրութիւնը կը պահանջենք...»[42]:

Լեւոն Մօզեան

Գրող, հրապարակագիր, ՀՅԴ անջատողական՝ «մարտկոցական» հոսանքի ակտիւիստ՝ Լեւոն Մօզեանը (1890-1958 թթ.) դարձեալ համեմատական վերլուծութեամբ է փորձում բնորոշել սիոնական շարժման միստիկական ուժն ու հեղինակութիւնը: «Հրեաները,- գրում է Մօզեանը 1952 թ.,- մարդկութեան տուած են, բացի մարգարէներէն՝ կրօնքի երկու հիմնադիրներ, եւ նաեւ այնպիսի մեծ ու համաշխարհային դէմքեր, որոնք մարդկային պատմութեան արդի ուղղութիւնը գծեցին, եւ անոնցմէ իւրաքանչիւրը իր կալուածին մէջ, այնպիսի ձգողութիւն մը առաջ բերաւ, որ բազմաթիւ սերունդներու ընկերային, քաղաքական եւ գիտական սնունդը տուաւ: Միջազգային ընկերվարութիւնը հրէական մտքի ծնունդ է (Մարքս), բրիտանական էմփէրիալիզմը նոյնպէս (Տիզրայէլի), ոգեպաշտ բնազանցութիւնը (Պէրկսոն), յարաբերականութիւնը բնագիտութեան մէջ (Այնշթայն), եւ հոգեբուժութիւնը (Ֆրոյտ): Այս բոլոր համաշխարհային բնոյթ ունեցող շարժումներուն հեղինակները հրեաներ են:

Համապատասխան ի՞նչ դիրք ձեռք բերած ենք հայերս, կամ ի՞նչ միջազգային դէմքեր տուած ենք մարդկութեան: Այս հարցումներն իսկ ծիծաղելի կը դարձնեն մեզ: Հետեւաբար, եզրակացնենք: Ո՛չ մէկ նմանութեան եզր ունի մեր եւ հրեաներու կացութիւնը, որով հիմնական սխալ է անոնց օրինակին վրայ չափելով, ծոյլ լաւատեսութեան մէջ իյնալ եւ սին պատրանքներ սնուցանել»[43]:

Օնսիկ Քեշիշեան

ԱՄՆ Փասատենայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու Աւագ քահանայ, նկարիչ, «Արեւ» օրաթերթի աշխատակից, «Շողակաթ» եւ «Մրգաստան» պարբերականների խմբագիր՝ Թաթուլ Երէցեանը (աւազանի անունով՝ Օնսիկ Քեշիշեան, 1902-?), 1955թ. ՀԲԸՄ Փասատենայի Մասնաճիւղին տարեկան Ճաշկերոյթի ընթացքին, իր ելոյթում զուգահեռներ է անցկացրել ՀԲԸՄ-ն եւ հրէական Սիոնիզմի (Ալիանս Տ'Իզրայէլ) եւ Բարեգործականի միջեւ[44]:

Գէորգ Աճեմեան

Գրականագէտ, հրապարակագիր, խմբագիր, «Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակ»-ի (ԱՍԱԼԱ) համահիմնադիր՝ Գէորգ Աճեմեանը (1932-1998 թթ.), նոյնպէս օրինակելի է համարել քաղաքական պայքարում հրեաների ծրագրաւորուածութիւնն ու հետեւողականութիւնը: Նա 1967 թ. իր վերլուծական ընդարձակ յօդուածում, նախ հրեաներին ներկայացնելով, որպէս հայատեաց եւ հայութեան նկատմամբ «շատ աւելի վտանգաւոր» եւ «շատ աւելի ծանր հետեւանքներ» ունեցող քան թուրքերը,

այնուամենայնիւ ուսանելի եւ օրինակելի է համարում հրէական կազմակերպուած միտքն ու քաղաքական պայքարառնը:

Հրեան աւելի կ'ատէ հայը քան Արաբները:- Գրում է նա,- Թուրքին պարագան նորութիւն չէ, բնական է: Բայց նորութիւն չէ նաեւ հրեաներունը, որոնց խաղացած դերը շատ աւելի վտանգաւոր է եւ կրնայ շատ աւելի ծանր հետեւանքներ ունենալ (եւ ունեցած է անցեալին մէջ), եթէ նկատի ունենանք անոնց աշխատելու կազմակերպուած եղանակն ու միջազգային տարողութիւնը: Ասոր լաւագոյն փաստը՝ անոնց մեզի նկատմամբ վարած քաղաքականութեան մասին մեր տգիտութիւնն է:

Այս է կացութիւնը դժբախտաբար:- Շարունակում է Գէորգ Աճեմեանը,- Հրեաները հարիւրաւոր տարիներ առաջ պատրաստուած ծրագիրներու պտուղը կը քաղեն ու կը շարունակեն հետեւողականօրէն ծրագրել յառաջիկայ հարիւրաւոր տարիներու ընթացքին իրենց կիրարկելիք քաղաքականութիւնը, մինչ մենք կը յօրանջենք: Անոնք թափանցած են ու կը շարունակեն թափանցել բոլոր երկիրներու բոլոր խաւերէն ներս՝ տարածելով իրենց ազդեցութիւնը եւ անուղղակիօրէն ծառայեցնելով բոլորը հրեայ ժողովուրդի յաւերժացման գաղափարին: Իսկ մենք կ'այլասերինք, կը կոտորակուինք ու կը զիջինք՝ միշտ յօրանջելով»[45]:

Ճէյմզ Գառնուզեան

Իսրայէլի պետութեան հիմնադրումից եւ հրեայ ժողովուրդի այսպէս կոչուած՝ «ազատագրութիւն»-ից տարիներ անց, երբ արդէն սիոնիզմը գործնականում ապացուցել էր իր ռասիստական, թթու ազգայնական եւ ուլտրա-շովինիստական բնոյթն ու էութիւնը, հայ իրականութեան մէջ տակաւին գտնուեցին գործիչներ եւ կազմակերպուած շրջանակներ, որոնք շարունակում էին ճակատագրի զուգահեռներ գծել՝ հայ եւ հրեայ ժողովուրդների՝ հայ ազատագրական շարժման եւ սիոնիզմի միջեւ:

Սրանց շարքին է՝ «Առաջին Հայկական Համագումար»-ը (Փարիզ, 1979 թ. սեպտեմբերի 3-6), եւ «Երկրորդ (Բ) Հայկական Համագումար»-ը (Լոզան, 1983 թ. յուլիսի 20-24): «Հայկական Համագումար»-ի բուն գաղափարը պատկանում էր հոգեւորական, հրապարակագիր, ԱՍԱԼԱ-ի միւս համահիմնադիր՝ վերապատուելի Ճէյմզ Գառնուզեանին (1926-1998 թթ.), որ առաջարկի տեսքով արծարծուել է նրա «Վերադարձ դէպի Այրարատեան լեռնաշխարհ» աշխատութեան մէջ (գրուել է 1976 թ. փետրուարի 4-ին): Գառնուզեանը սոյն աշխատութեան մէջ ընդհանուր գծերով պատկերել է «Արարատիզմ»-ը, ըստ հետեւեալի. «Գումարենք Համահայկական Քոնկրէս մը, սկսինք «Համահայկական Ազատագրական Շարժում»-ը, «Արարատիզմ»-ը, ստեղծենք մէկ եւ հեղինակաւոր քաղաքական ղեկավարութիւն մը, որու յարակից տեղական, շրջանային եւ երկրամասային միացեալ կոմիտէներ, եւ սկսինք վճռականօրէն գործելու աշխարհամասի բոլոր հայկական կեդրոններու, ակումբներու, մշակութային եւ ուսանողական տուներու մէջ «Արարատիզմ»-ի գաղափարը Արեւմտահայութեան հոգիին մէջ ներմուծելու»[46]:

Գառնուզեանի «Արարատիզմ» գաղափարը հայ քաղաքական տարաբնոյթ շրջանակների կողմից գնահատուեց, որպէս հայկական սիոնականութիւն: Ըստ էութեան եւ ըստ ձեւաչափի ակնյայտ էին գաղափարական եւ կազմակերպական նմանակման նշանները, որոնք չվրիպեցին նոյնիսկ Պոլսի «Ժամանակ» օրաթերթի աչքից, Լոզանում գումարուած «Բ Հայկական Համագումար»-ի օրերին:

«Սփիւռքի Հայոց Համաժողովին 1948-ին, Իսրայէլի պետութեան հիմնումին յանգած «Համաշխարհային Հրէական Համաժողով»-ին նմանող կազմակերպութիւն մը հիմնել:- Գրում է «Ժամանակը», վերլուծելով՝ «Երկրորդ (Բ) Հայկական Համագումար»-ի անցուդարձը,- Այս Համաժողովի գումարման նախաձեռնարկ հանդիսացած է Ջուիցերիոյ վերապատուելի Ջէյս Գառնուզեան»[47]:

«Վերապատուելի Գառնուզեան,- նոյնպէս գրում է «Ժամանակ»-ը իր յաջորդ օրուայ վերլուծականում,- նմանօրինակ կազմակերպութեան մը նպատակները երկու յօդուածով կը պարզէ՝ ա- Թուրքիոյ կողմէ գրաւուած հայկական հողերը ազատագրել, բ- Թուրքիան, վնասուց հատուցում ընէ: Այս նպատակին ալ «Արարատիզմ» անունը կը տրուի, ներշնչուելով «Սիոնիզմ»-էն»[48]:

Ճէյմզ Գառնուզեանի սահմանած «Արարատիզմ»-ի եւ «Սիոնիզմ»-ի միջեւ նմանութեան մասին գրել է նաեւ ֆրանսահայ անկախ լրագրող եւ անկուսակցական հետազօտող՝ Արման Գասպարը (1924-2011 թթ.): Նա իր ֆրանսերէնով աշխատութեան մէջ[49] Գառնուզեանի հնչեցրած մօտեցումներից եւ Ա եւ Բ «Հայկական Համագումար»-ին կապուած մանրամասներից դատելով, գրում է. «Ջուիցերիոյ մէջ իբրեւ քարոզիչ ծառայող Ճէյմս Գառնուզեան՝ կը փորձէ հայ քաղաքական կուսակցութիւններէն վեր ոյժ մը ստեղծել: Կը մտածէ հիմը դնել «Համաշխարհային Հայկական Համախմբում»-ի մը, որուն առաջին հանդիպումը տեղի կ'ունենայ 1979-ին. Փարիզի մէջ... Այս շարժումը բաւական աղմուկ կը հանէ, բայց ոչ մէկ անմիջական արդիւնք կու տայ:

1983-ին՝ Լօզանի դաշնագրի ստորագրութեան վաթսունամեակի զուգադիպելով համագումարը կը կայացնէ իր երկրորդ հանդիպումը:

Հայկական համագումար անունով հրապարակ իջնող այս շարժումը ինքնզինք կը հռչակէ իբրեւ. «Սփիւռքի հայութեան խորհրդարանը, որուն միակ նպատակն է հայերու միասնականութիւնը ապահովել՝ ի խնդիր Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած հայկական հողերու ազատագրութեան: Ինքզինք աջէն թէ ձախէն անկախ կը նկատէ եւ կը յաւակնի գտնուիլ միջին ճամբու մը վրայ:

Այս կազմակերպութիւնը ներշնչուած է համաշխարհային սիոնական շարժումի առաջնորդ Թէոտոր Հերցելէն, որ համախմբում մը կազմակերպած էր 1897-ին Պալի մէջ, Պալֆուրի կողմէ ծրագրուած իսրայէլեան օճախի մը կազմութենէն քսան տարի առաջ եւ եբրայական պետութեան ստեղծումէն յիսուն տարի առաջ»[50]:

Անդրանիկ Կոանեան

«Առաջին Հայկական Համագումար»-ը, կայացաւ Փարիզում, 1979 թ., որի գաղափարը, ինչպէս ասուեց, պատկանում էր Ճէյմզ Գառնուզեանին, իսկ կազմակերպիչ յանձնախումբը բաղկացած էր՝ Գէորգ Աճեմեանից, Մկրտիչ Պուլտուքեանից եւ այլն:

Խմբագիր, բառարանագէտ, գրաբարագէտ, հայ կաթողիկէ հոգեւորական՝ Ծայրագոյն Վարդապետ Անդրանիկ Կոանեանը (1929-2017 թթ.) նշուած համագումարի Ե. նիստում, 1979 թ. սեպտեմբերի 5-ին (որը նախագահել է Գէորգ Աճեմեանը), որպէս գլխաւոր հրաւիրեալ, իր բանախօսութեան ընթացքին ասել է հետեւեալը. «Կարելի՞ է իր ծագումի վայրերէն հեռու Հայ Դատ հետապնդել: Թէեւ Սիոնիզմը այդ օրինակը տուաւ, բայց մեր պարագան նո՞յնն է արդեօք: Ծրագրուա՛ծ կամ ոչ, անգիտակի՛ց կամ ոչ, պատահակա՛ն կամ ոչ, մեր կացութիւնը ա՛յս է. Արեւելքը կը պարպուի՛ Հայութենէն...

Մեզի կ՚ըսեն.- Սիոնի՞զմը պիտի կապկէք:- Շարունակում է Կոանեանը,- Մենք չենք մտածեր Սիոնիզմը կապկել՝ զայն կապկելու սիրոյն: Այլ մենք համոզուած ենք, թէ մեր ժողովուրդը հետզհետէ հեռանալով Արեւելքէն, օրէ օր աւելի՛ կը նմանի Սիոնիզմի ժողովուրդին: Մեր եւ Սիոնիզմի տուեալները նոյնը չեն: Սակայն մեզ կը հետաքրքրէ ժողովուրդ մը, որ իր ծննդավայրէն դարերով հեռացած է մնաց»[51]:

***

Ահա այս բոլորից յետոյ, տեսնենք թէ ի՞նչ է ասում Ռուբէն Տէր Մինասեանը սիոնական շարժման մասին եւ ինչպէսի գնահատականներ է տալիս նրան: Արժէ այստեղ այս առումով առաւել կանգ առնել Ռուբէնի վերլուծական հայացքների վրայ, «սիոնիզմը գովաբանելու» հեքիաթների թողած թունաւոր տպաւորութիւնը փարատելու նպատակով:

«... Անշուշտ հարց պիտի ծագի ինչպէս իմ՝ նաեւ ձեր մէջ, թէ արդեօք արաբացած Պաղեստինը կարող է ի վերջոյ հրէացած դառնալ եւ Դաւիթի ու Սողոմոնի իշխանութիւնը վերահաստատուի:- Գրել է Ռուբէնը 1931թ. սկիզբը,- Սրա պատասխանը երկու է, մին քաղաքական հնարաւորութիւնը, միւսը ֆիզիքական հնարաւորութիւնը:

Ինչ կը վերաբերի քաղաքական հնարաւորութեան, կարծեմ ոչ ես եւ ոչ ոք ոչինչ վճռական չի կարող ասել գեթ երկար տարիների համար: Դա կախուած է արաբական խմորումներից, որոնց հետեւանքները թողուած են մութ ապագայի մէջ. դա կախուած է բրիտանական կայսրութեան վերաբերմունքից, որ մութ է եւ յարափոփոխ. դա կախուած է հետագայ միջազգային փոխյարաբերութիւններից, որը գուշակելը ապարդիւն է: Այս մասին ինչ էլ ասենք, օդի մէջն է, փաստ չկայ մէջտեղը...»[52]:

Սոյն վերլուծութեամբ, Ռուբէնը, ոչ թէ «գովաբանում», այլ առհասարակ հարցականի տակ է առնում Պաղեստինի հրէացման սիոնիստական ձգտումը: Սրանով հանդերձ, նա ուսանելի է համարում սիոնականների համերաշխութեան ոգին, որին էլ, ինչպէս տեսանք, Ռուբէնից առաջ եւ յետոյ յիրաւի անդրադարձել են հայկական հոսանքների բազմաթիւ այլ ներկայացուցիչներ, յաճախ եւ իսկապէս գովաբանական չափազանցութիւններով:

Ահա եւ Ռուբէնի կարծիքը հրեաների միակամութեան վերաբերեալ.

«Մինչեւ 1929 թուականը հրէական հոսանքների մէջ կար անդագօսիզմ. նրանց կազմակերպութիւնները յաճախ իրար կը խաչաձեւէին, կը չէզոքացնէին, եւ վարակուած էին ներքին պայքարի այն ախտերով, ինչպէս մենք եւ շատեր: Բայց 1929-ի Ցիւրիխի ընդհանուր ժողովում, որին համեմատական չափով մասնակցեցին բոլոր կազմակերպութիւնները, չէզոքները, սիոնական եւ ոչ-սիոնականները, եւ ուր ներկայ էին համաշխարհային դէմքեր, ինչպէս Այնշտայն եւն. կազմակերպուեց հրէական ազգի միութիւնը, որը ընտրեց Ազգային խորհուրդ, վարչական կոմիտէ եւ գործադիր մարմին, որ կը զբաղի հայրենիքի ազատման եւ ազգային միացման գործով, Վայսմանի նախագահութեան տակ: Ո՛ւր էր թէ նման մի վարչութիւն էլ,- հարց է բարձրացնում Ռուբէնը,- համախմբեր մեր տարամերժ ուժերը եւ առաջնորդէր մեզ դէպի մեր Սիոնը, մեր հայրենիքը»[53]:

Ռուբէնը մի այլ յօդուածում վերլուծել է նաեւ արաբների վիճակն ու դրանից բխող քաղաքական, իրադրային ձգտումները՝ 1931 թ. արաբ-հրէական համակարգութեան լոյսի ներքոյ.

«Պաղեստինում արաբիզմը իր դէմ ունի ոչ միայն սիոնիզմը,- գրում է Ռուբէնը,- այլ նաեւ բրիտանական կայսրութիւնը, քանի որ Սուէզն է առանցքը այդ կայսրութեան: Բոլտուինները սիոնական չեն, բայց սուէզական են:

Արաբիզմը պիտի հզօրանայ այն չափով, որ Օմար խալիֆայի սուրը կարողանայ բարձրացնել. դրանից յետոյ ամէն ինչ կը լուծուի:- Շարունակում է Ռուբէնը,- Բայց այդ սուրը վերցնելու ուժ ու կարողութիւնը կա՞յ այսօր: Այս դեռ տարակուսելի է: Ուստի պիտի կարծել, որ առայժմ արաբիզմը պիտի ուժեղանայ Պաղեստինի շուրջ, բայց պիտի կանգնի Յորդանանի վրայ, մինչեւ որ Հայֆա-Մուսուլ երկաթուղագիծը շինուի, մինչեւ որ Իրաքի նաւթ խողովակներով հոսի դէպի Պաղեստին-Իրաք ճանապարհները: Երբ այս բոլորը լինին վերջանան, գուցէ առանց Օմարի սրին, Պաղեստինի խնդիրն էլ լուծուի յօգուտ արաբների»[54]:

Տեսնում ենք, որ Ռուբէնը նոյնիսկ փորձել է բանաձեւել արաբների յաղթանակի գործնական ուղիները, եւ տուեալ առճակատման առնչութեամբ, մի այլ վերլուծականում, յամենայն դէպս առաջադրում է ճշտել հայութեան արաբամէտ դիրքորոշման անհրաժեշտութիւնը.

«Իբր դրկից,- գրում է նա դարձեալ 1931 թ.,- մենք հայերս մեր վարքագիծը արաբ ժողովրդի հանդէպ՝ պէտք է ճշտենք այժմեանից, եւ այդ վարքագիծը ճշտելու համար պէտք է թղթատենք մեր հին պատմութիւնը եւ ուսումնասիրենք մեր յարաբերութիւնները արաբների հետ: Մեր պատմութեան մէջ պիտի գտնենք ուսանելի կէտեր, եւ երբ Բագրատունիների ճկունութեան տիրանանք՝ լաւ հարեւաններ պիտի գտնենք յանձինս արաբների, եւ գուցէ շահակից դառնանք այն

Տէր եւ Տիկին Ռուբէն եւ Անննա Տէր Մինասեան՝ նստած
Ոտքի. ձախին՝ Տէր եւ տիկին Գէորգ Մանճիկեան. աջին՝ օրիորդ Սիրանուշ Տէր Վարդանեան. դուստրը Աւրանայ Արամին՝ Ռուբէնի ֆետայի խմբապետերէն: Նկարուած Երուսաղէմ. հաւանաբար 1942-ին:

խնդիրների մէջ, որ կը սպառնան հայ ու արաբ ժողովուրդներին նոյն ատեն»[55]:

Խնդրեմ, ցոյց տուէք սիոնիզմի «գովաբանութիւն»-ը Ռուբէն Տէր Մինասեանի հրապարակումներում...

Եազըճեանը չի ուզում կամ չի ցանկանում սիոնիզմի վերաբերեալ Ռուբէնի վերլուծութիւնները համեմատել՝ «Արաբատիստական», ԱՍԱԼԱ-ական եւ այլ շրջանակների կողմից սիօնիզմի նկատմամբ տածած իսկական գովաբանութիւնների եւ նմանակումների հետ: Միգուցէ Եազըճեանն անտեղեակ է այս բոլորի մասին: Յամենայն դէպս նա չի ուզում կամ չի ցանկանում նման համեմատութիւններ անել, որովհետեւ նրա համար պարզից էլ պարզ է՝ որ նման համեմատութիւնները նրան շատ տխուր եզրակացութիւնների են յանգեցնելու ու անյարմար վիճակի մէջ են դնելու:

Ռուբէն Տէր Մինասեանի դէմ թոյնն ու թարախը, Եազըճեանն թանձրացնում է եւս մի քանի կաթիլ այլ վտանգաւոր նիւթով...

4. Կինը՝ Անննա, հրէուհի է, ՈՒՇԱԴԻՐ՝ Պէն Կուրիոնի կնոջ քոյրը, այսինքն՝ Ռուբէնը Պէն Կուրիոնի քենակալն է: Կնոջը ծանօթացած է 1912-ին՝ Ժնեւի համալսարանին մէջ բժշկութիւն ուսանելու տարիներուն:

Սա է այն վտանգաւոր նիւթը՝ այն մեծ սուտը, որն էլ բարեբախտաբար երկար կեանք չի կարող ունենալ... Սրա վրայ չարժէ երկար կանգ առնել: Միայն կը բաւարարուենք, աւելի քան 195 միլիոն մարդու ծագումնաբանութեան գենետիկական տուեալները պարունակող, «www.geni.com» կայքէջի հետեւեալ տեղեկութիւններով.

Իսրայէլի առաջին վարչապետ Բէն Գուրիոնի կինը՝ Պաուլա Մունվեյս Մոնբեձն ունեցել է մէկ եղբայր՝ Բեռնարդ Մունվեյս Մոնբեձ եւ միայն մէկ քոյր՝ Ռայիսա Մունվեյս Մոնբեձ[56]: Վերջինս էլ ամուսնացած է եղել, ոչ թէ Ռուբէն Տէր Մինասեանի, այլեւ՝ Սաուլ Սոլոմոն Մաշլենկո Մասլով անունով մի հրեայի հետ[57]:

Ռուբէնի կինը՝ Անննա հրեայ էր, բայց եւ ազգակցական ոչ մէկ կապ չունէր Պաուլայի Բէն Գուրիոնի հետ:

Այսպիսով յստակ ճշմարտութիւն է, որ Ռուբէնը Բէն Գուրիոնի քենակալը չէ: Բայց այս բոլորից յետոյ, ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ ազգակցական կապը՝ երկու մարդու գաղափարական, քաղաքական հայացքների նմանութեան, տարբերութեան, համակրանքի կամ հակակրանքի տեսակէտից, էլ չենք ասում՝ քենակալական կապի մասին:

Մի՞թէ հենց մեր իրականութեան մէջ բազմաթիւ օրինակներ չեն հանդիպում՝ քենակալների, մինչեւ իսկ եղբայրների գաղափարախօսական խոր տարբերութեան... փակագծերը թող չբացենք:

Այս սուտն էլ չգործեց: Կամ ուրիշ, աւելի թունաւոր ու մեծ սուտ յօրինէք, կամ էլ՝ «խելքի՛ աշեցէք»...

5. Գէորգ Մանճիկեան իր յուշագիրքին մէջ կը վկայէ, թէ Ռուբէնն ու կինը 1942-1943-ին կ'ապրէին Եաֆայի իր բնակարանին մէջ եւ Ռուբէն գրեթէ ամէն օր կ'երթար Եաֆայի նաւահանգիստը ու կը դիմաւորէր Պաղեստինը գաղութացնելու եկող եւրոպացի հրեաները ու կը զբաղէր անոնց տեղաւորման գործով:

Դարձեալ անհեթեթութիւն...

Ըստ ՀՅԴ հաւատաւոր գաղափարական գործիչ՝ Գէորգ Մանճիկեանի, Ռուբէնն իր տիկնոջ՝ Անննայի հետ, Եգիպտոսից Պաղեստին է մեկնել Ալամէյնի պատերազմից յետոյ, 1942 թ. ամռանը, եւ մինչեւ 1945 թ. սկիզբը բնակուել է Մանճիկեանների տանը՝ Երուսաղէմում բայց ո՛չ թէ Եաֆայում[58]:

Երուսաղէմին ամենամօտ նաւահանգիստը՝ Եաֆան գտնուում է Երուսաղէմից աւելի քան 60 կիլոմետր հեռաւորութեան վրայ: Եւ սա նշանակում է, որ Ռուբէնն, ի տես իր առողջական վիճակին, չէր կարող «գրեթէ ամէն օր» աւելի քան երեք ժամ՝ միայն երթեւեկել՝ «Պաղեստինը գաղութացնելու եկող եւրոպացի հրեաներ»-ին տեղաւորելու նպատակով...

Իսկ եթէ նոյնիսկ հնարաւոր լինէր յաղթահարել ճանապարհորդական դժուարութիւնները Ռուբէնի համար, ապա ասացէք խնդրեմ. այսինքն սիոնիստական հզօր կառոյցը, որ ֆինանսական եւ մարդկային մեծ ռեսուրսներ էր ծախսում աշխարհի հրեաներին Պաղեստին փոխադրելու համար, ի վիճակի չի՞ եղել ՀՅԴ Բիւրոյի անդամ Ռուբէնից բացի, առաւել յարմար եւ վստահելի մարդու՝ Եաֆայում գոնէ մէկ հրեայի յանձնարարէր՝ «դիմաւորէր Պաղեստինը գաղութացնելու եկող եւրոպացի հրեաները ու զբաղէր անոնց տեղաւորման գործով»... «խելքի՛ աշեցէք»:

6. Ու այս բոլորով հանդերձ, ՀՅԴ-ն ունի Ռուբէնին անունով կոմիտէութիւններ, պարբերաբար կը վերահրատարակէ անոր բազմահատոր յուշագիրքը եւ այլն եւ այլն եւ այլն: Հետեւութիւնները կը թողում՝ ընթերցողներում՝ խնդրելով իրենց միտքին մէջ զուգահեռներ տանիլ մերօրեայ հայրենական իրադարձութեանց հետ...

Այս բաժնի կապակցութեամբ աւելացնենք, որ գոյութիւն ունի նաեւ Ռուբէնի անուամբ ՀՅԴ երիտասարդական միութիւն:

Գոյութիւն ունեն այս անուանումներով կառոյցները, որովհետեւ Ռուբէն Տէր Մինասեանը, ի թիւս այլոց, համարւում է խորհրդանշական այն դէմքերից

մէկը, որոնց ղեկավարութեան շնորհիւ այսօր առկայ եւ ներկայ է ՀՅ Դաշնակցութիւնն իր գաղափարական արժէհամակարգով ու կազմակերպական կառոյցով:

Իսկ դուք ՀՅԴ խորհրդանշական դէմքերի վրայ ցեխ շպրտելու փոխարէն, փորձէք սեփական չեղածն ու չձեւաւորուածը կերտել ու ձեւաւորել, որպէս ազգային արժէք, եթէ իհարկէ անյարմար չէք զգում դրանից...

Փորձը, ամէն դէպքում, փորձանք չէ:

Յղումներ

1 «Ազատամարտ», Անկախ շաբաթաթերթ, Փարիզ, 1929թ. հոկտեմբերի 27, Ա էջ:
2 «Մարտկոց», Ազգային, քաղաքական, գրական երկօրեայ թերթ, Փարիզ, 1932 հոկտ. 20, թիւ 12, էջ 2:
3 «Յառաջ», ՀՅԴ հասարակական, քաղաքական, տնտեսական, գրական օրաթերթ, Երեւան, 1920 սեպտեմբերի 3, Ա էջ:
4 Տես՝ Սուքիասյան Համօ Կարենի, Հայաստանի Հանրապետությունում «արգելված գրականության» գոյության հարցի շուրջ (1918–1920 թթ.), «եվրոպական ակադեմիա» - գիտական հոդվածների ժողովածու, Երեւան, 2017, էջ 429:
5 Լազեան Գաբրիէլ, Հայաստան եւ Հայ Դատը, Կահիրէ, 1957, էջ 261-262:
6 “New-York tribune” newspaper, New York, August 17, 1920, Page 2:
7 «Մշակ» լրագիր, Թիֆլիս, 1920 հոկտ. 23, Ա էջ:
8 Տես Եազըճեան Գէորգ, Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները, «Ապագա» հանդէս, Թեհրան, թիւ 77, 2019 յունիս, էջ 5:
9 «Յառաջ», ՀՅԴ հասարակական, քաղաքական, տնտեսական, գրական օրաթերթ, Երեւան, 1920 հոկտեմբերի 9, էջ 4:
10 «Մարտկոց», Ազգային, քաղաքական, գրական երկօրեայ թերթ, Փարիզ, 1932 հոկտ. 20, թիւ 12, էջ 2:
11 «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթ, Երեւան, 2006 թ., 7 սեպտեմբերի, էջ 3:
12 «Կարմիր աստղ», Օրգան Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան Կուբանօ-Չերնօմօրեան սեկրետարիատի կից արեւելեան ազգութիւնների բաժնի, Կրասնոդար, թիւ 26, 1920 նոյեմ. 17, էջ 2:
13 «Ռազմիկ» զօրական շաբաթաթերթ, Երեւան, թիւ 28, 1920 նոյեմբերի 22, էջ 5-6:
14 «Կարմիր աստղ», Օրգան Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան Կուբանօ-Չերնօմօրեան սեկրետարիատի կից արեւելեան ազգութիւնների բաժնի, Կրասնոդար, թիւ 33, 1920 դեկտ. 12, էջ 2:
15 «Կարմիր աստղ», օրգան Ռուսաստանի կոմունիստական կուսակցութեան Կուբանօ-Չերնօմօրեան սեկրետարիատի կից արեւելեան ազգութիւնների բաժնի, Կրասնոդար, թիւ 21, 1920 հոկտ. 28, էջ 2:
16 «Ճակատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1920 դեկտեմբերի 24, Ա էջ:
17 Տես «Աշխատաւոր» բանուորական եւ գիւղացիական օրաթերթ, ՀՅԴ Վրաստանի կենտրոնական եւ Թիֆլիսի տեղական կոմիտէների պաշտօնաթերթ, Թիֆլիս, թիւ 249, 1919 նոյեմ. 23, էջ 4:
18 Տէր Մինասեան Ռուբէն, Թուրքիա-տաճկական ռեֆորմներ, «Նոր հոսանք» գրական, գիտական, հասարակական եւ քաղաքական ամսագիր, Բ տարի, թիւ 1, 1914 յունուար, էջ 149-150:
19 «Ռազմիկ» զօրական շաբաթաթերթ, Երեւան, թիւ 27, 1920 նոյեմբերի 15, էջ 2:
20 Տէր Մինասեան Ռուբէն, Նորագոյն թուրքիան եւ իր ձեւափոխումները, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 7, 1928 մայիս, էջ 126:
21 Տես՝ Անդրէ Ամուրեանի յուշագրութիւնը, «Դրօշակ», Աթենք, թիւ 15, 1986 նոյեմբերի 12, էջ 14, նաեւ:
22 Տէր Մինասեան Ռուբէն, Նորագոյն Թուրքիան եւ իր ձեւափոխումները, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 7, 1928 մայիս, էջ 126:
23 Տէր Մինասեան Ռուբէն, Հայաստանը եւ աշխարհաքաղաքական իրավիճակը տարածաշրջանում, Աշխատասիրութեամբ՝ Խաչատուր Ստեփանեանի, Երեւան, 2023, էջ 235:
24 Նոյնը, էջ 238:
25 Թուրքական հռչակաւոր «Թասվիր-ի-Էֆքար» թերթը, որ հրատարակուել էր 1862-1925 թթ. ժամանակաշրջանում, 1945 թ. վերահրատարակուել է «Թասվիր» անունով եւ շարունակուել Ջիհատ Բաբանի (1911-1984 թթ.) ղեկավարութեամբ մինչեւ 1949 թ.:
26 «The Armenian Herald», Puhlished by the «Armenian National Union of America», Բոստոն, թիւ 9, 1919 օգոստոս, էջ 517:
27 «Yidishes Tageblatt - The Jewish daily news» օրաթերթ, Նիւ Եորք, 1917 նոյեմբերի 26, էջ 8:
28 Ասպարէզ շաբաթաթերթ, Ֆրեզնո, 1918 յունուարի 4, էջ 2:
29 Նոյնը:
30 «The Bridgeport evening farmer» օրաթերթ, Բրիջփորթ, Կոնեկտիկուտ նահանգ, 1917 դեկտ. 18, էջ 5:
31 «The Armenian Herald», Puhlished by the «Armenian National Union of America», Բոստոն, թիւ 9, 1919 օգոստոս, էջ 516:
32 «Հայաստան» շաբաթաթերթ, Հայ ազգային ազատական միութեան պաշտօնաթերթ, Փարիզ, 1920 փետրուար 16, էջ 211:
33 Վանատուր, Սիօնիսթները եւ մենք, «Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթ, Նիւ Եորք, թիւ 43, 1921 հոկտ. 22, էջ 1297:
34 «Արեւ» օրաթերթ, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Եգիպտոսի շրջանակի պաշտօնաթերթ, Կահիրէ, 1924 սեպտ. 26, Ա էջ:
35 Վարդանեան Օնիկ, Գաղութահայութիւնը եւ իր ազգային պահպանման խնդիրը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 7, 1926 մայիս, էջ 40:
36 Տէրպէտէրեան Մեսրոպ, Հրէաները Եւրոպական լուծի տակ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 3, 1929 յունուար, էջ 139-140:
37 «Արեւ» օրաթերթ, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Եգիպտոսի շրջանակի պաշտօնաթերթ, Կահիրէ, 1936 մայիսի 14, Ա էջ:
38 Գէորգեան Կարօ, Սիոնական շարժումը, «Հորիզոն» օրաթերթ, Սելանիկ, Յունաստան, 1933 օգոստոսի 26, Ա էջ:
39 Գալփաքճեան Արտաշէս, Հրեաներու սիօնիսթ 19-րդ համաժողովը, «Ժամանակ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1935 օգոստոսի 24, էջ 4:
40 «Բանուոր» օրաթերթ, Օրգան ամերիկահայ բանուորութեան, Նիւ Եորք, 1935 հոկտ. 31, էջ 4:
41 «Յուշարար», Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պաշտօնաթերթ, Նիւ Եորք, թիւ 213, 1941 մարտ, էջ 38:
42 «Երիտասարդ Հայաստան», Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան պաշտօնաթերթ, Նիւ Եորք, 1945 նոյեմբերի 2, Ա էջ:
43 Մօզեան Լեւոն, Հրէական կրօնքը, «Այսօր-Ապագայ», Ֆրանսահայ ժողովրդական օրաթերթ, Փարիզ, 1952 ապրիլի 5, էջ 2:
44 Տես՝ «Յուշարար», Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պաշտօնաթերթ, Նիւ Եորք, թիւ 4, 1955 փետրուար, էջ 7:
45 Աճեմեան Գէորգ, Երկարաձգուող հոգեվարքը, «Սփիւռք», Գրական, գեղարուեստական եւ հասարակական շաբաթաթերթ, Բէյրութ, 1967 յունուարի 25, էջ 6-7:
46 Գառնուզեան Ճէյմզ, Վերադարձ դէպի Այրարատեան լեռնաշխարհ, Հրատարակութիւն՝ «Սփիւռք» պարբերաթերթի, Երեւան, 2019, էջ 62:
47 «Ժամանակ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1983 յուլիսի 20, Ա էջ:
48 «Ժամանակ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1983 յուլիսի 21, Ա էջ:
49 Le Combat arménien: entre terrorisme et utopie, Éditions l’Âge d’Homme, 1984:
50 Գասպար Արման, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, թարգմանեց՝ Արմէն Տօնոյեանը, Լոս Անջելես, 1989, էջ 133:
51 Կոսնեան Անդրանիկ, Սփիւռքի պատմականն ու ներկայ գոյավիճակը, «Սփիւռք», Բէյրութ, թիւ 1-12, 2005 յունուար-դեկտ., Ներդիր ազգային-պատմական բացառիկ թղթածրար՝ Առաջին Հայկական Համագումարին նիւթերը (փարիզ, 1979), էջ 40 եւ 42:
52 Տէր Մինասեան Ռուբէն, Սիոնական աշխարհի մէջ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 5, 1931 մարտ, էջ 140-141:
53 Նոյնը:
54 Տէր Մինասեան Ռուբէն, Արաբական աշխարհի մէջ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 8, 1931 յունիս, էջ 119-120:
55 Տէր Մինասեան Ռուբէն, Սիւրիան եւ արաբները, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 9, 1931 յուլիս, էջ 134-135:
56 Տես՝ https://www.geni.com/people/Paula-Ben-Gurion /6000000010 082854243
57 Տես՝ https://www.geni.com/people/Raeesa-Maslow/6000000031000936295
58 Տես՝ Մանճիկեան Գէորգ, Յուշեր, Մոնթրէալ, 2008, էջ 103-116:

Ազգը ժամանակ է եւ տարածութիւն

Պարգև Աւագեան
Աւարտած է Հալէպի պետ. համալսարանի Երկրաչաբական բաժնի Էլեքդրոն ճիւղը:
Վարած է ուսուցիչի և դաստիարակի պաշտօններ: Հրապարակած է յօդուածներ «Գանձասար» շաբաթաթերթին մէջ:

Հաւաքականութիւն, ժողովուրդ եւ ազգ զիրար շաղկապող կեդրոնական ատաղձը ուրիշ բան չէ եթէ ոչ մա՛րդը: Բայց իր ընդհանրութեան մէջ եւ առանձնապէս ո՞վ է մարդը:

Երբեմն գերի ու երբեմն բերրի.
Երբեմն յանցաւոր ու երբեմն դատաւոր.
Երբեմն տոկուն ու խօսուն.
Երբեմն տկար ու սողուն.
Երբեմն թագաւոր ու երբեմն ալ սպասաւոր:
Այս բոլորի գումարումն է մարդը:

Կեանքի մէջ կան երեւոյթներ, որոնք համազօր են հրաշքի. բայց երեւոյթ հասկացողութիւնը արդիւնք է. իսկ իւրաքանչիւր արդիւնք պայմանաւորուած է պատճառով ու պատճառները կը բաժնուին երեքի՝ բնական (բնութիւն), անձնական եւ պատմական իրադարձութիւն:

Ընդգծումով պիտի գնահատականը տանք գաղափարական կշռոյթի ու անոր բարոյական ծանրութեան:

Ազգութի՛ւնը, իբրեւ ապրող գաղափարախօսութիւն չի կրնար եւ պէտք չէ ենթարկուի տեսաբանական միատեսակ վերլուծումի կամ վարդապետական մեկնաբանութեան: Արդ մեր ազգայինի ու ազգի հասկացողութիւնն ալ, իբրեւ հաւաքական հաւատամք, ենթակայ է մեր միջավայրի, հայրենիքի կարիքներուն եւ կարելիութիւններուն, միշտ նկատի ունենալով շրջապատի գիշատիչ ոյժերու առկայութիւնը: Անցնելով մեր վերնագրումի բացատրողականին «ազգ»ը ժամանակ է եւ տարածութիւն՝ «ժամանակ» այսինքն պատմութիւն. «տարածութիւն» այսինքն աշխարհագրութիւն:

Ազգի գոյատեւումը ունի իր տրամաբանական նախադրեալները, որոնք թիւով երեքն են՝ մտքի պայծառատեսութիւն, հոգիի վեհութիւն եւ զանոնք պահելու հզօրութիւն:

Այս գաղափարի բոլոր ազնիւ տրամադրութիւնները յարգելով յանդերձ կեանքի փորձառութիւնը, սակայն, վերջին դարաշրջանին նոյնպէս համոզիչ կերպով ցոյց տուաւ, որ աշխարհը ղեկավարող ընդհատակեայ սեւ ոյժերու հիմնական նպատակն է քանդել ու արժէքազրկել բոլոր այն ինչ որ մարդկային համակարգին մէջ համարուած են սրբութիւններ: Հայ կեանքի հոլովոյթին եւ այդ հոլովոյթին մէջ հեշտ չէ՝ սպառել այս բոլորը մեր ազգային շուկային մէջ: Վերջապէս պատմութիւն կայ. պատասխանատուութեան բեռը կրելու անխուսաբելի հարկադրանքը կայ: Այս պատճառով ալ պիտի փորձենք զանոնք բանալ մեր ազգային - քաղաքական բեմին վրայ, հասկնալու համար անցեալը եւ նախատեսելու համար ապագան:

Մտածողներ կրնան ըլլալ, թէ այս ամէնը կու գան տեսական եւ վիճելի դատողութենէ մը: Յատկանշական է ու դժուար չէ կռահել, որ երկու դէպքերուն ալ մեզի կը պակսի հարցերու, ըստ էութեան, քննարկման լրջութիւնը:

Խտացնելով գաղափարը ազգային պատկանելութեան վերնագրումի անհրաժեշտութեան. ինչպէս բացատրել հոլովոյթը ազգ հայրենիքի սահմանումին եւ պատկերացնել պետութիւն հասկացողութիւնը. ու ինչպէս գուրգուրալ պետականութեան առարկայական գոյութիւնը: Այս բոլորի լոյսին տակ կը զարգանայ պատկանելիութեան զգացումն ու հպարտութիւնը եւ զգացական մղումը պահելու բոլոր այն ինչ որ դրական ձեռք բերում է:

Սկիզբը այս բոլորը պիտի ունենան անհասկնալի ըլլալու հնչեղութիւնը, բայց՝ ազգ, հայրենիք, ազգային պետականութիւն եւ անկախութեան յղացքները կը կազմեն օրկանական ամբողջութիւն մը եւ կը հանդիսանան ժողովուրդի մը հաւաքական կամքին ու համազգային իտէալներուն գլխաւոր դրսեւորումները:

Երբ ազգը գոյութիւն ունի, հայրենիքը բնականաբար գոյութիւն կ՚ունենայ, երբ հայրենիքը գոյութիւն ունի անժխտելիօրէն ազգային պետականութիւնը պէտք է գոյութիւն ունենայ: Իսկ երբ պետականութիւն կայ, անկախութիւնը անսակարկելի իրաւունք է, գոյատեւման երաշխիք, ստեղծագործութեան խթան եւ ինքնակերտումի անփոխարինելի խարիսխ:

Եթէ ընկերվարութիւն բառը առաջին անգամ գործածուած է 1827 թուականին այսու յանդերձ անոր իմաստն ու պարունակութիւնը գոյութիւն ունէին պատմութեան սկիզբէն իվեր: Հոն, ուր կային մարդկային անիրաւութիւններ, արուեստականօրէն ստեղծուած անհաւասարութիւններ, ընկերային կեանքին մէջ թէ առհասարակ, հոն կար անարդարութիւն, տկարին կեղեքում զօրաւորին կողմէ եւ, հետեւաբար, հոն կար թախիծ, տուն տալով ընդվզումի, ցասումի:

Ազգի կազմաւորումը որպէս կեանքի բնական զարգացումի արդիւնք ընդունուած ըլլալու սկզբունքը, այս ուղղութեամբ ուսումնասիրութիւնը դարձուցած է ոչ հետաքրքրական նիւթ եւ երկար ժամանակ մնաց խոպան մինչեւ ԺԹ դար: Մինչեւ այդ թուականը բոլորը կը խօսին պետութեան մասին եւ ոչ ժողովուրդի ու ազգի:

Գերմանացի գրող Զաքարիէն է, որ 1839 թուականին կը ձգտի բանաձեւել ազգ հասկացողութիւնը՝ «Ազգը մարդոց այն ամբողջութիւնն է, որ ունի ընդհանուր ծագում, մարդիկ որոնց յատուկ է զգալու եւ մտածելու միեւնոյն եղանակը»:

Գերմանացի այլ ուսումնասիրող՝ Էսչէր, 1863-ին իրար խառնելով ազգ եւ ժողովուրդ վերնագրումները կը հասնի հետեւեալ բանաձեւին՝ «Ազգը ոչ այլ ինչ է եթէ ոչ որեւէ պետութեան հողի կամ տարածաշրջանի վրայ ապրող բնակիչներու ընդհանրութիւնը, որոնք մշտապէս ներկայ են այնտեղ»:

Մթութեան եւ անորոշութեան կը մատնէ ազգութեան գաղափարը, որովհետեւ այսօր ընդհանրապէս պետութիւններու եւ երկիրներու մէջ կ'ապրին մէկէ աւելի ազգեր:

1882 թուականին ֆրանսացի Էրնէսթ Ռընէն կ'ըսէ. «Ազգը մէկ հոգի, մէկ հոգեկան սկզբունք է»:

Այլ մեկնաբանի մը բացատրութեամբ. «Ազգը մարդոց այն խումբն է, որ ունի յատկութիւններ, որոնք սերտելի են եւ ժամանակի կը կարօտին: Իսկ ազգութիւնը այդ խումբին ազգակից մօտեցումի մը յատկութիւններու գումարումն է»:

Այս մէկը յառաջացուց շփոթ ազգ եւ ազգութեան միջեւ:

Նկատի ունենալով երկիր հասկացողութեան շրջագիծին մէջ մէկէ աւելի ազգային ծագում ունեցողները, յառաջացան նոր եզրոյթներ՝ հայրենակիցը եւ ազգակիցը, որ այս հասկացողութեան մէջ ստեղծեց ընկալման նոր եղանակ:

1879 թուականին Աուստրիացի ընկերաբան Գումպլովիչ կը գրէ. «Ազգութիւններ պէտք է համարել ժողովրդական մեծ խումբեր, որոնք կը գիտակցին ե՛ւ իրենց մշակոյթի ընդհանրութեան ե՛ւ կամ ներշնչուած են ազգային ընդհանուր զգացումով:

Ազգաձուլման քաղաքականութիւնը ստեղծեց բռնապետական իշխանութիւններ, որոնք ժամանակաւոր եւ ձեւական յաջողութիւններ արձանագրելով, մնացին անյոյս ու առաջին պատեհ առիթին անոնք թօթափեցին մոխիրը ու դարձեալ փոցկլտաց «ազգային պատկանելիութիւնը», որուն վերջին եւ լաւագոյն օրինակն էր Սովետի փլզումը:

Ազգի կազմութեան կնճռոտ հարցերը չափազանց շատ են ընկերաբանութեան մէջ: Գարլ Կաուցկին կ'ըսէ. «ազգութեան միակ որոշիչ տարրը լեզուն է»:

Չափազանց միակողմանի տեսակէտ է. Այս տեսակէտին կը մօտենայ Խաչատուր Աբովեան. ան կը գրէ. «Ախ լեզուն լեզուն որ չըլլի մարդ ինչի նման կ'ըլլի»:

Այս տեսակէտին հակադրուող ընկերաբաններ հարց տուին, թէ ի՞նչ կարելի է անուանել իտալերէն չխօսող իտալացիին, որ կ'ապրի Ռուսաստանի մէջ եւ իտալերէն չի գիտեր:

Բայց ընդգծումով կարելի է շեշտել թէ լեզուն առիթ կ'ըստեղծէ գիտութեան եւ փորձառութեան փոխանցման շրջագիծի ընդլայնումին:

Կնճռոտ հարցերէն մէկն է նաեւ, թէ մարդ ինչպէ՞ս մտած է գոյութեան ասպարէզը՝ անհատաբար թէ խմբովին:

Անդրադառնալով հողի անհրաժեշտութեան, ազգի կազմաւորման շրջագիծին մէջ Մարքս եւ Էնկըլս կ'ըսեն. «Հայրենիք ունենալը անպայման անհրաժեշտութիւն չէ ազգի մը գոյութեան համար» եւ օրինակ կը ծառայեցնեն Հրեաներն ու Ասորիները, մոռնալով որ Հրեաներն ու Ասորիները նախ հայրենիք ունեցած են եւ ետքը կորսնցուցած:

Կաուցկին կը հակաճառէ. «Հրեաները առանց հողի կը նկատուին կրօնական համայնք», եւ կ'ամրապնդէ իր տեսակէտը. «Բուռ մը հայ ժողովուրդ իրարայաջորդ բռնատէրեր ունեցած է՝ պարսիկներ, յոյներ, արաբներ, սելճուքներ, թաթարներ, Օսմանեան թուրքեր, հրով ու սրով, խաթրով ու բաղաքշանքով չեն կրցած կլանել, ցոլել հայ տարրը»: Շնորհիւ լեզուի ու հողի:

Համայնավարները կ'ըսեն. «Սեփականութեան գաղափարը քանդեց մարդկութիւնը»: Հետեւաբար կը մերժեն հայրենիքի գաղափարը, որովհետեւ կ'առնչուի սեփականութեան հետ: Այս տրամաբանութիւնը առաջ մղեց նոր լոզունք մը. «Բանուորը սեփականութիւն չունի ուրեմն հայրենիք չունի»:

Վերոյիշեալ բոլոր ուսումնասիրութիւններէն կարելի է եզրակացնել, թէ Ազգ եւ հայրենիքը կարելի է բնութագրել հետեւեալ բանաձեւումով.

«Հողային այն տարածքը, որուն վրայ իրենց հաւաքական կեանքը շարունակելու մարդկային այն խմբակը, որ չունենալով մէկ անցեալ կը հաւատայ մէկ ապագայի իրողութեան, կ'օգտուի այդ հողի ընձեռած բոլոր կարելիութիւններէն հաւասարապէս եւ ճիգ չի խնայեր անոր գոյութիւնը պաշտպանելու բոլոր վտանգներու դիմաց»:

Եւ որպէս վերջաբան՝

Հոս մեր դառն իրողութեան մէջ կը զարգանայ այն հարցադրումը՝ թէ ո՞վ է ազգասէրը, ու ո՞վ է հայրենասէրը. երկար բանավէճէ ետք հասած են այն իրողութեան, որ ազգասէրը իր նմանը իր տեսակը սիրողն է,

Իսկ հայրենասէրը իր քրտինքն ու ինչու չէ նաեւ իր արիւնը այդ հողին շաղախողն է:

Պատմութիւնը շաղախումն է երկրի եւ երկնքի, հողի եւ հոգիի, մութի ու լոյսի:

Երբ չկան Ազգը համախմբող իտէալները, ռազմավարութեան մշակման խնդիրը արհեստական է ու անպտուղ կը դառնայ:

Այս ուսումնասիրութեան աւարտին ճիշդ է որ չհասանք իտէալին, բայց փորձեցինք հասնիլ առաւելագոյնին:

Հայոց միասնականութեան տօն Օգոստոս 11, «Թարգմանչաց տօներ» կամ Մայիս 28... Ինչո՞ւ եւ ի՞նչպէս

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Սիրելի ընթերցող՝

Ազգամշակութային խնդիրներու շուրջ կայացած հարցազրոյցի մը ընթացքին, Հայրենի «**Էկո**», Տ.Հ. Կրթամշակութային եւ Վերլուծական Դարբերականի գլխաւոր խմբագիր, գրող եւ հրապարակագիր՝ Լուսիա Մեհրապեան հետեւեալ հարցը կու տար...

- Ի՞նչ էք կարծում, մենք կը կարողանա՞նք ունենալ մի տեսլական, կամ որեւէ մի ազգային սրբութիւն, որի շուրջ հնարաւոր լինի համախմբուել ու միասնական լինել:

Թէեւ պատասխանս «Այո» էր եւ որոշ բացատրութիւններ եւս տուի իրեն, սակայն, որովհետեւ այս ուղղութեամբ թերահաւատներ (sceptic) շատ կան... մեր մէջ, հոս յաւելեալ տեղեկութիւններով եւ քիչ մը աւելի հանգամանօրէն կը ներկայացնեմ հարցը: Այս մասին բաւականին շատ խօսուած, գրուած ու որոշ գործնական քայլեր եւս առնուած են: Նոյնիսկ Միասնականութեան Երգ յօրինեցինք ու Միասնականութեան Պարը պարեցինք Արագածի լանջերուն: Թէեւ գրեթէ բոլորը համաձայն են միասնականութեան, սակայն անոնցմէ իւրաքանչիւրը հարցին կը նայի իր պրիսմակէն եւ ոչ թէ հարցին կը մօտենայ ելնելով ազգային ընդհանրական շահերէ: Այս պատճառով քիչեր միայն պատրաստ են համախմբուիլ եւ լուրջ ու շինիչ *Խօսոյթ* ունենալ:

Ի դէպ, միջանկեալ ըսեմ որ վերջին տարիներուն *Խօսոյթ բառը* կը գործածուի անգլերէն Discourse բառին իբրեւ հոմանիշ: Եթէ բառարաններուն հարցնենք անոնք հետեւեալ իմաստները կու տան մեզի. *խօսակցութիւն, ճառախօսութիւն, ատենախօսութիւն, վիճաբանութիւն, քարոզ, տրամաբանական խօսք,* եւայլն: Ասոնցմէ որեւէ մէկը Discourse-ի ամբողջական եւ ճշգրիտ իմաստը չ'արտայայտեր: Discourse-ը նոյնիսկ «բանավէճը» չէ ինչպէս որ ոմանք կ'ենթադրեն: Բանավիճողները ի սկզբանէ իրենց համոզումները գոյացուցած կ'ըլլան եւ երբ կլոր սեղանի շուրջ հաւաքուին, անոնցմէ իւրաքանչիւրը, փոխանակ արդարօրէն դատելու եւ ճշմարիտը որոնելու, կը փորձէ իր կարծիքը պաշտպանել ու յաճախ նաեւ ինքզինք պարտադրել...: *Խօսոյթ*-ի պարագային մասնակիցը լսելու արուեստը պէտք է իմանայ, խօսելու իրաւունք ձեռք բերելէ առաջ: Ան ուշադրութեամբ լսելէ եւ ըմբռնելէ ետք ընդդիմախօսներուն կարծիքները, իրաւութեան եւ տրամաբանական սահմաններու մէջ, նոր ու շինիչ համոզումներ գոյացնելու մասին պէտք է մտածէ:

Խօսքը կը կը վերաբերի (նոյնիսկ թէժ եւ սուրանկիւն խնդիրի մը պարագային) գրագէտ ու կիրթ կերպով հարցը քննարկելու մասին: Եթէ մենք խօսոյթի հոգեբանութեամբ եւ տրամադրուածութեամբ կլոր սեղանի շուրջ նստինք, ինչո՞ւ պիտի չկարողանանք համախմբուիլ ու միասնական ըլլալ՝ երբ մանաւանդ արդէն իսկ եղած են այնպիսի լուրջ փորձեր եւ իրագործումներ, որոնք ապագայի վաւերական յոյսեր կը ներշնչեն մեզի: Օրինակի համար Լիբանանահայ երեք ազգային կուսակցութիւնները յաճախ նստած են կլոր սեղանի շուրջ, թէ Եղեռնը միասնաբար նշելու եւ թէ համալիբանանեան մարտահրաւէրները միասնաբար դիմագրաւելու համար: Եւ կամ Թորոնթոյի մէջ տարիներէ ի վեր կը գործէ երեք համայնքները ներկայացնող մարմին մը, որ շինիչ դեր կը կատարէ համագաղութային ընդհանրական գործերու պարագային: Տրուած ըլլալով որ միւս հայաշատ գաղութներու մէջ եւս գոյութիւն ունին նման տրամադրութիւններ ու դրական երեւոյթներ, կը նշանակէ թէ չկամութեան հարց չէ, այլ հարկաւոր է կազմակերպել խօսոյթներ ու համահայկական եւ ընդհանրական հարցերը քննարկել իրատեսութեամբ... եւ մասամբ նորին: Ըսինք *Կազմակերպել,* այո շեշտը կը դնենք «*Կազմակերպել*» բառի վրայ իր բովանդակութեան ամենալայն իմաստով, որովհետեւ առանց ամրակուռ ու մտածուած կազմակերպութեան, ոչ մեր ազգային *որակը* եւ ոչ ալ *քանակը* կրնայ վերածուիլ ուժի ու նպաստել մեր գոյատեւման պայքարը առաջ տանելու նուիրական գործին:

Այս իմաստով վերջին տասնամեակներուն, մենք *Խօսոյթի մշակոյթ* գրեթէ չենք ունեցած, յատկապէս Հայաստանի մէջ, ուր գոյութիւն ունին երեսունէ աւելի կուսակցութիւններ եւ քաղաքական հոսանքներ, որոնք գրեթէ միշտ ձախողած են միասնական ճակատ կազմելու եւ միասնաբար պայքարելու դիմութեան դէմ: Ձախողած են, որովհետեւ թէ *Խօսոյթի* աւանդական մշակոյթ, թէ միասնականութեան վճռա-

Հայկի արձանը

կան ձգտում ու թէ ամուր կազմակերպուածութեան փորձառութիւն գրեթէ չէ ունեցած Հայը իր դարաւոր պատմութեան ընթացքին:

Իսկ մեր օրերուն երբ տեղի կ՚ունենան ընկերաքաղաքական հրապարակային հանդիպումներ, մասնակիցները թէեւ *Խօսոյթ*-ի տրամադրութեամբ կը նստին դէմ դիմաց, սակայն յաճախ զրոյցները կը վերածուին իրերամերժ բանավէճերու եւ երբեմն նոյնիսկ թշնամական տրամադրութեամբ կը բաժնուին իրարմէ: Ըլլայ հայրենիքի մէջ թէ Սփիւռքի տարածքին, մեր ազգային թերութիւններէն, չըսելու համար յանցանքներէն մէկն ալ «*Հանրային Քաղաքական Խօսոյթի*» բացակայութիւնն է...:

Իմ յուսախաբ, բայց ո՛չ յուսահատ ընթերցող՝

այս բոլորով հանդերձ սակայն, ասիկայ չի նշանակէր թէ մենք ատակ չենք *Խօսոյթ*-ի: Եթէ բոլոր կողմերը անկեղծօրէն միասնական ըլլալու կամեցողութիւն ցուցաբերէն եւ *Խօսոյթ*-ի տրամադրութեամբ եւ տրամաբանութեամբ կլոր սեղանի շուրջ հաւաքուին, այդ պարագային անաչարօրէն հարցերը քննարկելն ու համապատասխան որոշումներ կայացնելը, այնքան ալ դժուար պիտի չ՚ըլլայ...:

Եկուր *Խօսոյթի* տրամադրուածութեամբ եւ տրամաբանութեամբ զրուցենք ու հարց տանք մենք մեզի: Ի՞նչ բան կրնայ արգելք հանդիսանալ, որդեգրելու համար «Հայկի եւ Բէլի»՝ մեր առաջին ազգային ու վճռական ճակատամարտի օրը՝ **Օգոստոսի 11**-ը... իբրեւ Հայ ժողովուրդի համախմբման, համերաշխութեան ու միասնականութեան տօն: Մանաւանդ որ, սկսեալ Ղեւոնդ Ալիշանէն մինչեւ մեր նորագոյն պատմաբաններէն շատեր, կ՚ընդունին որ Հայկի եւ Բէլի ճակատամարտը իսկապէս տեղի ունեցած է Քրիստոսէ առաջ 2492-ի **Օգոստոսի 11-ին,** Վանայ լիճի արեւելեան ափին, Խոշափ գետի հովիտի տարածքին**,** ուր յայտնաբերուած է նաեւ՝ Հայկի կառուցած բերդը՝ (Հայկաբերդը կամ Սարդուրիխիլինին), որուն կառուցման հնագոյն ժամանակաշրջանը կը համընկնի Հայկի եւ Բէլի պատերազմի թուականին: Ժամանակին, **Օգոստոսի 11-ին,** կը սկսէին Հայոց Նոր Տարուայ Նաւասարդեան տօները ու կը տեւէին շաբաթ մը աւելի: Չեմ հասկնար թէ ինչո՞ւ մինչեւ հիմա չենք մտածած վերակենդանացնել «Նաւասարդ»ը, յատկապէս չեմ հասկցած թէ ինչո՞ւ մեր հոգեւորականութիւնը դէմ պիտի ըլլայ Հայոց Նոր Տարուայ Նաւասարդեան տօները նշելու **Օգոստոսի 11-ին...** համահայկական տարողութեամբ, եւ թէկուզ հոգեւոր ծիսակատարութեամբ. մանաւանդ որ ուղիղ կը համեմատի Տաթեւի վանքի «Ճօճուող Սիւն»ի աստղաբաշխական առեղծուածային բնոյթին հետ: Հակառակ անոր, որ որոշ հեթանոսական ծէսեր եւ արարողութիւններ որդեգրուած ու յարմարցուած են քրիստոնէական մեր հաւատքին, ինչո՞ւ Հայ Առաքելական Եկեղեցին պիտի մերժէ «Նաւասարդը» իբրեւ հեթանոսական եւ հակաքրիստոնէական տօն...: Գուցէ մենք աշխարհականներս ենք մեղաւորը, որ համահայկական ոգիով եւ միասնական ճիգերով չենք փորձած իրականացնել այն:

Իմ արդարամիտ եւ արթնամիտ ընթերցող՝

Իմ «Միամիտ» դատողութեամբ չեմ կրցած ըմբռնել նաեւ, թէ ինչո՞ւ ուրիշները կրցած են եւ այսօր ալ կրնան միասնական ըլլալ, իսկ մենք՝ ոչ: Եւ ոչ ալ կրցած եմ ըմբռնել, թէ ինչո՞ւ այդքան անհանդուրժող ու այլամերժ եղած ենք ու այսօր ալ ենք մենք մեր հանդէպ... :

Իմ թերահաւատ ընթերցող՝ օրինակներ կուզե՞ս, խնդրեմ.

Ա. **Զուիցերիան** կը բաղկանայ երեք տարբեր լեզու եւ երեք տարբեր մշակոյթ ունեցող յայտնի ազգերէ... Ֆրանսացիներէ, Իտալացիներէ եւ Գերմանացիներէ...

Հայկ նահապետի կառուցած «Հայկաբերդը» կամ «Սարդուրիխինիլին»

րէ: Գուցէ չկայ այլ ժողովուրդ մը, որ իրենց չափ ըլլայ միասնական, ու կերտած ըլլայ կեդրոնաձիգ, ամուր եւ ուժեղ պետականութիւն: Անոնք ոչ միայն կրցած են պահել ու պաշտպանել իրենց հայրենիքի անկողմնակալութիւնն ու անկախութիւնը, այլ նաեւ միաժամանակ կը շարունակեն խաղաղութիւն պարտադրել իրենց հարեւաններուն, եւ նոյնիսկ ռազմատենչ մեծապետական ուժերուն... սեփական ուժով. Կը կրկնեմ ... սեփական Ուժով: Եթէ ձեզի ըսեն, թէ իրենց միասնականութեան առանցքը տնտեսականն է, մի հաւատաք: Տնտեսականը իր դերը կրնայ կատարել որեւէ երկրի մէջ, սակայն յատկապէս Զուիցերիոյ պարագային, առաջնայինը ազգային միասնական ՈՒԺ ունենալու գիտակցութիւնն է, որ ինչ որ տեղ եւ ինչ որ չափով կրթուածութեան եւ զարգացման որոշ մակարդակ եւս կ'ենթադրէ: Գործի բերումով «Նոազ Արք» ցուցասրահը երկու անգամ մասնակցած է Ժընեւի մէջ կայացած «PAL Expo»-ի (EUROP'ART 2000 եւ EUROP'ART 2002) միջազգային ցուցահանդէսներուն: Ինչպէս կը պատահի այլ երկիրներու պարագային, հոն եւս ձեռք բերած ենք բարեկամներ եւ կապ հաստատած՝ նաեւ բարձր խաւի որոշ ներկայացուցիչներու հետ: Ծագումով ի՞նչ ազգի ալ պատկանած ըլլան անոնք, բոլորն ալ, իրենց խօսած լեզուէն, կրօնքէն եւ կամ նոյնիսկ քաղաքական դաւանանքէն առաջ եւ ետք, ոչ միայն ամէն բանէ վեր կը դասեն Զուիցերիական ազգային գաղափարախօսութիւնն ու պետական շահերը, այլ նաեւ՝ պատրաստուածութիւնը, պատրաստակամութիւնն ու գիտակցութիւնը ունին միասնաբար զանոնք պաշտպանելու... ամէն գնով: Իրենք գիտեն, որ ոչ կարելի է վստահիլ դրացի երկիրներուն եւ ոչ ալ հէնց այնպէս խաղաղութիւն կը շնորհուի որեւէ երկրի: Անոնք՝ ամէն օր, տեւականօրէն կը պատրաստուին ոչ թէ ադոմական պատերազմի (ինչպէս ոմանք կը կարծեն), այլ ինքնապաշտպանական պատերազմի, այսինքն ամրացնելու եւ պաշտպանելու համար իրենց ազգային միասնականութիւնը, որովհետեւ անոնց համար Ազգն ու Պետութիւնը միաձուլուած են իրարու, եւ հանդէս կու գան իբրեւ մէկ մարմին: Խնդրեմ, բաղդատեցէք զանոնք մեզ հետ եւ նկատի առնելէ ետք նաեւ մեր եւ իրենց բացայայտ տարբերութիւնները, փորձեցէք դուք եզրակացնել...:

Բ. **Հնդիկները** բաղկացած են ութ հարիւրէ աւելի տարբեր ազգերէ ու ցեղերէ, որոնցմէ իւրաքանչիւրը ունի իր ցեղային տարբերակիչ մշակոյթը, կրօնքն ու կը խօսին տարբեր լեզուներով ու բարբառներով: Անոնք պատմութեան ընթացքին յաճախ ոխերիմ թշնամիներու նման, իրարու դէմ մղած են պատերազմներ ու զիրար կոտորած, սակայն ունին իրենց Նոր Տարին՝ «*Տիվալի*»ն, իրենց Լոյսի Տօնը, զոր կը նշեն Հոկտեմբերի վերջաւորութեան կամ Նոյեմբերի սկիզբը: Հինգ օրերու ընթացքին երկարող «*Տիվալի*»ի տօնակատարութիւններուն կը մասնակցին բոլորը միասին, առանց բացառութեան: Այս տօնին կը միանան նոյնի՛սկ մահմետականները, քրիստոնեաներն ու հինդուներու ոխերիմ թշնամիները՝ սիքխերը: Ի վերջոյ բոլորը «*Տիվալի*»ն կ'ընդունին իբրեւ ազգային Սրբութիւն Սրբոց: Հակառակ անոր որ հնդիկները մոտ մէկ միլիարդ եւ չորս հարիւր հիսուն (1,450,000.000) միլիոն բնակչութիւն կը հաշուեն, կրնան միասնական ըլլալ... իսկ մենք, ողջ աշխարհի տարածքէն հազիւ կրնանք տասը միլիոն (10,000.000) հայ եւ ծագումով հայ հաւաքել: Ինչո՞ւ պիտի չկարենանք ունենալ մեր ազգային ընդհանրական տօնը, իբրեւ Սրբութիւն Սրբոց, որ ընդունելի ըլլայ Հայ ժողովուրդի բոլոր հատուածներու եւ խաւերու կողմէ:

Տաթեւի ճոճվող սյունը

Գ. **Պարսիկները** եւս ցեղային առումով միատարր կառոյց չեն: Անոնք կը բաղկանան բազմաթիւ ու բազմազան կրօնքներէ եւ ցեղերէ, ինչպէս. Շիաա, Սիննի, Պահայ, Զրադաշտական, Քրիստոնեայ, Թորք-Ազարիներ, Արաբներ, Պալուչներ, Թուրքմէններ, Քիւրտեր, եւ այլ քոչուոր ցեղեր: Թէեւ անոնցմէ իւրաքանչիւրը ունի իր տարբերակիչ ծէսը, լեզուն եւ կենցաղը, սակայն բոլորը միասնաբար ունին «***Նովրուզ***»ի տօնը, որ պարսիկներու Նոր տարին է: Իրանաբնակ բոլոր կրօնքներն ու ցեղերը միասնականութեամբ եւ համերաշխութեամբ կը նշեն զայն, գարնան գիշերահաւասարի օրը, Մարտի 20-ին կամ 21-ին, իբրեւ բնութեան եւ մարդու կապի եւ վերածնունդի ազգային տօն, որ կը խորհրդանշէ «*Լոյսի յաղթանակը խաւարի վրայ, Կեանքի յաղթանակը մահուան վրայ եւ Սիրոյ յաղթանակը՝ ատելութեան վրայ*»: Թէեւ առաջին անգամ ք.ա.

Արամ Մանուկյանի հուշարձանը Սարդարապատում

538-ին, Աքամենեան կայսրութեան ժամանակ, մայրաքաղաք Պէրսեփոլիսի մէջ Մեծն Կիւրոսը «Նովրուզ»ը կը յայտարարէր իբրեւ պարսկական ազգային ինքնութեան տօն, սակայն անոր արմատները աւելի հին կը թուին ըլլալ ու կը հասնին մեզմէ մինչեւ առնուազն երեք հազար տարիներ առաջ: Հակառակ իր հազարամեայ գոյութեան, ոչ մէկ իշխանութիւն կամ կրօնք, նոյնիսկ իսլամութիւնը չկրցան ջնջել կամ մոռցնել տալ Նովրուզը (կամ Նորուզը) պարսկական ցեղերուն, մինչեւ որ 2009-ին պետականօրէն ընդունուեցաւ իբրեւ համապարսկական *«Յոյսի եւ Համայնքային Համերաշխութեան Տօն»* ու UNESCO-ի մօտ ամրագրուեցաւ ու դասուեցաւ համամարդկային ոգեղէն արժէքներու շարքին:

Այս գերզարգացած ու գեր լարուած մեր ժամանակներուն իսկ, աշխարհի տարածքին շուրջ երեք հարիւր միլիոն տարբեր ազգերու եւ ցեղերու պատկանող մարդիկ, Պարսկաստանի, Աֆղանիստանի, Հնդկաստանի, Տաճիկիստանի, Ալպանիոյ, մինչեւ իսկ Եւրոպայի ու ամերիկաներու տարածքին «Նովրուզը» կը նշեն իբրեւ *«Յոյսի եւ Համայնքային Համերաշխութեան Տօն»*: Իսկ մենք չկրցանք պահել Նաւասարդեան տօնը, որ իր բնոյթով ու բովանդակութեամբ հանդերձ չի հակադրուիր ոչ քրիստոնէութեան եւ ոչ ալ կը հակասէ հայ քաղաքական հոսանքներէն որեւէ մէկուն գաղափարախօսութեանը:

Իմ հաւատացեալ ընթերցող՝

եկուր պահ մը միասնաբար մտածենք ու կշռադատենք իբրեւ Հայ քրիստոնեայ, եւ հրաժարելէ ետք Նաւասարդեան տօներէն, անգամ մը եւս հարց տանք մենք մեզի.

- Արդեօք հնարաւորութիւն կայ՞ գոյութիւն ունեցող Հայ Առաքելական Եկեղեցւոյ տօներէն մէկը որդեգրել, ու վերածել Հայ Ազգային Համերաշխութեան ու միասնականութեան օրուայ...

Կը կարծեմ որ այդ մէկը կրնայ ըլլալ «Թարգմանչաց տօներ»ը, փոխան *«Սրբոց Թարգմանչաց Տօն»ի*, որ նուիրուած է Մեսրոպ Մաշտոցի, Դաւիթ Անյաղթի, Գրիգոր Նարեկացիի, Եղիշէի, Մովսէս Խորենացիի եւ Ներսէս Շնորհալիի յիշատակին:

Անցնող դարու եօթանասունականներուն Ծաղկաձորի «Մերկելեանի ինստիտուտի պանսիոնատին» մէջ, ամէն տարի՝ աշնան միջոցառումներ տեղի կ'ունենային «Թարգմանչաց Տօներ»ու անուան տակ, կազմակերպութեամբ՝ Վազգէն Մանուկեանի եւ իր գործընկերներուն: Ինչպէս նկատեցիք անունը բարեփոխուած է: «Սրբոց»ը հանուած է, իսկ «Տօն»ը վերածուած է յոգնակիի... «Տօներ»ու:

Բացատրեմ թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս.

«Սրբոց»ը հանուած էր նախ՝ խորհրդային իշխանութիւններու ուշադրութիւնը շեղելու համար եւ ապա անոր տալու երեւութապէս մշակութային իմաստ ու բովանդակութիւն, որովհետեւ «Թարգմանչաց Տօներ»ը խորքին մէջ աւելի քաղաքական էին քան՝ մշակութային...

Պատմականօրէն եւս, գրերու գիւտէն (405-ին Ք.Ե.) ետք ստեղծուած թարգմանական շարժումը, իրականութեան մէջ աւելի քաղաքական բնոյթ ունէր քան՝ կրօնական: Գիրերու գիւտով ու թարգմանական գրականութեամբ, ի սկզբանէ Վռամշապուհ Արքայի, եւ իրեն համախոհ հոգեւորականներու նպատակը եղած է նախ՝ ձերբազատիլ Ասորական եւ յատկապէս Յունական ազդեցութիւններէն, հիմնել հայալեզու ազգային միատարր դպրութիւն, հայկականացնել եկեղեցական ծէսերը, խորացնել ազգային ինքնութեան գիտակցութիւնն ու ի վերջոյ, ապահովել ժողովուրդի միասնականութիւնն ու ամրապնդել՝ հայոց պետականութիւնը: Հոգեւոր եւ աշխարհիկ բազմաթիւ գիրքեր ու մենագրութիւններ թարգմանելէ ետք, հետագային ինքնուրոյն ստեղծագործութիւններ եւս գրեցին հայ մատենագիրները, եւ նոյնիսկ հիմը դրին հայ երաժշտութեան, որմնանկարչութեան, մանրանկարչութեան, ճարտարապետութեան եւ առհասարակ մշակոյթին...: Գլխաւորութեամբ Վռամշապուհ Արքայի եւ գործակցութեամբ հայ հոգեւորականներու, զարկ տուին գիտութեան, իմաստասիրութեան, նոր գաղափարներու զարգացման եւ առհասարակ լուսաւորականութեան: Եւ համեմատաբար կարճ ժամանակամիջոցի ընթացքին, կազմաւորեցին Հայ Ազգը օժտելով զայն բարձրորակ, հարուստ եւ ուրոյն մշակոյթով:

Ծաղկաձորեան «Թարգմանչաց Տօներ»ու առաջնային նպատակներէն մէկն ալ հայրենի իրարամերժ գրողները, արուեստագէտները գիտնականներն ու առհասարակ մտաւորականութիւնը համախմբել, իրար ծանօթացնել ու համերաշխութիւն ստեղծել էր անոնց միջեւ: Օրինակի համար, երեց սերունդի աւանդապահ գրողներէն ու արուեստագէտներէն շատ շատեր դէմ էին երիտասարդներուն, եւ չէին ընդուներ անոնց նորարարական բնոյթի ստեղծագործութիւնները: Սակայն կու գային, կը շփուէին իրարու հետ, կը նստէին, միասին կը ճաշէին, կը զրուցէին... հոգ չէ թէ երբեմն կը վիճէին նաեւ, որովհետեւ այսպիսով բնականաբար կը մեղմանար հակամարտութիւնը իրենց միջեւ, եւ կը սկսէին քննարկել բոլորին յուզող կրթական, մշակութային, ինչպէս նաեւ անկախութեան հետ առնչուող քաղաքական հարցեր, եւ կը խօսէին՝ յառաջիկայ ծրագիրներու մասին:

Փաստօրէն՝ Արցախեան շարժումի ժամանակ, ժողովուրդին ներշնչողն ու ըմբոստութեան մղողը, հայրենի մտաւորականութիւնը եղաւ իր միասնական ու ամուր կեցուածքով:

Ահաւասիկ թէ ինչու, ազգային համերաշխութեան գծով, «Թարգմանչաց Տօներ»ու բերած նպաստը Արցախեան շարժումին, եղաւ մեծ ու ճակատագրական դեր խաղաց... յաջողութեան մէջ:

Ահաւասիկ թէ ինչու, «Թարգմանչաց Տօներ»ը իր բնոյթով ու բովանդակութեամբ, կարելի է ընդունիլ ու նշել, իբրեւ ազգային համերաշխութեան եւ միասնականութեան օր:

Սակայն:

Իմ ողջմիտ ու կիրթ ընթերցող՝

եթէ պահ մը մոռնանք որ մենք Քրիստոնեայ ենք, ու որոշ պարտաւորութիւն ունինք Հայ Առաքելական Եկեղեցւոյ հանդէպ, ապա, այս պարագային ինչո՞ւ չորդեգրենք Հայաստանի առաջին անկախութեան տօնը՝ «Մայիս 28»-ը իբրեւ ազգային համերաշխութեան եւ միասնականութեան օր: Մանաւանդ որ՝ 1918-ի «Մայիս 28»-ին տեղի ունեցած Սարտարապատի ճակատամարտը, իր միասնական բնոյթով ու համահայկական բովանդակութեամբ, չի զիջիր վերը նշուածներուն: Հերոսներու հերոս՝ Արամ Մանուկեանը, հակառակ ներքին ճակատի որոշ խոչընդոտներուն, իր միահեծան իշխանութեամբ կրցաւ հաւաքել ու ճակատ մղել, Հայ ազգի բոլոր տեսակի քաղաքական հոսանքները, բոլոր յարանուանութիւններն ու ժողովրդական խաւերը...: Նոյնիսկ Հայ Առաքելական Եկեղեցին, այդ տագնապալից օրերուն, երբ Հայ ժողովուրդի ***«Ընկալ Զրկալու»*** հարցը հրատապօրէն նժարի վրայ էր դրուած, անսակարգօրէն Արամ Մանուկեանի կողքին էր: Փաստօրէն, շնորհիւ այդ օրերու միասնական ոգիին, ոչ միայն յաջողութեամբ պսակուեցաւ Հայ ժողովուրդի ազատագրական պայքարը, այլ նաեւ՝ մենք ունեցանք թէ Խորհրդային Հայաստան եւ թէ անկախութիւն... սակայն Սարտարապատէն ետք չկրցանք ունենալ Սարտարապատեան ոգիով միասնականութիւն...

«Թարգմանչաց Տօներ» 1978.
Ձախէն աջ՝ հաղորդավար՝ Վերա Յակոբեան, ճարտարապետ՝ Արթուր Թարխանեան, արուեստաբան՝ Մովսէս Հերկելեան, ազգային գործիչ՝ Վազգէն Մանուկեան ու դերասան եւ գրող՝ Անանա Պետրոսեան

Իմ յանձնառու ընթերցող՝

թէեւ համակրանքս կ'երթայ **Օգոստոս 11-ին**, սակայն «Գնդակը» քեզի կը փոխանցեմ, որովհետեւ նպատակս *«Խաղող ուտել է եւ ոչ թէ տեսակը որոշել...»:*

Եւ նկատի առ որ, կ'ապրինք գիտականօրէն զարգացած, սակայն քաղաքականօրէն գեր-լարուած եւ լպրծուն ժամանակաշրջանի մը մէջ, ուր առհասարակ մարդկութեան ապագան անորոշ ու խիստ մտահոգիչ կը թուի ըլլալ: Իսկ մենք մեր անմիաբանութեամբ եւ անհեռատեսութեամբ, այնպիսի տագնապալից տեղ մը հասած ենք, ուր սխալուելու իրաւունք չունինք այլեւս: Այո, կը շեշտեմ. «*ամէն ինչ սխալուելու իրաւունք չունինք*», որովհետեւ իւրաքանչիւր սխալ աստիճան մը աւելի կը մղէ մեզ դէպի համահայկական նսեմացում, որ ի վերջոյ, ազգային ոչնչացում կ'ենթադրէ...:

Այնպէս որ, ՀԱՅ եւ կամ թէկուզ ծագումով Հայ իմ ընթերցող՝

«Գնդակ»ը քու ձեռքդ է հիմա... սակայն գործելէ առաջ իմացիր, որ ինչքան որ ես հաշուետու եմ նոյնքան ալ դուն պատասխատու ես, քու ստանձնած յետագայ քայլերուդ համար... հետագայ սերունդներուն դիմաց: ■

Համշենահայության ինքնապաշտպանական մարտերը 1915-1923 թթ. (մաս երրորդ)

Հայկազուն Ալվրցյան
Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր

1. Չանկիրիշի[1] կռիվները

Ռուսների կողմից Տրապիզոնի գրավումով ստեղծված կացությունը թելադրում է հետագա պայքարը շարունակելու համար որոշ հարցեր վերանայել, ընդունել պայմաններին համապատասխան նոր որոշումներ: Այդ նպատակով Սամսոնի հայ և հույն խմբապետները հավաքվում են խորհրդակցության՝ հետագա անելիքները ճշտելու համար: Հայերից մասնակցում են Կարա Խաչիկը և Ջիլ Օհաննեսը, Չարշամբայից՝ Գալեջյան քահանան: Որոշվում է հանդիպել Տրապիզոնի ռուսական հրամանատարության հետ և լուծել փախստականներին Ռուսաստան տեղափոխելու հարցը: Հանդիպումը կայանում է, որոշվում է, որ հոկտեմբերին 2000 հայ և հույն փախստական Թերմեից նավով կտեղափոխվեն Տրապիզոն, իսկ այնտեղից՝ Ռուսաստան: Բանագնացները վերադառնում են՝ իրենց հետ բերելով բավականաչափ ռուսական զենք ու զինամթերք, որը հավասարապես բաժանում են հայերի և հույների միջև:

Տրապիզոնի գրավումը խմբագրումներ էր մտցրել նաև հարևան Յոզղաթի գավառի հայկական խմբերի ծրագրերի և տրամադրությունների մեջ: Աքդաղ լեռան վրա ապաստանած հայդուկները՝ թվով 400 հոգի, որոշում են մաս-մաս անցնել Տրապիզոն, այնտեղից էլ՝ Ռուսաստան: Շրջանի հայտնի խմբապետներն էին Հաջի Բեյը, Արթին Աղան, Սամուելը և Ադամ Չաուշը: Մինչև Տրապիզոն անցնելը «Հաճի Պեյը կռիվ մը ունեցաւ Ագ-Տաղի վրայ: Աւելի ճիշդը իրական ճակատամարտ մը»[2]: Լեռան վրա նրա խումբն անսպասելի կերպով շրջապատվում է մեծաթիվ թուրքական ուժերով: Հաջի Բեյն անմիջապես սուրհանդակներ է ուղարկում մյուս խմբապետներին և դիմավորում թշնամուն: Սրընթաց կերպով օգնության փութացող Արթին Աղայի և Ադամ Չաուշի աջակցությամբ մի քանի ժամ տևած ծանր ճակատամարտն ավարտվում է հայ ռազմիկների փայլուն հաղթանակով: Թշնամին տալիս է 55 սպանված ու վիրավոր և փախչում[3]:

Հեղինակավոր խմբապետ Հաջի Բեյը համոզված էր, որ պետք է անցնել Ռուսաստան, միանալ կանոնավոր զորքերին և նրանց հետ կռվել թուրքական ճակատում: Այդ համոզմունքն ամրապնդվում էր հայ ռազմիկների թվի օրեցօր նվազումով: Նրա այս գաղափարը կիսում էին խմբերից շատերը, որոնցից երեքը, բազում դժվարություններ հաղթահարելով, հասնում են Ունիեի շրջանի Չանկիրիշ լեռը, ուր հանդիպում են Ջիլ Օհաննեսին: Չորս խմբերի միացումից գոյանում է



մի հզոր ուժ՝ բաղկացած 200 ռազմիկներից, ինչը մեծ ոգևորություն է առաջացնում նրանց մոտ[4]:

Գարնան-ամռան ամիսներն անցնում են առանց մեծ միջադեպերի: Հոկտեմբերին, երբ հայերն ու հույները պատրաստվում էին փախստականների տեղափոխմանը, թուրքերը որոշում են մի հզոր հարվածով ոչնչացնել հայկական զինյալ խմբերը և ծրագիրը վիժեցնել:

1916 թ. հոկտեմբերի սկզբին Չանկիրիշ լեռան վրա Ջիլ Օհաննեսի գլխավորած հայկական միացյալ ջոկատը՝ թվով 200 մարդ, շրջապատվում է ավելի քան չորս հազարանոց թուրքական զորաջոկատի կողմից: Հայ մարտիկները բաժանվում են 5 խմբի և 34 ժամ անհավանական հերոսությամբ մարտնչելուց հետո սրընթաց գրոհով ճեղքում են պաշարման օղակը և հեռանում դեպի Թերմե քաղաքի շրջակա անտառները:

Խմբապետական ժողովի որոշմամբ Ջիլ Օհաննեսը և Կարա Խաչիկն ութ մարտիկներից բաղկացած խմբով գաղտնի մտնում են Տրապիզոն: Նրանք հանդիպում են ռուսական զորքերի հրամանատարության հետ և ներկայացնում շրջակա բնակավայրերում և Թերմե քաղաքում տիրող իրավիճակը: Ռուսական հրամանատարությունը որոշում է հայկական ջոկատների աջակցությամբ գրավել Թերմեն: Ռուսական հրամանատարությունը հայ մարտիկներին մի փոքրիկ տորմիղով, որը բարձած էր անհրաժեշտ զենք-զինամթերքով, գիշերով դուրս է բերում Տրապիզոնից և հասցնում Թերմեի մատույցները: Հայկական ջոկատները զբաղեցնում են նախօրոք որոշված

դիրքերը: Նշված օրը ռուսական հրետանին ռմբակոծում է Թերմեն, որից հետո հայկական 200 հոգիանոց ջոկատը կոզակների մասնակցությամբ գրոհում և գրավում է քաղաքը: Թուրքական զորքը խուճապահար փախչում է:

Ռուսական հրամանատարությունը հավատարիմ չի մնում իր խոստմանը: Դեպքերի մասնակիցներն իրենց հուշերում գրում են. «Ապշեցանք, երբ Ռուսները մերժեցին ընդունիլ հոն հաւաքուած փախստականները, այնպէս որ միայն կիներն ու երեխաները մեկնեցան: Բացառաբար իրենց հետ տարին նաև Միքայէլ Զէյթունճեանն ու Գարա Խաչիկը: Այս երկուքը հետագային Տրապիզոնէն կամաւոր գացին: Զեյթունճեանը սակայն հիւանդանալով մեռաւ Թիֆլիսի հիւանդանոցին մէջ, Իսկ Գարա Խաչիկը կրկին վերադարձաւ մեզ մօտ: Շատ ուշ հասկցանք, որ Ռուսերը կ՚ուզէին մեզ օգտագործել, պահելով թշնամիի թիկունքին իբրև հարուածող ոյժ: Մինչ այդ, մնացողներս սրտաբեկ քաշուեցանք լեռները»: (ՕՐ., էջ 738): Նավահանգստում Ռուսաստանից նոր ժամանած Միսաք Թոռլաքյանը գաղտնի կերպով հայ ռազմիկներին է հանձնում բավականաչափ զենք ու զինամթերք, որ տեղափոխել էր Բաթումից:

Հոկտեմբերի վերջերին թուրքերը Սամսոնի հայկական խմբերը ոչնչացնելու ևս մի փորձ են անում: Այդ նպատակով նրանք նույնիսկ հանցագործներին են ազատում բանտերից և զինում: 1916 թ. հոկտեմբերի 25-ին դարձյալ շրջապատում են Չանկիրիշ լեռը:

Թուրքական բանակում ծառայող մի հույն զինվոր, վտանգելով իր կյանքը, Չանկիրիշում ապաստանած Զիլ Օհաննեսին լուր է բերում, որ նրանք չորս կողմից շրջապատված են. «Խմբապետ, ես յոյն զինուոր մըն եմ, փախայ ձեզի եկայ լուր տալու համար թէ չորս կողմէ պաշարուած էք, իւրաքանչիւր կողմը հազարի մօտ թուրք զինուորներով»[5]:

Կարճ ժամանակ անց սկսվում է անհավասար գոտեմարտը: Հայկական ջոկատները Զիլ Օհաննեսի հրամանատարությամբ քաջաբար կռվում են մինչև մայրամուտ և թուրքերի թվական գերակշռության ճնշման տակ նահանջում դեպի լեռները: Հայերի դիրքերն անցնում են թուրքերին, սակայն բոլոր ճակատներում չէ, որ տեղյակ էին այդ մասին. «Այնպէս որ, մթնշաղին՝ երբ արդէն հայերը ելից վերջին դուռը բախելու ստիպուած էին, թուրքերը լաւ մը իրար ջարդել սկսան: Այս կոյրերու կռիւը աւելի քան ժամ մը տևեց և ձրի սպաննուեցան 300-350 թուրքեր»[6]:

Այս ճակատամարտին մասնակցում է Յոզղաթի նահանգի Չաթ գյուղի 50 հոգիանոց ջոկատը՝ հայտնի խմբապետ Ադամ Չաուշի հրամանատարությամբ[7]: Այստեղ հայերի հետ կողք կողքի կռվում էր նաև 35 հույներից բաղկացած մի ջոկատ:

Տրապիզոնի գավառակում և մերձակա գյուղերում թուրքերը, բնականաբար, չէին կարող հայերի կամ հույների դեմ ռազմական գործողությունները շարունակել, բայց ռուսների վերահսկողության սահմաններից դուրս պարբերաբար տեղի էին ունենում հայ-թուրքական կամ թուրք-հունական ընդհարումներ, որոնք հաճախ վերածվում էին կատաղի կռիվների:

Զիլ Բերդ, Համշեն

Աշնան վերջին նման մի կռիվ տեղի ունեցավ Քերիշ թեփե լեռան շուրջ, ուր հավաքվել էին հայ և հույն փախստականները: Հետախույզների միջոցով տեղեկացված լինելով թուրքերի հարձակման ծրագրին՝ հայ խմբապետները որոշեցին ընդհանուր հրամանատար Զիլ Օհաննեսի գլխավորությամբ մնալ և հույների հետ դիմագրավել թուրքերին: Հայ-հունական զինյալների թիվը 450 էր՝ ներառյալ յոզղաթցի Ադամ Չաուշի խումբը: Վիճակը բարդանում էր նրանով, որ զինյալները պետք է պաշտպանեին նաև մոտ 200 անզեն հույն գյուղացիների:

Այս ուժի դեմ դուրս էր եկել բազմահազարանոց թուրքական զորախումբը, որի կեսը կանոնավոր բանակի զինվորներ էին, նրանք ունեին նաև չորս թնդանոթ: Կռիվն սկսվում է և մինչև կեսօր շարունակվում թուրքերի անընդհատ մեծացող ճնշմամբ: Կեսօրից հետո հայ-հունական ուժերը նահանջում են դեպի լեռան բարձունքները: Մութն ընկնելուց հետո հայերը տեսնում են, որ այրվում են հունական գյուղի տները՝ բոցերի մեջ կլանելով նաև անզեն բնակչությանը: Միացյալ ուժերի հրամանատարությունը որոշում է մթության մեջ անսպասելի հարձակման անցնել: Վերոհիշյալ հուշագրության հեղինակներն անհավանական հերոսամարտի այդ դրվագն այսպես են նկարագրում. «Մութը վրայ հասնելուն գործեցինք վերջին յուսահատական ու վճռական յարձակումը ձեռնառումբերով, զենքերով ու դաշոյններով. գիրկընդխառն կռիւ մըն էր և զիրար կը դաշունահարէինք: Աստծոյ հրաշքն էր, ինչ էր, չեմ գիտեր, մութին մէջ թշնամին սկսաւ զիրար կոտորել… մինչև որ գլխի ինկան, քանի մը հարիւր հոգի կոտորած էին արդէն. այդ առիթէն օգտուելով նոյնքան մըն ալ մենք սատկեցուցինք» (ՕՐ., էջ 739-740): Սակայն անհատնում զորքի դեմ անհնար էր անվերջ կռվել, և միացյալ ուժերը, օգտվելով մթության քողից, քաշվում են դեպի անտառները: Նրանք տալիս են 120-ից ավելի զոհ, վիրավորվում է

Տրապիզոն

Ջիլ Օհաննեսը, իսկ նրա կողքին առյուծաբար կռվող կինը վիրավորվում է և գերվում:

Ապաքինվելուց հետո Ջիլ Օհաննեսը որոշում է գտնել կնոջը: Դեկտեմբերի վերջին իրեն բարեկամ մի թուրքի տալիս է 40 ոսկի, որ վերջինս որոնի կնոջը և գտնի հետքը: Որոշված օրը մի քանի զինվորի հետ գնում է թուրքի տուն, բացում է դուռը և տապալվում ներսում դարանակալած ժանդարմների գնդակների տարափից: Ընկերները հարձակվում են ժանդարմների վրա, բայց դրսից նույնպես թակարդ էր լարված, և նրանք ստիպված փախուստով փրկվում են. «Յետոյ իմացանք, որ ջարդարարները Ջիլ Օվաննէսի գլուխը կտրած և ցուցադրած են գավառական քաղաքներու մէջ» (ՕՐ., էջ 740): Այսպես դավադրաբար ավարտվում է ազատատենչ համշենահայերի անվեհեր հրամանատար Ջիլ Օհաննեսի հերոսական կյանքը:

Նրա սպանությունից հետո շրջանի խմբերի հրամանատար է ընտրվում խմբապետ Խաչիկ Կարագյոզյանը (Կարա Խաչիկը):

1917-ի գարնան-ամռան կռիվները

Գարնանը հայ զինյալները բախվում են Տրապիզոնի շրջանից Քյոքլուքում հաստատված լազերի հետ, այնուհետև գլխատում են հայերի նկատմամբ անլուր հանցանքներ գործած և նրանց հաշվին խիստ հարստացած Քյոմուրճիոլու անունով ավազակապետին:

Այս գործողությունները զայրացնում են թուրքերին, որոնք որոշում են վրեժ լուծել. «Եւ այս անգամ անակնկալօրէն պաշարուեցանք ընտրեալ աւազակներու կողմէ: Նահանջելը կապուած էր մեծ վտանգներու հետ, այնպէս որ ուզած-չուզած պիտի դիմադրէինք մինչև վերջին փամփուշտը» (ՕՐ., էջ 740): Ի վերջո հաջողվում է ճեղքել պաշարման օղակը: Թշնամին հետապնդում է նրանց, իսկ վերջիններս, ասպատակելով թուրքական գյուղերը, հասնում են Չարշամբայի լեռներում ապաստանած հայ ռազմիկների մոտ. «Խմբապետներ Աբրահամ աղա Խաչատուրեանը, Սարգիս Թաթուլեանը, Սարգիս Գալենճեանը, Խաչիկ Թուլումճեանը և եռզղատցի Ադամ Չաուշը մեզ ընդունեցին գուրգուրանքով: Չարշամպայի ընկերներն ալ ընդհարումներու մէջ էին միշտ և հոն ալ թշնամին ծեծ կուտեր տևապէս: Այդ տեղէն անցանք Գուշ տաղը խմբապետ Արութ Գրպաշեանի մօտ: Եւ երբ իմացանք, որ կռիւները դադրած են, վերադարձանք Թազ տաղը» (ՕՐ., էջ 741):

Գարնանը տեղի են ունենում ևս մի քանի կռիվներ: Հայկական խմբերը գործում են համախմբված՝ միմյանց տեղյակ պահելով թշնամու հարձակումների մասին և համաձայնեցնելով գործողությունները:

Յոզղատի խմբեր Պոնտոսի լեռներում

1917-ի գարնան-ամռան ամիսներին Տրապիզոնի նահանգում համշենահայերի կողքին կռվում էին Յոզղատի հայկական խմբերից մի քանիսը, որոնցից հատկապես աչքի էին ընկնում երկու նահանգներում էլ մեծ հեղինակություն վաստակած Արթին աղայի և Ադամ Չաուշի խմբերը: Նրանց հռչակն այնքան մեծ էր, որ շրջանի թուրքերից շատերը ձգտում էին նրանց հետ բարեկամանալ՝ իրենց անվտանգությունն ապահովելու համար: Նման «բարեկամության» դիմաց նրանք հայերին մատակարարում էին պարեն և այլ անհրաժեշտ ապրանք[8]:

1917-ի հունիսի վերջերին Ադամ Չաուշի, չարշամպացի Էքսուզյան Կարապետի (Էքսուզի Կապետ), Ավետիս Չաքրյանի անջատաբար գործող խմբերը միավորվում են և որոշում են Նիքսարի շրջանի թուրքական գյուղերից վրեժ լուծել՝ հայերի նկատմամբ գործած վայրագությունների համար:

Առաջին թիրախը դարձավ Ղարա Ղուշ գյուղը, որի վրա հարձակումն ավարտվեց հաղթանակով, և խմբերը մեծ ավարով շարժվեցին դեպի Թազդաղ լեռը, որը բնական ամրությունների շնորհիվ շրջանի խմբերի թաքստարանն էր:

Շուտով նրանց են միանում Չաքր Օղլուի խմբի զինվորները, որոնք լուր են բերում, որ դեպի ընդհանուր բանակավայր է շարժվում Արթին աղայի 65 հոգիանոց խումբը: Խմբի նկատմամբ մյուս խմբերի սիրո և հարգանքի մի տուրք էր նրանց դիմավորելու արարողությունը, որի մասին դեպքերի մասնակիցները գրում են. «Ադամ Չավուշ ուրախ ոստումով մը հրահանգեց խումբին առնել զենքերը և դիմաւորել Արթին Աղան և իր կտրիճները, որոնց կարօտը կը քաշէին տարիէ մը ի վեր: Խումբը խանդավառօրէն շարք կազմեց և շէնշող հուրրաներով դէմ ելաւ երգելով.

Վէրքերով լի ջան ֆիդայ եմ,
Թափառական տուն չունիմ...

Երբ Արթին Աղայի խումբը մօտեցաւ, օդը թնդաց կեցցէներով և ուրախութեան աղաղակներով»[9]:

Համախմբելով ուժերը, որոշ ժամանակ հանգստանալով և քննարկելով անելիքները՝ միացյալ խմբերը որոշում են նախ պատժել հայտնի թուրք ավազակապետ Հոմուշօղլուին, որը, օգտագործելով Յոզղատի խմբերի հեղինակությունը, նրանց անունից թալանում

էր իր ազգակիցներին: Եվ քանի որ նրանց անիրավությունները վարկաբեկում էին հայ զինյալներին, նրան դատապարտում են մահվան և վճիռն իրականացնում[10]:

Աշնան վերջերին խմբերի ընդհանուր ժողովը որոշում է պատվիրակ ուղարկել Յունիայի և Թերմեի միջև ծովեզերքում հաճախ երևացող ռուսական զրահանավի հրամանատարի մոտ, որպեսզի նրա աջակցությամբ կապ հաստատեն Տրապիզոն քաղաքում տեղակայված ռուսական զորքերի հրամանատարության հետ և ստանան նրա աջակցությունը՝ լեռներում ապաստանած մի մեծ խումբ հայ փախստականներին քաղաք տեղափոխելու հարցում: Սակայն ծովափին մոտ երկու շաբաթ զրահանավին սպասելուց հետո ուղարկված հետախուզական խումբը՝ Արթին աղայի գլխավորությամբ, ձեռնունայն և հուսահատ վերադառնում է բանակավայր: Ռուսաստանում սկիզբ առած քաղաքացիական պատերազմի պատճառով ռուսական նավատորմը հեռացել էր թուրքական ափերից[11]:

«Հաշտության» առաջարկ

Չկարողանալով զենքի ուժով հաշվեհարդար տեսնել հայկական զինյալ խմբերի հետ՝ իշխանությունները որոշում են նրանց առանձին-առանձին ոչնչացնելու համար «ներում» հայտարարել, պայմանով, որ նրանք իջնեն լեռներից, տեր կանգնեն իրենց տներին և հողերին, զբաղվեն խաղաղ աշխատանքով:

Գայմագամը ցանկանում է «ներման» պայմաններն անձամբ ներկայացնել խմբապետներին՝ առավել վստահություն ներշնչելու համար: Պայմանավորված օրը նա խմբապետների հետ հանդիպման է ժամանում իսլամ ընդունած երկու հայերի՝ դեղագործներ Հովսեփ և Գևորգ Մութաֆյանների հետ, որպեսզի վերջիններս վկայեն գայմագամի առաջարկության անկեղծության մասին: Սակայն, օգտվելով հարմար առիթից, Գ. Մութաֆյանը հասցնում է շշնջալ խմբապետ Չաքրյանի ականջին. «Ինչ որ ըսենք, մի հաւատաք մեր խօսքին» (Օր., էջ 742):

Հանդիպման ժամանակ հիմնական խոսք ասողը, բնականաբար, գայմագամն էր, որը թրքական խարդախությամբ և քծնանքով համեմված հետևյալ առաջարկն է անում. «Եղածներուն հետ մենք ալ համաձայն չենք, բայց այլևս վերջ տրուած է ամէն կարգի հալածանքի և հետևաբար բոլոր Հայերը պէտք է վերադառնան իրենց տունները, վերսկսելու համար իրենց խաղաղ աշխատանքը. ամէն տեսակ օգնութիւն պիտի ըլլայ ձեզի, որպէսզի վերականգնեք ձեր տնտեսութիւնը և ապահովէք լաւ կեանք մը» (ՕՐ., էջ 742):

Խմբապետներն անվստահություն են հայտնում գայմագամին և մերժում նրա առաջարկը՝ հետևյալ պահանջ-հիմնավորումով. «Մինչև որ մեր ընտանիքները մեր տուներու մէջ չտեսնենք, մենք ձեր խօսքին չենք հաւատար. այնպէս որ մինչև այդ օրը մենք պիտի մնանք լեռները և հոն ալ պիտի մեռնինք» (ՕՐ., էջ 742):

Վրեժխնդրություն

Գայմագամը հեռանում է ձեռնունայն[12]: Խմբապետները որոշում են նախքան բաժանվելը համատեղ ուժերով պատժել Քեմուկերիզ գյուղի գյուղապետին, որը հայտնի էր որպես հայերի ամենաաչքի ընկնող ջարդարարներից մեկը: Կռիվն սկսվելուց որոշ ժամանակ անց հարևան գյուղերից նորանոր թուրքական ջոկատներ են հասնում օգնության: Շուրջ 5 ժամ տևած կռվում թշնամին գլխովին ջախջախվում է՝ տալով բազմաթիվ զոհեր: Հայկական խմբերը հեռանում են հարուստ ավարով, որը հիմնականում սննդամթերք էր, որոշ քանակությամբ զենք-զինամթերք և այլ անհրաժեշտ իրեր:

Չարշամբայի գավառակի ամբողջությամբ թրքաբնակ Թերեջե գյուղը հայտնի էր իր վայրագություններով և կրոնական մոլեռանդությամբ: Հայերի տեղահանման օրերին և դրանից հետո այդ գյուղի գյուղացիների միակ զբաղմունքը դարձել էր հայերի թողած գույքի՝ տների, անասունների, այգիների և այլ ապրանքների թալանը: Գյուղապետ Օսման չավուշը այդ բարբարոսներից կազմել էր բավականին մեծ և լավ զինված մի ավազակախումբ:

1917-ի դեկտեմբերի վերջերին հայկական խմբերը վաղ առավոտյան Աբրահամի, Ադամ Չաուշի և Արթին Աղայի գլխավորությամբ երեք կողմից շրջապատում են գյուղը: Անզիջում կռիվը տևում է մինչև երեկո: Մութն ընկնելուց հետո գյուղապետը, վախենալով գիշերային հարձակումից և թողնելով յուրայիններին, գաղտնի փախչում և թաքնվում է հարևան Տյոնկել գյուղում: Հայկական խմբերը գիշերը մտնում են գյուղ: Բոլոր հայտնի ավազակներին և նրանց պարագլուխներին սպանում են, իսկ հայերի ունեցվածքով լցված նրանց տները՝ հրդեհում: Կռվի մասնակիցների հուշերում կարդում ենք. «Գիշերը անցաւ խրախճանքի և վրիժառութեան երգերով, միշտ սակայն երեխայ, կին, ծեր ու տկար յարգուելով իրենց կեանքի և հանգստի իրաւունքներուն մէջ՝ հայդուկներու վեհանձն ու հպարտ զգացումներէն»[13]:

Խմբերը հարուստ ավարով վերադառնում են բանակատեղի: Երկու օր անց Արթին Աղան և Ադամ Չաուշը իրենց խմբերով շարժվում են դեպի Բալախոր հայկական գյուղը, իսկ այնտեղից՝ հունական Այազ Լալան հունական գյուղը, ուր վիրավորներին և հիվանդներին թողնելով հույների խնամքին՝ հեռանում են այլ ուղղությամբ: Կռվից խայտառակ կերպով խույս տված Թերեջե գյուղի գյուղապետը, հայերից վրեժ լուծելու համար, առևանգում է հունական Արփա Չուխուրու գյուղում պատսպարված Մարթա անունով մի հայ կնոջ, ով հազվագյուտ փրկվածներից էր:

Հույներն այդ մասին տեղեկացնում են Ադամ Չաուշին, ով որպես փոխվրեժ, հրամայում է անմիջապես պատանդ վերցնել մոտակա Հասան Աղա Դերեսի թուրքական գյուղի ողջ բնակչությանը՝ մանուկներից մինչև ծերեր: Նրանց բոլորին քշում են դեպի իրենց լեռնային բանակատեղի: Հայ խմբապետը թուրք գյուղապետից պահանջում է վերադարձնել հայ կնոջը, այլապես բոլոր պատանդները կսպանվեն:

Համշեն

Չարշամբայի ղեկավարությունը ստիպված վերադարձնում է հայ կնոջը, որի դիմաց հարյուրավոր պատանդները ազատ են արձակվում. «Ադամ Չավուշին երբ իմացուցին, անիկա իսկոյն ճամբայ հանեց ոչխարանման բազմութիւնը դէպի Հասան Աղա Դերեսի»[14]:

Դավադրություններ

«Հաշտության» առաջարկի մերժումը հայկական խմբերի կողմից թուրքական իշխանություններին դրդեց փոխել գործելաոճը: Այդ տարիներին Պոնտոսի լեռները լցված էին բազմաթիվ մեծ ու փոքր թուրքական ավազակախմբերով, որոնք հայերի հետ խնդիրներ չունեին, ավելին՝ փորձում էին նրանց հետ բարեկամական հարաբերություններ հաստատել: Քիչ չէին դեպքերը, երբ նրանք հայերին օգտակար տեղեկություններ էին հաղորդում, աջակցում պարենով և այլն: Ավազակների հիմնական զբաղմունքը թալանն ու կողոպուտն էր: Նրանք հարձակվում էին քարավանների, առևտրականների, պետական փոստային ծառայությունների վրա: Գերում էին հարուստ մարդկանց և փրկագնի դիմաց ազատում: Չթշնամանալով հայկական խմբերի հետ՝ նրանք իրենց համեմատաբար ազատ էին զգում իրենց գործունեության մեջ, իսկ հայերն առաջնորդվում էին «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է» սկզբունքով:

Իշխանությունները, լավ հասկանալով ստեղծված կացությունը, որոշում են փոխել ավազակների նկատմամբ վերաբերմունքը: Նրանք լիակատար ներում են հայտարարում ավազակներին՝ գործած բոլոր հանցանքների համար, ավելին՝ նրանց խոստանում են ոստիկանությունում և գյուղապետարաններում պաշտոններ, փող և այլ արտոնություններ, եթե նրանք իրենց հանձնեն հայ զինյալներին կամ բերեն նրանց գլուխները: Նման ամեն դեպքի համար խոստանում էին հավելյալ խոշոր դրամական պարգևներ: Նման դրամական պարգևներ էին խոստանում նաև բոլոր թուրք, լազ, հույն գյուղացիներին, որոնք կմատնեին հայերի թաքստարանների տեղերը կամ նրանց մասին կհաղորդեին օգտակար տեղեկություններ:

Մատնության առաջին զոհը, ինչպես տեսանք, դարձավ նահանգի հայդուկապետ Ջիլ Օհաննեսը: Հաջորդը օրդուցի խմբապետ Օգսենն էր, ով Ռուսաստան անցնելուց հետո որոշ ժամանակ անց՝ 1917-ի հուլիսին, նոր ձևավորած մի խմբով վերադառնում է՝ փախստական հայերին՝ կին, երեխա, ծեր և հիվանդ, Ռուսաստան տեղափոխելու համար, սակայն՝ մատնվում անհաջողության: Նա 12 ընկերներով գնում է Չարշամբա, 23-ը բարձրանում են Թազդաղ լեռը, իսկ մյուսները մնում են Թերմեի շրջանում: Վերջիններս իրենց խնամքի տակ գտնվող 30 փախստականների համար պարեն հայթայթելու ժամանակ պաշարվում են թշնամու գերազանցող ուժերի կողմից: Անակնկալի եկած խումբն անհավասար կռվում ամբողջությամբ նահատակվում է: Մի քանի օր անց ընկերների վրեժը լուծելու նպատակով Օգսենը մի քանի ընկերներով ուղևորվում է դեպքի վայրը: Ճանապարհին որոշում է հյուր գնալ իր վաղեմի բարեկամ, Յայլաջուկ հունական գյուղի քահանային: Կեսգիշերին, երբ նրանք քնած էին, քահանան դավադրաբար նրանց սպանել է տալիս: Հետագայում խմբապետ Ռաֆայել Թահմազյանը սպանում է դավաճան քահանային՝ լուծելով ընկերների վրեժը (ՕՐ., էջ 117):

Հունական Այազ Լալան գյուղում կայացած մի ժողովի որոշմամբ Ադամ Չաուշը Չարշամբայից կես ժամ հեռավորության վրա գտնվող Ջեյվար գյուղի լազերից պետք է գներ թուրքական հրացաններ, քանզի իրենց ունեցած ճապոնական հրացանների համար փամփուշտ ճարելը խիստ դժվարացել էր: Պայմանավորված օրը՝ 1917-ի մարտի 3-ին, Ադամը մի քանի ընկերներով հանդիպում է լազ ավազակապետ բալախորցի Ահմեդին, որի տնից պետք է վերցնեին խոստացված զենքը: Սակայն հյուրասիրության պահին լազ ավազակները, որ հաճախ էին գործ ունեցել հայերի հետ, անսպասելի կերպով հարձակվում են նրանց վրա և սպանում նախ՝ Ադամ Չաուշին, ապա՝ մյուսներին: Սպանդից մի կերպ ազատված Նազար Գապիկյանը, լսելով, որ հաջորդ զոհը լինելու է Արթին Աղան, մթության մեջ ազատվելով հետապնդումից, երեք ժամվա ճանապարհին անցնելով մեկ ժամում՝ դավադրության մասին լուրը հասցնում է Բալախոր գյուղում իջևանած Արթին Աղային, որն անմիջապես խմբով հեռանում է դեպի լեռների թաքստոցները: Հաջորդ առավոտյան գյուղը շրջապատած լազ ավազակները վերադառնում են ձեռնունայն[15]:

1917-ի, այսպես կոչված, հաշտությունից հետո տեղի ունեցան նաև բազմաթիվ այլ դավադրություններ, որոնց կազմակերպիչները մեծավ մասամբ կյանքով էին հատուցում իրենց մատնությունների համար: Սակայն միշտ չէ, որ դրանք հասնում էին նպատակին: Հաճախ հայկական խմբերն իրենց հետախուզության կամ հավատարիմ բարեկամների միջոցով տեղեկացված էին լինում և խուսափում ծուղակներից: Պատահում էր նաև, որ օգնության էր հասնում դիպվածը կամ այլ հանգամանք, սակայն արդեն պարզ էր, որ վտանգի օղակը խմբերի շուրջ սեղմվում էր:

Աշնան վերջերին, երբ սկիզբ առած քաղաքացիական պատերազմի պատճառով խիստ դժվարա-

ցել կամ անհնարին էր դարձել փախստականներին Ռուսաստան տեղափոխելը, գրեթե երկու տարի լեռներում և անտառներում ապաստանած փախստականների մի մասը՝ կանայք, երեխաներ, ծերեր և հիվանդներ, աստիճանաբար իջնում են լեռներից, դուրս գալիս անտառային թաքստոցներից և վերադառնում իրենց բնակավայրերը:

Մինչև աշնան վերջը Չարշամբայի շրջանի խմբերից շատերն էլ են իջնում լեռներից՝ իրենց ընտանիքի հետ լինելու և նրանց մասին հոգալու համար: Լեռներում մնում են միայն Խաչիկ Թոլումճյանի և Սուրեն Չաքրյանի խմբերը: Ռուսաստան տեղափոխված չարշամպացի մարտիկներից Հաջի Բեկին իր խմբով իշխանությունները ուղարկում են հետախուզական աշխատանքներ կատարելու, բայց նրանք միանում են Թազդաղի ընկերներին, որոնց տեղեկացնում են Ռուսաստանում տիրող իրավիճակի մասին. «Շատ աննպաստ լուրեր բերաւ ան Ռուսաստանէն քաղաքացիական և զինուորական կացութեան մասին: Այնպէս որ ջուրն ինկան Ռուսաստան անցնելու մեր յոյսերը» (ՕՐ., էջ 744): Շուտով Հաջի Բեկի ընկերները, զենքերը վայր դնելով իջնում են գյուղերը: Այդ ընթացքում Օրդուում գտնվող նրանց հրամանատարը նույնպես հետևում է իր զինվորներին:

Իշխանությունները մինչև ձմեռ փորձում են համոզել բոլոր հայ և հույն փախստականներին վերադառնալու իրենց տները: Գործընթացն արագացնելու համար միևնույն ժամանակ վարձում են բաշիբոզուկների խմբեր, որոնք հալածում են փախստականներին: Սրանց պարագլուխն էր Թոնկուլ օղլու Խալիլ անունով հայտնի ոճրագործը, որը տեղահանության օրերին սպանել էր բազմաթիվ հայերի: Նա փորձում է բարեկամանալ խմբապետների հետ, մի քանի անգամ նույնիսկ խմբերին պարեն է ուղարկում: Սակայն նրա ոճիրները չէին մոռացվել, և շատ չանցած հայ վրիժառուները կտրում են նրա գլուխը և մի ցցի անցկացնելով՝ ի ցույց դնում բոլոր նրանց, ովքեր ծրագրել էին սրա օգնությամբ ծուղակը գցել զենքերը վայր դնելուց հրաժարված խմբերին:

Դեպի Ռուսաստան

Թեև Սամսոն գավառի նավահանգիստներից փախստականներն այլևս չէին կարող անցնել Ռուսաստան, սակայն որոշ փորձեր հաջողությամբ են պսակվում. Այսպես՝ 1917 թ. աշնանը մոտ 400 հայեր զենքի ուժով պարտադրում են տրապիզոնցի նավատեր Թեֆանին, որ ազգությամբ լազ էր, Սամսոնից մոտ երեք կիլոմետր հեռու գտնվող Տեվրենց բնակավայրի ծովափից իրենց տեղափոխել Ռուսաստան: Թեև փոթորիկների պատճառով նավի ուղևորները բավականին նեղություններ են կրում, երկու երեխա էլ մահանում է, բայց, ի վերջո, նավը հաջողությամբ հասնում է Ռուսաստանի Բեյազ Դերե ծովափնյա փոքրիկ նավահանգիստը[16]:

Ռուսաստան անցնելու հաջորդ փորձը կատարում է Յոզղատի գավառի Ակ դաղի Ալիս խումբը: Խուսափելով հալածանքներից և ծուղակներից՝ խումբը որոշում է անցնել Տրապիզոն, այնտեղից էլ՝ Ռուսաստան, սակայն Տրապիզոնի մատույցներում ընկնում է թուրքերի՝ փշալարերով պատրաստած ծուղակը: Հայ զինվորները փորձում են հեռացնել փշալարերը. «Հազիվ թե անոնց դպած էին, զանգակները սկսան հնչել»[17]: Ազդանշանը լսելով՝ թուրք զինվորները շրջապատում են խումբը: Սկսվում է կռիվը: Հայ զինվորները տարբեր ճանապարհներով նահանջում են և ի վերջո, զոհեր տալով, հայտնվում ռուսական վերահսկողության գոտում: Նրանք այստեղ գերվում են և որպես թուրքեր ուղարկվում նախ՝ Տրապիզոն, ապա՝ Բաթում, որտեղ, շնորհիվ զորավար Անդրանիկի և ազգային կուսակցությունների, «...ազատ կ'արձակուին և Սարիղամիշէն Սարգիս Արմաղեանի ձիաւոր խումբին միանալով կ'անցնին Էրզրում, դէպի կռուի ճակատ»[18]:

Ձմռան և գարնան ամիսներին աչքի ընկնող իրադարձություններ չեն արձանագրվում: Օգոստոսին Առաջին աշխարհամարտում պարտված օսմանյան կառավարությունը «ներում» է շնորհում լեռներում ապաստանած ըմբոստ խմբերին:

Նահանգի հայության կյանքում սկսվում է դեպքերով հարուստ մի նոր շրջան: ■

Հղումներ

1 Չանկիրիշ (Չանկելիշ) լեռը գտնվում է Ունիեից 50 կմ հեռավորության վրա՝ հյուսիսարևմտյան կողմում: Լեռը և նրա շրջակայքը ծածկված են թավուտ անտառներով: Լեռան հյուսիսային թևը ձգվում է դեպի Սև ծովը, արևելյան և արևմտյան կողմերում արոտավայրեր են և խորունկ ձորեր, հարավային կողմում տարածվում են դժվարամատչելի ժայռոտ լեռներ՝ յոթանասուն կիլոմետր երկարությամբ: Այն իր դիրքով և բնական ամրություններով մի ամրոց է, որին ապավինում են համշենահայերի ինքնապաշտպանական ջոկատները նահանգի տարբեր գյուղերից և քաղաքներից:

2 Կ. Գալուստեան և Ն. Գաբիկեան, «Ագ-Տաղ», Մարսէյլ, 1932, էջ 61:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում, էջ 64:

5 Կ. Գալուստեան և Ն. Գաբիկեան, «Ագ-Տաղ», Մարսէյլ, 1932, էջ 92:

6 Նշվ. աշխ., էջ 94:

7 Չաթ գյուղի և նրա խմբի մասին տե՛ս Կ. Գալուստեան և Ն. Գաբիկեան, Ագ-Տաղ, էջ 26:

8 Տե՛ս, օրինակ, Կ. Գալուստեան և Ն. Գաբիկեան, Ագ-Տաղ, էջ 121-122:

9 Նշվ. աշխ., էջ 133:

10 Նշվ. աշխ., էջ 134:

11 Նշվ. աշխ., էջ 136:

12 Այս մասին մանրամասն տես նաև Կ. Գալուստեան և Ն. Գաբիկեան, Ագ-Տաղ, էջ 136-138:

13 Նշվ. աշխ., էջ 146:

14 Նշվ. աշխ. Էջ 147:

15 Այս դրամատիկ պատմության մանրամասները տես Կ. Գալուստեան և Ն. Գաբիկեան, Ագ-Տաղ, էջ 151-156 (այս հուշագրության հեղինակներից Ն. Գապիկեանը դավադիրների սպանդից հրաշքով փրկված Նազար Գապիկյանն է):

16 Մ. Թոռոլաքեան, Օրերուս հետ, Պեյրութ, 2001, էջ 338:

17 Կ. Գալուստեան և Ն. Գաբիկեան, Ագ-Տաղ, էջ 237:

18 Մ. Թոռոլաքեան, նշվ., աշխ., էջ 339:

Վանի նահանգի հայությունը Մահմուդ-Խայրի, Ֆերիտ և Յավեր կուսակալների պաշտոնավարման շրջանում 1908-1909 թթ.

Ավետիս Հարությունյան
ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆ./պաշտ., պատմ. գիտ. թեկնածու

Մուտք

1908 թ. երիթուրքական հեղաշրջումը, սահմանադրության վերականգնումը և կառավարության ձեռնարկած միջոցառումները որոշակի հույսեր և մեծ ոգևորություն արթնացրին Վանի հայության շրջանում, քանի որ հայությունն անձնական և ազգային շահերի ապահովության տեսանկյունից նախապատվությունը տալիս էր նոր՝ սահմանադրական և ոչ թե հին՝ աբդուլհամիդյան բռնապետական կարգերին: Հայ և թուրք ազգաբնակչության շրջանում սկիզբ առավ հանրահավաքների, ժողովների, հայ և թուրք ժողովուրդների «եղբայրացման» մի շրջափուլ, որը նորույթ էր Օսմանյան Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում: Ազատ արձակվեցին Վանի հայ քաղաքական բանտարկյալները, օրինական հայտարարվեց ազգային կուսակցությունների գործունեությունը, իսկ հայոց ազատամարտի բազմաթիվ գործիչներ արժանացան համընդհանուր մեծարման: Սակայն երիտթուրքական հեղաշրջումը ոչ միայն շրջադարձային փոփոխություններ չմտցրեց, այլև խոր հուսալքում առաջ բերեց Վանի նահանգի հայության շրջանում:

Վանի նահանգի հայությունը Մահմուդ Խայրի, Մահմուդ Ֆերիտ և Յավեր կուսակալների պաշտոնավարման օրոք

Երիտթուրքական հեղաշրջումից հետո Վանի նահանգում որոշ ժամանակ շարունակում էր պաշտոնավարել նախկին նահանգապետ Ալի Ռիզան: 1908 թ. օգոստոսի 23-ին Վանի հայ և թուրք «եղբայրացած» ժողովուրդները՝ հեղափոխական գաղափարների ազդեցության ներքո և զայրույթից դրդված, պաշտոնանկ ես անում ու քաղաքից վտարում սուլթանական կարգերի ջատագով և զինվորականության անվստահությունը հարուցած Վանի կուսակալ Ալի Ռիզային[1]: Վերջինս հեռագրով իրեն փոխանորդ է նշանակում Բաշկալեի մյութասարիֆին (մարզպետ - Ա. Հ.), որին մինչ այդ վոնդել էին Սարայից: Սակայն նրա փոխարեն քաղաքը կառավարելու համար հայերից և թուրքերից ընտրվում է 7 հոգուց բաղկացած մի խորհուրդ[2], որին շուտով փոխարինում է Կարինի կուսակալության հայազգի թարգման Միքայել Հեքիմյանը: Նախատեսվում էր, որ այդուհետև Վանի կուսակալության պաշտոնավարումը տրվելու էր միայն հայերին[3]: Սակայն, սպասվածին հակառակ, 1908 թ. օգոստոսին Վանի կուսակալի պաշտոնը ստանձնում է ծագումով ալբանացի **Մահմուդ Խայրի** փաշան, որը հաստատվում է կենտրոնական նոր կառավարության և զինվորական հրամանատարության կողմից[4]: Մինչ այդ Մահմուդ-Խայրին վարում էր նահանգի զինվորական հրամանատարության պաշտոնը և 1908 թ. հունվար–փետրվար ամիսներին՝ դաշնակցական Դավոյի դավաճանության և Վանի զինապահեստների հայտնաբերման լարված օրերին փրկել էր հարյուրավոր հայերի: Ահա թե ինչպես է նրան նկարագրում դաշնակցական Վահան Փափազյանը. «*Երկմիտ երկար մօրուքով, փարիքոտ, բարեժպիտ, թոյլ և անվարչագէտ մէկը, թէեւ մեր հանդէպ բարի և լայնամիտ: Սահմանադրական առաջին օրերուն խեղճը գլուխը կորսնցուցած էր. մեզմէ կը տեղեկանար իրար հրմշտկող դէպքերու մասին. մեզմէ խորհուրդ կը հարցնէր իր ընելիքներու և բռնելիք դիրքին նկատմամբ: Բայց կը զգար որ իր օրերը համրուած էին, միշտ դժգոհութիւնները և գանգատները մեզի կը վստահէր - դժգոհութիւններ կեդրոնի անհասարակ և անվճռական քաղաքականութեան և դէպի երկրի փոքրամասնութիւնները յարուցուած նեղմիտ և անհանդուրժող վերաբերմունքին առթիւ: Թէեւ թիւրքական պաշտոնեայ, բայց Ալպանացի հայրենասէր մըն էր և չէր ծածկեր, որ իր հայրենիքը անջատուած կ'ուզեր տեսնել թիւրքերէ. «ասոնք մարդ դառնալիք չունին», կ'ըսէր...*»[5]:

Մահմուդ-Խայրիի կարճատև պաշտոնավարումից հետո 1908 թ. հոկտեմբերին նահանգի նոր կուսակալ է նշանակվում **Ֆերիտ փաշան**, որը մինչ այդ եղել էր Օսմանյան առաջին խորհրդարանի անդամ, սակայն իր ազատական հայացքների համար 20 տարուց ի վեր աքսորված էր եղել Ֆիզա (Աֆրիկա)[6]:

1909 թ. մարտի 20-ին անհաջող մահափորձ իրականացվեց Մ. Ֆերիտի դեմ: Գտնվեցին մարդիկ, որոնք

այդ հարցում փորձեցին անգամ մեղադրել հայերին: Սակայն նորանշանակ կուսակալը կտրականապես հերքեց նմանատիպ հերյուրանքները և հետաքննող մարմիններին ներկայացրեց ոմն Քյամիլ բեյին[7]:

Ֆերիտից հետո Վանի կուսակալությունը ժամանակավոր պաշտոնակատարի կարգավիճակով կառավարում է նրա տեղակալը՝ **Յավեր** փաշան[8], որի օրոք սրվում են հարաբերություններն իր և նահանգի զինվորական հրամանատարի միջև: Կուսակալի մի հեռագրից պարզվում է, որ նա զինվորական հրամանատարի հետ գժտվել էր այն բանի համար, որ վերջինս իր հայացքներով «reactionnaire» էր և իրեն համարում էր կուսակալի հակառակորդը[9]:

1908 թ. հուլիսյան հեղաշրջումից հետո՝ հաջորդող 9 ամիսների ընթացքում Վանի նահանգում վիճակը կարծես թե տանելի էր: Այդ առիթով Գ. Զոհրապը գրում է. «*Վան, Կարին, Բաղէշ, Խարբերդ, Մուշ, անդորրութիւն կը տիրէ. հայահալած քաղաքականութիւնը իրապէս վերցած է. հարկաւ տեղ- տեղ անհատական դէպքեր կը պատահին տակաւին. բայց երկրին որ մասին մէջ արդեօք այդ տեսակ դէպքեր չեն պատահիր. բոլոր հայաբնակ գաւառները, օսմանեան համերաշխութեան անկեղծապէս կուսակից և հետեւապէս «հայասէր» վալիներ խրկուած են և անոնք կը պահապանուին իրենց պաշտօնին վրայ, հակառակ կարգ մը դաւերու: Զինուորական հրամանատարը... հեռացուեցաւ այդ կողմերէն... Այդ գաւառներուն մէջ և Թուրքիոյ ամէն քաղաքներու մէջ՝ հայերը իրենց գործովը, առուտրովը, ազատօրէն կը զբաղին, դրամ կը շահին, պաշտպանութիւն կը վայելեն, յարգանք կը տեսնեն կառավարութենէն: Նոյնիսկ Սուլթան Մահմուտի, Ապտիլ Մէճիտ և Ապտիլ Ազիզ կայսրերուն օրով այս ապահովան բարօրութիւն տեսած չէին*»[10]:

Միակ անհանգստացնող հանգամանքն այն էր, որ արդեն որերորդ տարին նահանգում պարբերաբար կրկնվում էր սովը: Այդ մասին մենք տեղեկանում ենք Ռ. Զարդարյանի 1908 թ. դեկտեմբերի 27-ի հաղորդագրությունից, ըստ որի 1908/1909 թ. ձմռանը Վանի նահանգում 12 հազար մարդ սոված էր, նրանցից շատերը մահանում էին սովից և ծյուրումից, իսկ Թիմարում մարդիկ ճարահատյալ սնվում էին թեփով և կտավատով[11]:

Իրադրությունը Վանի նահանգում 1909 թ. մարտի 31-ի պետական հեղաշրջման և Ադանայի 1909 թ. ապրիլյան կոտորածների շրջանում

Աբդուլհամիդյան 1909 թ. մարտի 31-ի պետական հեղաշրջման և Ադանայի 1909 թ. ապրիլյան կոտորածների ժամանակ ի հայտ եկան այն հակասությունները, որ գոյություն ունեին հին և նոր վարչաձևերի միջև: Միաժամանակ, հայությունը համոզվեց, որ «*բոլենիին դեմ բազմագլուխ հիդրա մը ցցուած կը տեսնէր իր առջև՝ թոյնով ու ժանիքներով զինված*», որ «*թուրքն՝ ծեր թե ժէոն՝ նոյն գայլն է քանասարիկ*»[12] և, որ իթթիհատն արդեն իսկ հագել էր սուլթանի պատմուճանը: 1909 թ. մարտի 1-ին Վանում հրատարակվող «Հորձանք»

Արշակ Վռամյան

շաբաթաթերթի էջերում Արամ Մանուկյանը դժգոհում էր, որ իթթիհատը հրաժարվում էր ճանաչել «*մանր» ազգերի գոյությունը, քանի, որ բոլորին համարում էր «օսմանլի»*[13]:

Վանի նահանգում տիրող ընդհանուր խառնաշփոթության պայմաններում, երբ Ադանայից ստացվում էին կոտորածի և ահաբեկման լուրեր, զինաթափված Վանի հայությունը ևս սոսկալի կոտորածի պիտի ենթարկվեր, եթե 1909 թ. ապրիլի 7-ին ձյան տեղատարափը թուրքերին «*իրենց որջերուն մէջ չ'արգիլափակեր*» և, եթե Թայար բեյը հանրահավաք գումարելով «*մոսկոֆեան վրէժխնդրութեան ահացուցիչ հեռանկարով» չսասրեր «կարմիր խուժանի*» գազանային ախորժակները[14]:

Սակայն ընդամենը մի քանի օր անց՝ ապրիլի 10-ին, սուլթանի կողմնակից Այգեստանի 70 թուրք զինվորներ, լսելով մայրաքաղաքում կատարված նոր հեղաշրջման և Ադանայի դեպքերի մասին, ըմբոստանալով իրենց սպաների դեմ, զինվեցին և «*կեցցե՛ սուլթանը, կորչի՛ սահմանադրությունը*», «*կորչի՛ ազատությունը, մենք ցանկանում ենք միայն շարիաթ*» խժալուր աղաղակներով մտնելով քաղաք, մի քանի հայերի էլ պարտավորեցրին կառքերից ցած իջնել ու խոնարհվել իրենց առջև[15]:

Նրանք միանալով քրդական ցեղապետեր՝ «Քյոռ» Հյուսեինին, Շաքիր աղային, Միր Մեհին, Սեիդ Ալիին և ուրիշներին, պատրաստվեցին կոտորածի: Իմանալով այդ մասին՝ քաղաքի շուրջ 7000 հայեր հավաքվեցին կուսակալի բնակարանի մոտ, պահանջեցին կանխել իրենց գլխին կախված վտանգը: Սակայն

կուսակալ Յավերը հայերին միայն խոստումներով հանգստացրեց:

Վանեցիները, վախենալով նոր անկարգություններից, հաջորդ մի քանի օրերին փակեցին քաղաքի շուկան, որովհետև ապրիլի 13-ին նախատեսվում էր հարձակում շուկայի վրա, որն էլ ազդանշան պետք է հանդիսանար Վանում՝ Ադանայի նման նոր ջարդեր սկսելու համար, սակայն ապրիլի 14-ին Կ. Պոլսում սուլթանի նստավայրը՝ Եըլդըզը («Աստղ» – Ա. Հ.), գրավելու և սուլթան Աբդուլ Համիդին երկրորդ անգամ գահընկեց անելու մասին լուրը Վանում կոտորածի սպառնալիքը վերացրեց:

Ապրիլի 15-ին Վան հասավ իշխանափոխության հեռագիրը, որը կարծես սգի մեջ թողեց նահանգի թուրքերին և քրդերին[16]: Սակայն նույն օրը Սարայ գավառի քրդական ավազակախմբերը, որոնք տեղեկություն չունեին կատարված նոր իշխանափոխության մասին, Վանի թուրքական զորքերի օրինակով, աղաղակելով «*շարիաթ ենք պահանջում*», խուժեցին Սարայի հեռագրատուն, հայհոյեցին և ծեծեցին հայերին, փակեցին այնտեղի երիտթուրքական կոմիտեի ակումբն ու հայերի ընթերցասրահը, մինչև որ լսելով եղած փոփոխության մասին՝ հանդարտվեցին:

Հաջորդ օրը՝ ապրիլի 16-ին, ավազակապետ Միր-Մեհեն՝ իր 40 ավազակներով հարձակվեց Նորդուզ գավառի Կանգուառ գյուղի վրա, սպանեց յոթ հայերի և թալանի ենթարկեց գյուղը, որովհետև նոր սուլթան Մեհմեդ V-ի գահակալության պատվին Վանում արձակված 101 թնդանոթների ձայներից նա եզրակացրել էր, որ քաղաքում կոտորածն արդեն իսկ սկսվել էր: Սկսված ազգամիջյան ատելության մթնոլորտում Արճեշում սպանվեցին երկու հայեր, իսկ մեկն էլ վիրավորվեց[17]:

Վանի հայությունը, որը սահմանադրական կարգի հիմնական արտահայտիչն էր և պաշտպանը, հանդես էր գալիս նաև քաղաքական իր պահանջներով: Այսպես, 1909 թ. գարնանը, երբ Աբդուլ Համիդի փոխարեն սուլթան հռչակվեց Մեհմեդ V-ը, մայիսի 1-ին փակելով վարժարանները՝ նրանք Վանում կազմակերպեցին հանրահավաք՝ «*Մենք չենք գոհանա Համիդի փոխվելով ու Մուհամեդի նստելով, մենք պիտի ձգտենք թագերի կործանմանը*» կարգախոսով: Այնուհետև, կանանց ու տղամարդկանց մի հոծ բազմություն շարժվեց դեպի Կարմրավորի վանք՝ մայիսի 1-ը որպես աշխատավորության օր տոնելու և դաշտահանդես կազմակերպելու համար: Հայերն առաջարկեցին թուրքերին միանալ իրենց պահանջին և մասնակցել մայիսմեկյան տոնակատարությանը, սակայն նրանց առաջարկը մնաց անկատար: Դեռ ավելին, Վանի մահմեդական ազգաբնակչության մեծամասնությունը՝ գտնվելով մոլեռանդ կրոնավորների ազդեցության տակ, ոչ միայն անհամատեղելի էր համարում, որ իրենց կանայք ու աղջիկները դուրս գան հարեմներից և հայերի հետ զբոսնեն քաղաքում, այլև թշնամաբար էին տրամադրված ընդհանրապես հայերի նկատմամբ՝ չթաքցնելով իրենց բուն մտադրությունները. «*ոչ, այսպես չի լինի, հայերն՝ գեավուրները կպրծել են, ուրեմն... պիտի կոտորել հայերին, կրկնել Կիլիկիայի ջարդերը*»[18]:

Կոտորածների այդ սպառնալիքը մի խումբ անհեռատեսների կողմից տարածվեց հայերի մեջ, որոնք էլ ապահովության համար դիմեցին Վանի Հայոց առաջնորդարանի օգնությանը, որն էլ՝ իբրև ինքնապաշտպանության միակ տարբերակ, առաջարկեց կազմակերպել գյուղական պահակախմբեր՝ զինված պետական միջոցներով: Կուսակալի փոխանորդի անմիջական միջամտությամբ կոտորածի վտանգը կանխվեց և մի քանի թուրք սադրիչներ բանտարկվեցին:

Սակայն վիճակը դրանով չփոխվեց: Հին վարչակարգի կողմնակիցները նախատեսում են նաև 1909 թ. մայիսի 4-ին Ադանայի նման նոր խժդժություններ կազմակերպել Վանի շուկայում[19]: Ինչպես ժամանակի մամուլն էր նշում «*մութ դարերը ուզում են նոր ջարդերով վրեժխնդիր լինել Աբդուլ Համիդի գահընկալության համար*»[20], սակայն հայերը փակեցին Վանի շուկան, որով ձախողվեց կոտորածի իրագործումը:

Օգտագործելով առիթը Յավերը հալածանքներ սկսեց հայկական կուսակցությունների ներկայացուցիչների նկատմամբ՝ «*իբրև ազգերի համերաշխութիւն վրդովողների*», որովհետև Կ. Պոլսից ստացված հրամանի համաձայն անհրաժեշտ էր երկիրը մաքրել «ռեակցիոն» տարրերից[21]: Որպես հետևանք բանտարկվեցին Վանի Քաղաքային ժողովի ատենապետ՝ Նշան Քալջյանը և Աղթամարի Քաղաքային ժողովի անդամ-քարտուղար՝ Հովսեփ Խլղաթյանը: Առաջինը՝ առանց ապացույցների ամբաստանվեց որպես մայիսի 4-ին Վանի շուկան փակելու վրդովեցուցիչ լուրերի տարածող, իսկ երկրորդը՝ որպես Գավաշի կայմակամի (գավառապետ - Ա.Հ.) հասցեին զրպարտություններ սերմանող, երկրի ներքին խաղաղությանը և օսմանյան ազգերի համերաշխությանը խոչընդոտող մի խռովարար[22]:

Նշան Քալջյանը Քաղաքային ժողովի ազդեցիկ և խելացի անդամներից մեկն էր, որը մասնագիտությամբ փաստաբան էր, լավ գիտեր թուրքերեն և չէր ենթարկվում կառավարության սադրանքներին: Իրականում նա համարձակություն էր ունեցել մերժելու կուսակալ Յավեր փաշայի մի քանի առաջարկություններն այն մասին, որպեսզի համաձայնագիր ստորագրվեր Վանի հայության և քուրդ ավազակապետ Հյուսեին փաշայի ու ոճրագործ որոշ ցեղապետերի միջև: Իշխանությունները ցանկանում էին տպավորություն ստեղծել, իբր Վանի նահանգում տիրում էր ներքին խաղաղություն, և որ թուրքերը, քրդերն ու հայերն ապրում էին հաշտ ու համերաշխ:

Յավերը Քաղաքային ժողովին առաջարկել էր ստորագրել մեկ այլ գրություն ևս, ըստ որի ինքը՝ որպես կուսակալի պաշտոնակատար, ելնելով օսմանյան հայրենիքի շահերից, իբր լավ էր կառավարում նահանգը և առաջիկայում կարող էր հավակնել նահանգապետի պաշտոնին: Այդ մերժումներին զուգահեռ Վանի Քաղաքային ժողովը հանդգնել էր նաև բողոքել Յավեր փաշայի այն արարքի դեմ, որ նա

ժողովի անդամների ներկայությամբ համբուրել էր Մանդան գյուղի հարստահարիչ և ոճրագործ Սայիդ բեյի ճակատը:

Յավերն այդ ամենի պատճառը համարում էր Քաղաքային ժողովի ինքնուրույն և անհնազանդ գործունեությունը և իր վրեժն ուզում էր լուծել բանտարկել տալով նրա ազդեցիկ անդամներին: Թուրքական դատարանը, որը սահմանադրությամբ անկախ էր հռչակված գործադիր իշխանությունից, ակամայից գործիք է դառնում Յավեր փաշայի նենգությանը: Հայադավ գործելաոճի ընդհանուր համատեքստում Յավերի կուսակալության օրոք հալածանքների ենթարկվեցին նաև «Ազատամարտ»-ի խմբագրակազմի անդամ Արշակ Վռամյանը և դոկտոր Հովսեփ Դավթյանը[23]: Ի դեպ, Ադանայի կոտորածներից և Վանի խառնիճաղանջ դեպքերից հետո էլ Ա. Վռամյանը դեռևս իթթիհատի հետ համագործակցության հույսեր էր փայփայում: «Биржевые ведомости»-ի և «Русские ведомости»-ի թերթերի ռուս լրագրող և գրող Արիադնա Տիրկովայի հետ զրույցի ժամանակ նա համոզմունք էր հայտնում, որ «*այո, իհարկե, իթթիհատը շատ սխալներ ունի, բայց երկա՛ր ժամանակ է, որ նրանք իշխանության գլուխ են: Մի մոռացեք, թե ինչ ահավոր ժառանգություն են նրանք ստացել համիդյան վարչակարգից: Նրանք ձգտում են հաստատել օրինականություն: Համենայն դեպս, նրանց հարկավոր է համարել սահմանադրության անկեղծ բարեկամներ: Եթե դուք իմանայիք, թե ինչ ահավոր լծի տակ էր ապրում երկիրը մինչև հեղափոխությունը: Եվ հետո, երիտթուրքերի մեջ կան արդար մարդիկ, որոնց վրա կարելի է հենվել: Դրանցից են՝ ներկա խորհրդարանի նախագահ Ահմեդ Ռիզա-բեյը, Հյուսեին Ջահիդը, և վերջապես Թալաաթ բեյը, որը կրթություն չուներ, սակայն բոցաշունչ և արդար հայրենասեր էր, նա հասկանում է, որ Թուրքիայի փրկությունը բարենորոգումների մեջ է»: Ա. Տիրկովայի այն հարցին, թե ո՞րն է հայ ժողովրդի փրկությունը, չէ՞ որ Ադանայում կազմակերպվել էր կոտորած և ո՞վ կարող է երաշխավորել, որ այն չի կրկնվի, Ա. Վռամյանը կտրուկ և շտապ պատասխանում է. «Ո՛չ, ո՛չ, դա չի կարող կրկնվել, Ադանայի կոտորածները հին վարչակարգի մնացորդն էր: Իթթիհատն ինքն էր վրդովված: Նրանք ամեն ինչ արեցին...»[24]:

Հետագայում երիտթուրքերի գլխավոր ղեկավարը՝ Թալեաթը, որին Ա. Վռամյանը համարում էր ամենաազնիվ և մաքուր մարդկանցից մեկը, դարձավ հայ ժողովրդի դահիճը և հենց Ա. Վռամյանին ու նրա կուսակցական ընկերներին ոչնչացնողը:

Այդուհանդերձ, Յավերի պաշտոնավարման շրջանում որոշ միջոցառումներ իրականացվեցին անօրինականություններն ու անարդարությունները հաղթահարելու ուղղությամբ: Նրա պաշտոնավարման օրոք իր հակահայկական գործունեությամբ աչքի էր ընկնում Գավաշի կայմակամը, որի արարքների դեմ բողոքում է Աղթամարի կաթողիկոսական տեղապահ Հովսեփ եպիսկոպոսը: Խնդիրը քննելու համար Յավերի անմիջական նախաձեռնությամբ ստեղծվում է քննիչ հանձնաժողով, որի անդամներից մեկն էր Վանի առաջնորդական տեղապահ Ջավեն վարդապետը[25]:

Բացի այդ, Յավերի օրոք Վանի նահանգի թուրք զինվորականության նախաձեռնությամբ փաստեր հավաքվեցին և խիստ քննության ու դատապարտման ենթարկվեցին նահանգի կաշառակեր բոլոր պաշտոնյաները: Ամբաստանությունից զերծ չմնաց նաև Արճակի մյուդիրը (գավառապետ - Ա.Հ.), որը 1908 թ. Դավոյի դեպքերի և Վանի խուզարկության օրերին պատուհաս էր դարձել գավառի ողջ հայության գլխին[26]: Արդյունքում, մեծ քանակությամբ զեղծ և անկարող պաշտոնյաներ վտարվեցին: Դժբախտաբար, Վանի հայերի մեջ չգտվեցին բավականաչափ թուրքերեն իմացողներ, որոնք կարողանային ստանձնել թափուր մնացած պաշտոնները:

1909 թ. հուլիսի սկզբին Յավերի փոխարեն[27] Վանի նոր կուսակալ է նշանակվում ծագումով օսեթ Բեքիր Սամի բեյը[28]:

Հայ-քրդական հարաբերությունների կարգավորման փորձերը

Քաղաքական հայացքների և հակումների խիստ հստակ արտահայտված տարբերակման առումով Վանի հայերն ու քրդերը 1908 թ. հեղաշրջման և օսմանյան սահմանադրության առաջին իսկ օրերից ակամայից հայտնվեցին գործունեության հակադիր ճակատներում: Եթե հայերը ջերմ սահմանադրականներ էին, իսկ ՀՅԴ-ն համաձայնության ու համագործակցության մեջ էր երիտթուրքերի հետ, ապա քրդերը, որոնք հակասահմանադրական ընդգծված մի ուժ էին՝ թշնամի նոր վարչաձևին, մնացին սուլթանական միապետության պաշտպանության դիրքերում և շարունակեցին հետևել այն նույն քաղաքականությանը, ինչ որ կար համիդյան ժամանակաշրջանում:

Հայ–քրդական կնճիռը լուծելու ակնկալիքով 1908 թ. սեպտեմբերի սկզբներին երիտթուրքական իշխանությունները Վան են հրավիրում նախապես հնազանդության և հավատարմության երդում տված քուրդ ցեղապետերին, որոնք պարտավորվում են և հայտարարում հայերի հետ հաշտ ու համերաշխ ապրելու և գործունեություն ծավալելու մասին բացառապես սահմանադրության դրույթների համաձայն: Այս առիթով թերևս կարելի է առանձնացնել Ադիլջևազի գավառի հայտնի կալվածատեր, համիդիե զորքերի հրամանատար Հայդերանլը Հյուսեին փաշայի՝ Վանի զինվորական ընդհանուր հրամանատարին ուղղված զեկույցը, որում նա նշում էր, թե «*անցեալում հայերի վրա գործ դրված բարբարոսութիւնների վերաբերմամբ ինքը բնաւ մեղք չունի, որովհետև այն, ինչն ինքն է գործել, դա միայն Եղլդրզից ստացված որոշ ցուցմունքների հետևանքն է*» և որ ինքը «*իրան տրված հրահանգների միայն 1/10–ը հազիվ է գործ դրել*»[29]:

Բանն այն էր, որ սուլթանական վարչակարգը Հյուսեին փաշային հրամայել էր բնաջնջել Ադիլջևազի գավառի ամբողջ հայությանը, բայց նա պարծենում էր, որ բավարարվել էր միայն այնտեղի հայերին կոդոպտելով: Հյուսեին փաշային պատժելու և նրան Ադիլջևազից հեռացնելու հայերի բազում բողոքները

Վանի եկեղեցի

և պահանջները կառավարության կողմից անտեսվել էին: Դրա հետևանքով Կարինի ու Բայազետի սահմաններից վռնդված փաշան հաջող ապաստան գտավ Վանում և Արճեշում, որտեղ հավաքվել էին համիդյան վարչակարգի հետադիմական տարրերը[30]: Դեռ ավելին, մեկ ամիս էր՝ ինչ կենտրոնական կառավարությունից հրաման էր ստացվել հավաքելու համիդիե զորքի մոտ պահվող կառավարական զենքերը, սակայն հրամանը ոչ միայն չէր գործադրվել, այլև Հյուսեին փաշան համարձակվել էր 600 հոգուց բաղկացած զորաժողով կազմակերպել Արճեշում[31]: Անդրադառնալով Հյուսեին փաշայի չարագործություններին՝ «Մշակ» պարբերականը մատնանշում է. «*Ո՛չ մի քիւրդ այնչափ չարիք չէ պատճառել հայերին, այնչափ զրկանքներ չէ արել, որչափ քիւրդ Հիւսէին փաշան. բայց սահմանադրական կառավարութիւնը վերջին օրերում նրան պարտեց «միրլիվայի» աստիճանով (գեներալ-մայորի, կամ կիսաբաժնի հրամանատարության տիրոջոս). ուրեմն ինչու վախենայ նա ուրիշ չարիքներ անելուց, մինչդեռ Թիւրքիայից զատ ուրիշ որևէ աշխարհում նրան անարգութեան սիւնին կը կապէին և մեղաւորների աթոռի վրա կը նստեցնէին, իսկ մենք դժբախտաբար հակոտնեայ աշխարհում ենք ապրում*»[32]:

Հակառակ երիտթուրքերի կողմից հայ-քրդական խաղաղ գոյակցության հռչակված սկզբունքներին, 1908 թ. օգոստոսին թագուցի Հյուսեին բեյի ծառաները Ախոռիկ գյուղում դատաստան են տեսնում գյուղի երկու հայ բնակիչների՝ մոր և որդու նկատմամբ միայն այն բանի համար, որ նրանք համարձակվել էին իրենց դժգոհությունն արտահայտել Հյուսեին բեյին[33], որի տղայի հարսանիքի ժամանակ հարսնևորների ձիերը փչացրել էին իրենց ցանքսերը: Հայերը քանիցս դիմեցին դատարան, սակայն երիտթուրքական արդարադատությունը չբարեհաճեց ձերբակալել նրանց՝ պատճառաբանելով, որ «*միթէ հայի սպանութեան պատճառով արժէ ձերբակալել, բանտարկել թիւրքին կամ քիւրդին*»[34]:

Սակայն հակառակ երիտթուրքերի կողմից հայ-քրդական խաղաղ գոյակցության հռչակված սկզբունքներին, քրդական անպատժելիության հետևանքը լինում է այն, որ նահանգում քրդերի կողմից իրականացվում են նոր հանցագործություններ: Այս առումով բավականին մտահոգիչ էր էթնիկ ատելության հողի վրա Վանի նահանգում կատարված սպանությունների վիճակագրությունը: Միայն 1909 թ. մարտ-մայիս ամիսներին Արճեշի գավառակում սպանվել էր 6, վիրավորվել՝ 1, Գավաշի և Կարճկանի գավառակներում սպանվել էր 2, վիրավորվել՝ 3, իսկ Նորդուզի գավառակում սպանվել էր 7 հայ[35]: Ցավալի էր սակայն, որ այս եղեռնագործությունների հեղինակներից ոչ ոք չէր ձերբակալվել և պատժվել: Սակայն, երբ 1909 թ. հուլիսին մի հայ երիտասարդի սպանության պատճառով Արճեշում կալանավորում են 5 թուրքի, տեղի ազդեցիկ քրդերից մեկը՝ Հաջի Հասանը, բացականչում է. «*Ի՞նչ է նշանակում մի հայի սպանութեան պատճառով հինգ թիւրքեր բանտարկել*»[36]:

Հայերի սպանությունների և քրդերի անպատժելիության առումով ուշագրավ տեղեկություն է վկայակոչում Առաջին աշխարհամարտի նախօրյակին Մոկս այցելած Հ. Օրբելին, ըստ որի՝ Վասպուրականի քրդերը գազանակերպ էին, իսկ այնտեղի բոլոր բեյերի խղճին ծանրացած էին բացառապես անմեղ մարդկանց նկատմամբ կատարված մի շարք սպանություններ[37]:

Հեղափոխությունից հետո Վանի նահանգապետությունը որոշակի միջոցառումներ է ձեռնարկում անհնազանդ քրդերին պատժելու ուղղությամբ: Արդյունքում, ձերբակալվում են անսաստ Մլանցի Մահմադ, Թակուրցի Հյուսեյին և Շամզկցի Սադամ բեյերը՝ սահմանն անցնելու և Պարսկաստանում ալան-թալան կազմակերպելու համար: Հնազանդեցվում են նաև հայդարանցի Հաջի-Թամիր և «Քյոռ» Հյուսեին փաշաները՝ Արճեշ-Ալջավազում հայերի վրա կատարած բռնությունների և կոտորածների համար[38]: Միաժամանակ, փորձեր են ձեռնարկվում Շատախն ավերող ավազակապետ Միր-Միհեին հպատակեցնելու ուղղությամբ, որն ամբաստանվում էր ոչ միայն հայերին սպանելու և հայկական գյուղերը թալանելու մեղադրանքով, այլև կառավարական զորքերին վնաս պատճառելու համար[39]: Այդ գործում մեծ աշխատանք է իրականացնում Շատախի հայ կայմակամ Նիկողայոս էֆ. Աղասյանը[40]:

Քրդերին պատասխանատվության ենթարկելու գործում որոշակի աշխատանք կատարեց Վանի զինվորական հրամանատար Յավերը, որը կուսակալի փոխանորդ եղած ժամանակ ձերբակալեց Արճակի մյուդիրության սահմանի մոտ գտնվող քուրդ Սայիդ բեյին: Վերջինիս բանտարկության ժամանակ խորհրդարանը Մանտան գյուղի գյուղացիների արդարացի բողոքների հիման վրա որոշում կայացրեց, որ Սայիդի հրոսակները հեռանան գյուղից: Թեև հրամանի կատարման մասին իսկույնևեթ հեռագրվեց Արճակի մյուդիրին, սակայն այն մնաց թղթի վրա, քանի որ Յավերը մյուդիրից պահանջել էր որոշումը չգործադրել[41], որի հետևանքով էլ Յավերը «*համբուրելով ճակատը ազատ արձակեց զայն*»[42]:

Վերջաբան

Այսպիսով, 1908 թ. օգոստոսից մինչև 1909 թ. աշուն Մահմուդ-Խայրի, Մահմուդ Ֆերիտ, Յավեր, Բեքիր Սամի փաշաների օրոք Վանի նահանգում վիճակը կարծես թե տանելի էր: Նրանց օրոք որոշակի միջոցառումներ իրականացվեցին անօրինականությունների և անարդարությունների հաղթահարման ուղղությամբ: Վանի նահանգի թուրք զինվորականության նախաձեռնությամբ փաստեր հավաքվեցին և խիստ քննության ու դատապարտման ենթարկվեցին նահանգի կաշառակեր բոլոր պաշտոնյաները: Հակասությունները հին և նոր վարչաձևերի միջև ի հայտ եկան 1909 թ. մարտի 31-ի պետական հեղաշրջման և Ադանայի 1909 թ. ապրիլյան կոտորածների ժամանակ, քանի որ հայությունը սահմանադրական կարգերի հիմնական արտահայտիչն էր և պաշտպանը: 1909 թ. ապրիլի 7-ից մայիսի 4-ը Ադանայի կոտորածների օրինակով խժդժություններ կազմակերպվեցին նաև Վանում և հալածանքներ սկսվեցին հայ կուսակցական գործիչների նկատմամբ: Հայությունը սթափվեց հեղափոխական պատրանքներից և ճանաչեց իթթիհատի իրական դեմքը, քանի որ Վանում նորից սկսեցին իշխել բռնությունը, կամայականությունը և բանտային հալածանքները: ■

Հղումներ

1 Տես АВПРИ РФ, ф. Посольство в Константинополе, 1908 г., д.1595, л. 88.
2 Տես «Արեւ», Ալեքսանդրիա, 1908 թ. հոկտեմբերի 9, թիւ 130:
3 Տես Ասպարեզ», Ֆրեզնո, 1908 թ. սեպտեմբերի 18, թիւ 6:
4 Տես Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Ալեքսանդրիա, 1929, էջ 92:
5 Փափազեան Վ., Իմ յուշերը, հատոր երկրորդ, Պէյրութ, 1952, էջ 27:
6 Տես «Գործ», Թիֆլիս, 1908 թ. հոկտեմբերի 25, թիւ 38:
7 Տես АВПРИ РФ, ф. Политархив, 1909, оп.482, д.717, л.12об.:
8 Յավերը թուրք-պարսկական 1905-1908 թթ. հակամարտության ժամանակ վարում էր թուրքական զինվորական ընդհանուր հրամանատարի պաշտոնը: Նա էր, որ 1907 թ. ոմբակոծեց և 12 նավերով պաշարեց Աղթամարը՝ յոթ հայ ֆիդայի-հեղափոխականներին բռնելու համար: Տես «Հորիզոն», Թիֆլիս, 1909 թ., օգոստոսի 8, թիւ 6:
9 Տես «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. մայիսի 2, թիվ 91:
10 Ջոհրապ Գ., Հայ պատգամաւորի մը հաշուետուութիւնը (հեղինակի նկարով), Կ. Պոլիս, 1910, էջ 18-19:
11 Տես Ջարդարեան Ռ., Յօդուածներ, Իսթանպուլ, 2015, էջ 79:
12 Երամեան Հ., նշվ. աշխ., հ.Բ, էջ 101, 105:
13 «Հորձանք», Վան, 1909 թ., թիվ 4, էջ 84:
14 Տես Երամեան Հ., նշվ. աշխ., հ.Բ, էջ 105:
15 АВПРИ РФ, ф. Политархив, 1909, оп.482, д.717, л.19:
16 Տես «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. մայիսի 14, թիւ 100:
17 Տես Անդ.:
18 «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. հունիսի 6, թիւ 119:
19 Տես Մատենադարան, ֆ.2, Կյուրեղ Սրապյանի արխիվ, ց.43, թղթ.82, վավ.1044, թ.1:
20 «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. հունիսի 6, թիւ 119:
21 Տես «Հորիզոն», Թիֆլիս, 1909 թ., օգոստոսի 8, թիւ 6:
22 Տես «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. հուլիսի 5, թիւ 144:
23 Տես «Կոհակ», 1909 թ. օգոստոսի 15, թիւ 12, էջ 139:
24 Тыркова А., Старая Турція и младотурки. Годъ въ Константинополе, Петроградъ, 1916, с.76.
25 Տես «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. հուլիսի 5, թիւ 144:
26 Տես «Գործ», Թիֆլիս, 1908 թ. սեպտեմբերի 14, թիւ 4:
27 Հետագայում Յավեր փաշան մասնակցեց 1912թ. Բալկանյան պատերազմներին և գերեվարվեց: Տես http://www.lostbulgaria.com/?p=2835, նաև http://bolgari.org/sad14_11_1912g__%E2%80%93_makedono_odrinskoto_opylchenie_pleniava_10_xiliadniia__korpus_na_iaver_pasha_v_belomorieto-e-585.html:
28 Բեքիր Սամի բեյը (Կունդուխ) (1865/1867-1933) ռուսական բանակի նախկին գեներալ-մայոր, ծագումով օսեթ՝ Մուսա Կունդուխ՝ Կունդուխով փաշայի (1818-1889) որդին էր: Մուսա Կունդուխ փաշան Ռուսաստանից անցել էր Օսմանյան Թուրքիայի կողմը, դարձել Էրզրումի թուրքական բանակի հրամանատարը և Օսմանյան Թուրքիայի մի քանի հազար մոհաջիրների ղեկավարը: Բեքիր Սամի բեյը ծնվել է Հյուսիսային Օսեթիայի Սանիբա գյուղում: Կ. Պոլսի մոտ գտնվող Գալաթասարայ կղզու միջնակարգ դպրոցում բակալավրիատի աստիճան ստանալուց հետո, նա սովորել է Փարիզի քաղաքական գիտությունների դպրոցում և մինչև Վան գնալը վարել է Պետերբուրգում Օսմանյան Թուրքիայի դեսպանատան քարտուղարի, Մալթայում Օսմանյան Թուրքիայի հյուպատոսի, Ամասիայի կառավարչի պաշտոնները: Այդ մասին ավելի հանգամանորեն տես К. С.Челахсаты, Осетия и осетины, Владикавказ, 2009, նաև Шлыков П. В., Бекир Сами-бей (Кундух), в сборнике Российская историческая энциклопедия, том 2, Москва, 2014, նույնի՝ նաև «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. նոյեմբերի 12, թիւ 251 նաև https://buildwiki.ru/wiki/Bekir_Sami_Kunduh,https://ru.wikipedia.org/wiki/%D0%9A%D1%83%D0%BD%D0%B4%D1%83%D1%85,_%D0%91%D0%B5%D0%BA%D0%B8%D1%80_%D0%A1%D0%B0%D0%BC%D0%B8),նաևhttps://www.turkcebilgi.com/bekir_sami_kunduh.
29 «Մշակ», Թիֆլիս, 1908 թ. հոկտեմբերի 2, թիւ 216: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Բայազետի քրդական խալեգանցի աշիրեթն իր համար առաջնորդ էր ընտրել Պաղնոց գյուղի հայդարանցի աշիրեթապետ Քոռ Հյուսեին փաշային, որը Վանի նահանգի Մանազկերտ գավառի Սարիսու գյուղից էր: Նա ոչ թե կույր էր, այլ աչքերից մեկը շիլ էր: Քալալցիներին, զիբթանցիներին, թորթոփցիներին հնազանդեցնելուց հետո Էրզրումի վալիները Հյուսեինին նշանակեցին նույն նահանգի Բայազետի շրջանի Այնթափի կայմական: 1890 թ. նրան շնորհվեց սահմանապահ համիդիե գնդի գնդապետի աստիճան: Շնորհիվ իր նենգամտության, դիրքի, պաշտոնների և թուրք դեսպան Շաքիրի հովանավորչության, Հյուսեինը ոչ միայն մեծ հարստություն դիզեց կանխիկ դրամով, տոկոսաբեր թղթերով և եվրոպական բանկային ավանդներով, այլև յուրացրեց Պաղնոցի, Ջոմիկի, Բանցի և Խաչլոի հողերը: Տես Ատրպետ, Ճիւաղը. Մէօր-Հիւսէյն փաշա-քիւրդը անսահման իշխան թրքահայերի ներկայ վիճակը, Թիֆլիս, 1911, էջ 3-4, 6-7, 11-12, 15:
30 Տես անդ:
31 Տես «Մշակ», Թիֆլիս, 1908 թ. դեկտեմբերի 2, թիւ 267:
32 «Մշակ», Թիֆլիս, 1912 թ. հունիսի 17, թիւ 130:
33 Թագուոցի «Քյոռ» Հյուսեին փաշան խոշոր ավատատեր էր: Նա իր տրամադրության տակ ուներ 300 գյուղ, որոնց բնակիչներից նա ստանում էր մեծ քանակությամբ հարկ, սակայն պետական գանձարան էր վճարում շատ չնչին գումար: 1908 թ. հեղաշրջումից հետո նա կանչվեց Վան, որտեղ նրա նկատմամբ մեղադրանք հարուցվեց 65 սպանությունների համար: Իշխանությունները նրան բանտարկեցին, բայց երեք ամիս անց նա ազատ արձակվեց: Ըստ Վ. Գորդլևսկու, նա հեռատես, խելոք և խորամանկ քաղաքագետ էր: Տե՛ս Академик Гордлевский В. А., У сюпхандагских курдов. (Из поездки на Кавказцкий фронт), Силуеты Турции, Избранные сочиненя, том III, История и культура, Москва, 1962, с.116 և с.455. 1910թ. գարնանը իշխանությունները նրան արտոնություն տվեցին Վան վերադառնալ, բայց արգելվեց քաղաքից դուրս գալ: Տես Ատրպետ, նշվ. աշխ., էջ 17-18: Առաջին աշխարհամարտի նախօրյակին նա ցանկանում էր հարաբերություններ հաստատել ռուսների հետ և տեղափոխվել Թիֆլիս: Բայց այդ նրան չհաջողվեց: Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունները սկսելուց հետո նա հաստատվեց Մակուի խանությունում: Տես Академик Гордлевский В. А., У сюпхандагских курдов. (Из поездки на Кавказцкий фронт),Силуеты Турции, Избранные сочиненя, том III, История и культура, с.455.
34 «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. օգոստոսի 2, թիւ 167:
35 Տես «Մշակ», Թիֆլիս, 1909 թ. օգոստոսի 2, թիւ 167:
36 Անդ.:
37 Տես Страницы из жизни семьи Орбели (письма, 1894-1936), Ереван, 1009, с. 214.
38 Տես «Գործ», Թիֆլիս, 1909 թ. մարտի 24, թիւ 62:
39 Տես «Կոհակ», Կ.Պոլիս, 1909 թ. սեպտեմբերի 12, թիւ 16, էջ 188, նաև «Հայրենիք», Կ.Պոլիս, 1909թ. օգոստոսի 11/24, թիւ 1448:
40 Տես «Կոհակ», Կ.Պոլիս, 1909 թ., նոյեմբերի 18, թիւ 23, էջ 256:
41 Տես «Կոհակ», օգոստոսի 15, թիւ 12, էջ 139:
42 Անդ.:

Մէկ – մէկ – մէկ

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Այս յօդուածիս տուն տուող առիթը բարեկամի մը հետեւեալ տողերն են, որոնց ձայնակցելու համար է, որ կը գրեմ. «Ես միշտ մերժած եմ «Արեւմտեան Հայաստան», «պատմական Հայաստան» եւ նման արտայայտութիւնները: Ինծի համար կայ ՄԷԿ Հայաստան: Յոռեգոյն պարագային կը գործածեմ «Հայաստանի արեւմտեան հատուած», «Հայաստանի արեւելեան հատուած» ու նման արտայայտութիւններ, որով միշտ կը շեշտուի Հայաստանի մէկութիւնը»:

Անձնական ել-նամակի մը մէջ պարագայաբար գրուած այս տողերը զիս կը մղեն վերադառնալու այս մէկութեան յանկերգին, եւ այդ՝ ոչ միայն մեր հայրենիքի անուանումի պարագային:

Երբ այս օրերուն այնքան կը հոլովուի, – պէտք է ըսէի կը ժխտուի, – մէկութեան գաղափարը եւ այնքան կը կրկնուի, դժբախտաբար, մեր ոչ-մէկութեան «իրողութիւնը», մանաւանդ դուրսէն ու ներսէն մեզի կ'ուզեն հաւատացնել, թէ ներկայ աշխարհին մէջ այնքան ալ անհրաժեշտ չէ հայրենիք ունենալը, հայրենիքի մը պատկանիլը, կ'ուզեմ առաջին հերթին շեշտել մեր մէկ հայրենիք ունենալու իսկութիւնը:

Հայրենիքը ոչ ծննդավայրդ է, ոչ ալ բնակավայրդ: Ասոնք կրնան ըլլալ Հայաստանի մէջ կամ Հայաստանէն դուրս, բայց Հայաստա՛նն է հայրենիքդ, որ երկիրն է հայրերուդ, նախահայրերուդ, որոնք այնտեղ են ապրեր դարերով, մեր պարագային՝ անյիշատակ ժամանակներէ ի վեր, այնտեղ են ստեղծագործեր, մշակոյթ ստեղծեր, երկիր կառուցեր, քաղաքակրթութիւն յառաջացուցեր: Թէ յետոյ ստիպուեր են տեղափոխուիլ, կամայ-ակամայ, գացեր-հաստատուեր են ուրիշ վայրերու մէջ, աւելի յաճախ՝ պարտադրուե՛ր են երթալու, բայց իրենց հայրենիքը միշտ Հայաստանն է հանդիսացեր՝ իբր պետութիւն ան գոյութիւն ունեցած ըլլայ կամ ոչ: Ուրեմն, ճի՛շտ է, շատ պայմանական հասկացութիւններ են «Արեւմտեան Հայաստան» կամ «Արեւելեան Հայաստան», «Թրքահայաստան» կամ «Ռուսահայաստան» (ինչ ամօթ) եւ նման անուանումները, որոնք, ի դէպ, երբեւէ պաշտօնապէս գոյութիւն չեն ունեցեր: Սահմանները կը փոխուին ժամանակ առ ժամանակ, հայրենիքդ չի՛ փոխուիր: Կը մնայ ան իր ամբողջական տարողութեամբ, Սեւ եւ Կասպից ծովերուն միջեւ՝ Հայկական բարձրաւանդակին վրայ՝ ըլլալով Մեծ Հայք, Փոքր Հայք, եւ քանի մը դար ալ՝ Փոքր Հայաստան (Կիլիկիա): Այդ ամբողջ տարածքն է մեր հայրենիքը, ներառելով ոչ միայն Հայաստանի Հանրապետութիւնը՝ իր ներկայ սեղմուած-կծկուած սահմաններով, այլեւ Ջաւախքը, թէ հայաթափուած Արցախն ու Նախիջեւանը, Մուշն ու Սասունը, Կարսն ու Արտահանը, Վանն ու Խարբերդը, Սիսն ու Հաճընը եւ մասամբ նորին. Այս տարածքները մաս կը կազմեն մեր հայրենիքին:

Գալով Հայաստանի Հանրապետութեան, ա՛ն եւս մէկ է, – վերնագրին երկրորդ մէկը: Հայաստանի Հանրապետութիւնը գոյութիւն առած է 1918 ՄԱՅԻՍ 28-ին, այդ է իր տարեդարձի օրը: Կորսնցուցած է իր անկախութիւնը 1920-ին՝ խորհրդայնալով, վերանկախացած է 1991 սեպտեմբեր 21-ին, սակայն չէ անուանուած Առաջին, Երկրորդ կամ Երրորդ Հանրապետութիւն: Պէտք չէ երբեք այդպէս կոչուի: Մէ՛կ է ան ու մէ՛կ պիտի մնայ պատմութեան մէջ՝ անկախ, կիսանկախ կամ ոչ անկախ: Այդ անուանումը կրնայ վերջ գտնել կամ օտար ուժերու գրաւումով եւ այդ տարածքին ուրիշ անուն մը յատկացուելով, կամ ալ... արքայական նոր հարստութեան մը հաստատումով:

Գանք հիմա վերնագրի երրորդ մէկին:

Այդ ազգն է, հայ ազգը, հայութի՛ւնը, որուն մէկութիւնն ալ կասկածի ենթարկել ուզողներ կան: Մէ՛կ է, որքան ալ նուիրագործուած ըլլան զայն բաժան-բաժան ընող որակաւորումները՝ «արեւմտահայութիւն», «արեւելահայութիւն», «սփիւռքահայութիւն», տակաւին՝ պարսկահայութիւն, գանատահայութիւն, լիբանահայութիւն եւ այլն, – փոխանակ՝ պարսկաբնակ, գանատաբնակ, լիբանանաբնակ հայութիւն ըսելու, – եւ մէ՛կ է, որքան ալ լեզուական, մշակութային, կենցաղային եւ այլ տարբերութիւններ գոյութիւն առած ըլլան ժամանակի ընթացքին՝ տարբեր ազդակներու ի հետեւանք: Մէ՛կ է՝ այդ ամենով հանդերձ:

Եւ մէկութեան իրողութիւնն է, որ այնքան անհասկնալի, ողբալի ու աններելի կը դարձնէ «ազգային» բառի ջնջումը մեր ազգային հաստատութիւններու անուան մէջէն, զանոնք փորձելով ներկայացնել իբր «պետական» կամ «հանրապետական»: Ազգայինը կը ներառէ երկուքն ալ, քիչ մը՛ն ալ աւելին: Այդ հաստատութիւնները համայն ազգին կը պատկանին, յաճախ ալ համայն ազգին միջոցներով կը պահպանուին: Մի՞թէ պէտք չէ մտածել նոյնիսկ Երեւանի պետական համալսարանն ալ վերանուանել Հայաստանի ազգայի՛ն համալսարան:

Այո՛, մէկ ենք ու մեր մէկութեան մէջն է մեր ուժը, որ թշնամին, – ներկայ շուկայական, դրամատիրական, սակաւապետական աշխարհը, – կը ջանայ ամեն գնով ջլատել: Չիյնանք ծուղակը: ■

ՀԱՅԵՐՈՒՍ ԹՈՒՔԸ

Ռափայել Պատկանյան

Դուն խելոք, հաշուով վաճառական ես,
Միլք, փող ու ապրանք, կ'ասեն՝ շատ ունես.–
Բայց թէ փողէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թրքել ենք քու ալ, փողիդ ալ վրրան։

Քաջ ես, լրսել ենք, ինքրդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունես փառաւոր.
Բայց թէ թրրէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թրքել ենք քու ալ, թրրիդ ալ վրրան։

Ի վերուստ քանքար քեզի տուած է,
Հեղինակ անունրդ աշխարհի փրռուած է.
Բայց թէ գրրչէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թրքել ենք քու ալ, գրրչիդ ալ վրրան։

Հեռատես մրտքով դուն զարդարեցար,
Հրզօր իշխանի սիրելին դարձար.
Բայց թէ մրտքէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թրքել ենք քու ալ, մրտքիդ ալ վրրան։

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանգագին բաներ.
Բայց թէ ձեռքէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թրքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վրրան։

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հրոչակ ու հանճար.
Բայց թէ լեզվէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թրքել ենք քու ալ, լեզվիդ ալ վրրան։

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովրդ լրցուած է մարդոց բերան.
Թէ ուսումէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թրքել ենք քու ալ, ուսմանդ ալ վրրան։

Կու տամ քեզ պատիւ, կ'ունենաս դու յարգ,
Ու կը դրնեմ քեզ ազնիւ մարդոց կարգ,
Երբ օրորանէդ մինչև գերեզման
Միակ ձրգտմունքրդ լինի ՀԱՅԱՍՏԱՆ։

1878

№ 1. ՇԱԲԱԹ, 19 ՓԵՏՐՎԱՐԻ 1921 թ.

ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ

Օրգան Հայաստանի Հանրապետական Կառավարության

ՐՈԼՇԵՎԻԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹ. ՏԱՊԱԼԻՍԾ

ՍՏԵՂԾՎԱԾ Է ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԷ

ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ ԱԶԱՏՎԱԾ

ԿԵՑՑԷ ԱԶԱՏ ՍՆԿԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՊԱԼԻՍԾ

—o—

Անակնկալորեն, հայ ժողովրդի վրայ ծանրաց բոլշևիկյան դահճի խլիսանությունը առաջացած է վիշտով։

Ամբողջ երեք և կես տարի, անընդհատ դիմելով մեր մի միլիոնանոց ժողովրդի տարեգրությունը, նրա տքնքջալ, հոգին և զգացմունքները վերջանալու վրայ էին, ընդհակառակ, հանգիստ և խաղաղությունը նորանորոգ գալիս էր, նա անդադար ուրախանում էր, նա անդադար հանգստանում էր։

Իր անկախության և ազատության համար մեծ գին տվող հայ ժողովուրդը, որի տիպը ամենազարմանալի է եղել աշխարհի համար, ինչպես ասում է հայ ժողովուրդը, ինչպես ասում է հայ ժողովուրդը, ինչպես ասում է հայ ժողովուրդը։

Այս շաղմուտքը, որ մեր ազատագրական պատերազմն ավելի լմնաց տվեց, դեռևս ոչնչացրեց ժողովրդի էր, վերջապես նրանը չանհանգստացրեց խանդավառությունը, երբվ ուզում է, անդամ կանգնի անշարժ դատարանին, երբեմն՝ նեռանի ելի փոքր լուսնի վերջանալ։ Ինչպես՝ նեռանի ելի փոքր լուսնի վերջանալ։

Բայց այս շաղմուտքը, ժողովրդական այս լուսն, ամբողջի պատքիմը ուղղված չէ Թուրքերի և ոչ էլ նրան գնելավորդ հարձակությունները։ Մենք ելել ենք բարձրանալ և տեղը ուստ մեծ ժողովրդի, և արդեն էլ հիշատակելիս մեծությունը, դարձան միայն որ հիշեցի մեր մեծ դրության փոփոխությունը բարդ մեր ժողովուրդը և նրա արքունիքը վերանայած անհանգիստները։

Ինչպես չարքն ասենք բանի մեր երեքը նեղ խուսան հայ քաղաքացիները։ Նրանց հանգիստորդան խոսքերի լեն մեր խաղաղության կառավարիչ երեքը և ժողովուրդը, մեզ չասելու ոչ թե դաշնակցականների, որոնց ասում ընդդիմությունն գալիս են հրաժարվեցին։ Բայց փոխանակ նրանց իրենց խոսքերը կատարելու, կանոնավոր ալան քաղաքի ենթարկելի մեր դժբախտ երեքը, մեր ցուցանը, ոչերեքի համար դանան հանձնի թե փոխարինելի դեմ Թորքերն և Թուրքերն, նրանց ընդունելի բանակը բերնե բերան, չասելին ուղղամտ ոչեն, չասելին ընդունելաց, չասելին ոչ-ոչերեն և հանդարտելին ասելիքին և այս բոլորը չանուն ընդունելի յուրաքանչյուրին։ Հնամանքը—անուսուցի, համբերությամբ հայ ժողովուրդը տուի կանգնեց և ամենանախքան պատրաստ ենթարկեց իրան հարձակումներին։

Բայց մենք կարդ չենք ուզում։ Մեր երեքը ոչերեքի և դարքանելի ոչինչ է, մենք ուզում ենք հանգստանալ՝ մեր ամբարտավանները ունենալու, ոչ դեռ ժողովրդի հաշ հարելու և ընդհանրապես, ամենադարձի ոչխատանքի անելու։

Այդպես էլ կարդացած է հանդիսանի փակարանում կանգնած ոչ-ոչ կառավարչի երեքը ոչինչ կառավարությունն կարդ։

Իրարանցություն գարդացավ, որ տեղում է իր հարձակումը, նրա անվերջությունը դարձավ է քիչ ու քիչ ավելի ոչ-ոչ կանոնավորվելու։ Ամենանոր ոչ-ոչ նրա ոչ-ոչ հարձակումներն անքիչ։

Վերջ ի վերջ ոչինչ։

Մենք ոչ դեռ է լիքի ոչ-ոչ, ամենաքիչն և մշտապես պատրաստ ոչ-ոչերի ոչ-ոչ ոչ-ոչ հարձակումը։ Դատարանները ոչ-ոչ ոչ-ոչ, և ոչ-ոչանքը հարձակումը դարձավ դարձանելիքը դեռ և իրենց նրանց հանգիստ և անձնել ոչ-ոչանությունը։

Այս է ամենամեծ ոչ-ոչ դարձանությունը, որին դեռ է հանդիպել ոչ-ոչ ոչ-ոչ։

ՀԱՄԱԶԱՍՊԸ ՍՊԱՆԻԱՆ

Այս գիրքը, չատերի հետ, դաշնակցական ընկեր

ՀԵՍԵՐԱՋԱՊ ՍՈՒՍԱՆՋԵԱՆԸ

անգիերեն սպանված է։

Ցարկեի լենինյան և այլ սպանվածների մասին անհրաժեշտ տեղեկությունները կգտնեք հետագայում։

ԱԶԴ

Ուրբաթանչիր բոլոր ազգի դարձանը է հանդիսանալ և իր գործով դարձել։

Բոլոր վանականները, խանութպանները, արհեստավորները, բանվորները տասնց ժամանակ կորցնելու, ընդարձակելու են իրենց արհեստանոցները։

Անասունները և անասունները կդարձնեն ամենանախքան կերպով։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԻՑ

№ 1

Քաղաքացիներ.

Բոլշևիկյան ներխուժումը նախատեսված վերացած է։

Մինչև կառավարությունն կազմվելը ժամանակ ունենալ ինքնությունը դանում է

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՔԱՐՏՈՒՂ. Ամեն քաղաքացի պետք է դադարեցնի կրակը։ Ամեն դարձանելի կարգը և դադարեցնի կարգը։ Ամեն դարձանելի կարգը։

ԴՐՕՇԱԿ

1921 թվականի փետրվարի 18-ին ժողովրդական հեղափոխությունը Երևանում դադարեցրեց բոլշևիկյան Հեղկոմի դրածո բռնապետությունը